102.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Առաջին անգամ ամուսնացող զույգերին տրամադրել միանվագ նպաստ 300 000 դրամ</p>	<p>2011թ.-ի հանրապետությունում առաջին անգամ ամուսնացածների թիվը կազմել է շուրջ 19 հազար ամուսնություն: Յուրաքանչյուր գրանցված ամուսնական զույգին 300 հազար դրամ տրամադրելու դեպքում բուն տրանսֆերտի համար անհրաժեշտ գումարը (առանց ուղեկցման ծախսերի) կկազմի 5,7 մլրդ դրամ:</p> <p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
103.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Նախատեսել գումարներ կուսակցություններին տրվող գումարի չափը ավելացնելու համար:</p>	<p>«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված է, որ պետական բյուջեից միջոցներ հատկացվում են այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 3 տոկոսը: Օրենքով սահմանված է նաև պետական բյուջեում նախատեսվելիք պետական այդ աջակցության ընդհանուր գումարի նվազագույն չափի որոշման բանաձևը: Վերոհիշյալ օրենքի այդ պահանջը կատարելու նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կուսակցություններին պետական աջակցության նպատակով նախատեսվել է շուրջ 75.7 մլն դրամ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
104.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Երևանի Վ. Տերյանի թիվ 60 միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի և հանդերձարանի վերանորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
105.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Երևանի թիվ 186 դպրոցի նորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
106.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Երևանի թիվ 91 դպրոցի նորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
107.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Երևանի թիվ 6 արհեստագործական պետական ուսումնարանի նորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
108.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Շիրակի մարզի Կառնուտ համայնքի դպրոցի վերանորոգման համար տրամադրել 10մլն դրամ:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
109.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Շիրակի մարզի Արափի համայնքում դպրոց կառուցելու համար: Մինչ այս, որպես դպրոց գործել է մանկապարտեզում նոր դպրոց կամ մակապարտեզ կառուցելու նպատակով 2013 թ.-ին հատկացնել 80.մլն դրամ նախագծման և շինարարական աշխատանքներ սկսելու համար:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
110.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Գյումրի-Ոսկեհասկ ճանապարհը Արափի համայնքին միացնող ճանապարհատվածի կապիտալ վերանորոգման համար հատկացնել 40 մլն դրամ:	Նշված ճանապարհատվածի վերականգնումը կնե-րառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյու-նավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
111.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Նկատի ունենալով, որ Արափի համայնքի մի մասը գազաֆիկացված է իսկ մյուսը ոչ, և համայնքի ամբողջական գազաֆիկացումը ներառված է ԻՖԱԴ-ի ծրագրում, ուստի խնդրում ենք անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նշված աշխատանքները իրականացնելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել: Նշված աշխատանքները ներառված չեն Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող 2013 թվականի ծրագրերում:
112.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Մշակույթի տան վերանորոգումը շարունակելու համար հատկացնել 15.մլն դրամ:	Նշված չէ թե, որ մշակույթի տան վերանորոգման շարունակության համար է ներկայացվել առաջարկությունը:
113.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Վարդենիկի սպորտ դպրոցի վերանորոգում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
114.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Լիճքի հիմնական դպրոցի վերանորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
115.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Մեծ Մաստրիկի միջնակարգ դպրոցի վերանորոգում,	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
116.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Վարդենիսի տարածաշրջանային ավագ դպրոցի ջեռուցում, տանիքի նորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
117.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքի մշակույթի տան վերանորոգում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
118.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական	Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն		առաջնահերթություններից:
119.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքի գազաֆիկացման գործընթացի շարունակականություն, որի 80%-ը ԻՖԱԴԻ և կառավարության այլ ծրագրերով արդեն իրականացվել են,	Նշված համայնքում գազաֆիկացման աշխատանքներն իրականացվել են «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի շրջանակներում և աշխատանքներն ավարտված են: Լրացուցիչ աշխատանքների վերաբերյալ առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
120.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի Կարին թաղամասի գազաֆիկացում	Նշված աշխատանքներն ընդգրկված են «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրում:
121.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Չինչին գյուղի ճանապարհի նորոգում	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:
122.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Արթիկի շրջանի Մեղրաշեն համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
123.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Արթիկի շրջանի Մեղրաշեն համայնքի ճանապարհի վերանորոգում	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:
124.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Ներդնել ուսանողական վարկերի համակարգ՝ ներառելով գումարներ պետական բյուջեում	ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը» ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարելավել ուսանողների ֆինանսական աջակցության գործող համակարգը: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության նախարարությունում մշակման և քննարկման փուլում են գտնվում ուսումնական վարկերի տրամադրման մեխանիզմների և մեթոդաբանության աշխատանքները:
125.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Ազատականացնել նոտարական համակարգը, ապահովել ԵՄ չափանիշներին համապատասխան մոտեցում՝ արդյունքում ավելացնելով բյուջետային մուտքերը	Կառավարության վերաբերմունքը «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցության կողմից ներկայացված դիրքորոշմանը դրական է: ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում է «Նոտարիատի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ, որով մի կողմից ընդլայնվում է նոտարի իրավասությունների շրջանակը, մյուս կողմից խստացվում է նոտարի պատասխանատվությունը, այն առումով, որ նոտարն այսուհետ պատասխանատվություն է կրելու ոչ միայն իր դիտավորյալ գործողություններից առաջացած վնասի, այլ նաև անզգուշությամբ կատարված նոտարական գործողություններից առաջացած վնասի համար: Միևնույն ժամանակ, նոտարիատի մասին նոր օրենքը ամբողջությամբ համապատասխանելու է լատինական նոտարիատի համակարգի չափանիշներին, որոնք բացառում են նոտարական համակարգի ամբողջական ազատականացումը, և կապված նոտարի կողմից կատարվող գործողությունների կարևորությունից, նախատեսում են դրանց նկատմամբ պետական վերահսկողության առկայությունը: Միաժամանակ նոտարիատի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>օրենսդրության փոփոխության արդյունքումը նոտարական գործողությունների շրջանակի ընդլայնմամբ կավելանան նաև նոտարների եկամուտները, ինչից էլ կավելանան նաև նոտարի կողմից բյուջե մուտքագրվող հարկերը:</p>
126.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Ազատականացնել կոմունալ ծառայությունների համակարգը Երևանում և մարզերում՝ ներդնելով մրցութային համակարգ, նվազեցնելով բյուջետային ծախսերը:</p>	<p>Առաջարկությունն ընդհանուր առմամբ ընդունելի է: Սակայն, եթե հարցը վերաբերում է կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններին (ջրամատակարարում գազամատակարարում, էլեկտրաէներգետիկա, կապ և այլն), ապա հարկ է նշել, որ ծառայությունների մատակարարումն իրականացվում է առանձին ընկերությունների կողմից, որոնց սակագները սահմանվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Իսկ առանձին դեպքերում (մասնավորապես ջրային ոլորտում) ընկերությունների կառավարման կամ համակարգերի վարձակալության իրավունքները մրցութային կարգով տրամադրվել են միջազգային կազմակերպություններին:</p>
127.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Վերացնել հաշմանդամության կարգերի համար գանձվող գումարները կամ դրանք կտրուկ նվազեցնել՝ երկարացնելով կարգերի հստակեցման ժամկետները:</p>	<p>Համաձայն գործող օրենսդրության, անձին բժշկասոցիալական փորձաքննությունից հետո հաշմանդամ են ճանաչում բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովները՝ անվճար: Բժշկասոցիալական փորձաքննության /ԲՍՓ/ ոլորտում հստակություն մտցնելու և թափանցիկությունն ապահովելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով ԲՍՓ հանձնաժողովների սպասարկման տարածքներում կատարվել են հանձնաժողովների տեղեփոխություններ /ոտացիա/, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես՝ ա/ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին՝ փորձաքննվող անձի առողջական վիճակը ներկայացնելու նպատակով կմասնակցի ընտանեկան բժշկները կամ բուժող բժիշկը, ինչպես նաև փոր-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Ճաքննվող անձի համաձայնության դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչը կնվազեցնի հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, ք/ մշակվել է ԲՍՓ հանձնաժողովների ընդունած որոշումների վերանայման նոր մեխանիզմ՝ բողոքարկման բաժնի կողմից, նախարարի հանձնարարությամբ, ինչը կստեղծի ՀՀ ԱՍՀՆ կողմից վերահսկելիությունն ապահովելու մեխանիզմ և այլն:</p>
128.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Քաղաքաշինության ոլորտում ծախսերը կատարել կիսատ մնացած ծրագրերը ավարտելու համար:</p>	<p>Առաջարկությունը սկզբունքային առումով ամբողջովին ընդունելի է: Հայտնում ենք, որ քաղաքաշինության ոլորտում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով. ա) կրթական հաստատությունների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված 6.4 մլրդ դրամի շրջանակներում հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ կիրականացվեն թվով 89 կրթական օբյեկտներում: Նշված 89 օբյեկտներից 87 օբյեկտի գծով կշարունակվեն նախորդող տարիներին սկսած աշխատանքները, որից 31-ի գծով աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին: Իսկ նոր օբյեկտների գծով նախատեսվում է 2 նոր դպրոցի՝ ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի և ՀՀ Լոռու մարզի գ. Մարցի դպրոցների կառուցում՝ նշված համայնքների դպրոցների շենքերը վթարային լինելու պատճառով: բ) մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված 341.0 մլն դրամի շրջանակներում հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ կիրականացվեն նախորդող տարիներին սկսած թվով 4 մարզական օբյեկտներում, որից 1 օբյեկտի՝ «Տորք Անգեղ» մարզական միության շենքի հիմնանորոգման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականին: գ) բնակարանային շինարարության համար նախա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			տեսված 482.6 մլն դրամի շրջանակներում նախատեսվում է ավարտին հասցնել ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 կիսակառույց շենքերի շինարարական աշխատանքները, որոնք սկսվել են 2009 թվականից:
129.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Ուժեղացնել բնապահպանության ոլորտում դրամաշնորհային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողությունը՝ դրանում ներառելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ	Կառավարությունը այդ ուղղությամբ հաջորդ բյուջետային տարում կիրականացնի առավել արդյունավետ միջոցառումներ:
130.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Յուրաքանչյուր եռամսյակ ԱԺ խմբակցություններին ներկայացնել տեղեկանք բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ	ՀՀ կառավարությունը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի համաձայն, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն՝ նշված օրենքով սահմանված բյուջետային դասակարգման և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի կառուցվածքին համապատասխան: Կառավարությունը այդ ուղղությամբ հաջորդ բյուջետային տարում կիրականացնի առավել արդյունավետ միջոցառումներ:
131.	ՀՀ Ազգային ժողովի «Օրինաց Երկիր» պատգամավորական խմբակցություն	Ուժեղացնել հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ բյուջետային հատկացումները վերահսկելու համար	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ բյուջետային հատկացումների օգտագործման վերահսկողության հարցը կանոնակարգված է օրենքով: Մասնավորապես 1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն պետությունը համայնքների, միջհամայնքային միավորումների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Ազգային ժողովի և Կառավարության միջոցով: ՀՀ Վերահսկիչ պալատը, ոչ ավելի, քան տարին մեկ անգամ ստուգում է պետական բյուջեից համայնքներին, միջհամայնքային միավորումների տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը: Ստուգումների անցկացումը համայնքներում արգելվում է ընտրություններից մեկ ամիս առաջ և մինչև դրանց պաշտոնական ավարտը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>2.«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազորած մարմնի միջոցով: Համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձինք համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:</p> <p>Կառավարությունը այդ ուղղությամբ հաջորդ բյուջետային տարում կիրականացնի առավել արդյունավետ միջոցառումներ:</p>
132.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում հոդվածով սահմանված 634 458.9 հազար դրամը դարձնել 1100 000 հազար դրամ	<p>ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծով գյուղատնտեսական ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման համար 634.5 մլն դրամի նախատեսումը պայմանավորված է 2011թ. տրամադրված 15.0 մլրդ դրամ վարկային միջոցների տոկոսադրույքների 2013թ. հասանելիք սուբսիդավորման գումարի (71.7 մլն դրամ) և 2012թ. նախատեսված 15 մլրդ դրամ վարկային միջոցների տոկոսադրույքների 2013թ. հասանելիք սուբսիդավորման գումարի (562.7 մլն դրամ) հանրագումարով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>(71.7+562.7=634.4)</p> <p>Քանի, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի շրջանակներում նոր մեխանիզմ չի առաջարկվում, ուստի գումարի ավելացման խնդիրը կարող է քննարկվել 2013թ. ընթացքում՝ վարկավորմանն ուղղված լրացուցիչ միջոցների առկայության դեպքում:</p>
133.	ՀՀ Ազգային Ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծրագրի համար նախատեսված հատկացվող գումարը՝ 150.0 մլն դրամը, ավելացնել՝ դարձնելով 650.0 մլն դրամ, որից 500.0 մլն ՀՀ դրամը՝ ՓՄՁ սուբյեկտների լրացուցիչ վարկավորման նպատակներով	<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի իրականացման արդյունքում 2004-2009թթ. ձևավորվել է 778.8 մլն դրամի դրամագլուխ, այդ թվում՝ 747.3 մլն դրամը՝ ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարներից և 31.5 մլն դրամը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության զարգացման ծրագրով հատկացված գումարից: 2009 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հիմնադրեց դուստր ձեռնարկություն՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ, որի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու համար դրամագլխից հատկացվեց 150 մլն դրամ (համաձայն ՀՀ կառավարության 2009 մայիսի 21-ի N594 որոշման): Առ 01.07.2012թ. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի իրականացման արդյունքում ձևավորված դրամագլուխը կազմում է 628.8 մլն դրամ, որից ազատ դրամական միջոցները կազմում են շուրջ <u>515 մլն դրամ, որոնց հաշվին էլ նախատեսվում է իրականացնել 2013 թվականին ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը:</u></p> <p>Հարկ է նշել, որ Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ֆինանսական միջոցների ներգրավումը նույնպես կուղղվի Հայաստանում կին գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրմանը:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Միաժամանակ ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորումն և սեփական կապիտալի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված 6,400.0 մլն դրամի հաշվին:</p>
134.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի համար ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով սահմանված հատկացվող 300.0 մլն դրամը ավելացնել մինչև 600.0 մլն դրամ	<p>Քանի որ նշված ծրագիրը ՀՀ կառավարությունն առաջին անգամ է իրականացնում՝ նախատեսելով պետական միջոցների հատկացում արդյունաբերության ոլորտի և վերջինիս արտահանելի հատվածի զարգացմանը, ուստի պիլոտային ծրագրի իրականացումից և արդյունքների գնահատումից հետո միայն հնարավոր կլինի որոշել հաջորդ տարվա համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:</p>
135.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	«Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» հոդվածով սահմանված 50.0 մլն դրամը դարձնել 300.0 մլն դրամ	<p>Ներկայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է արտահանմանն ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի (ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ ընտրված 11 ոլորտներ) կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը, որը սահմանում է սուբսիդավորման չափանիշները, ինչպես նաև սուբսիդավորման վարկերի տրամադրման մեխանիզմները: Վերոնշյալ ծրագրի իրականացումից և արդյունքների գնահատումից հետո հնարավոր կլինի որոշել ծրագրի հետագա նպատակահարմարությունը և ֆինանսավորման ծավալը:</p>
136.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Գիտությանն ուղղված ծախսերը ավելացնել՝ հասցնելով 56 200.0 մլն դրամի, ինչը կազմում է ՀՆԱ-ի շուրջ 1.25%-ը: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում աշխատող գիտաշխատողների աշխատավարձերը բարձրացնել յուրաքանչյուրի հաշվով առնվազն 40.0 հազ. դրամով: Միաժամանակ ավելացնել թեմատիկ ֆինանսավորմամբ գործող դրամաշնորհների թիվը 60-ով՝ սահմանելով յուրաքանչյուր գիտաշխատողի աշխատավարձի ֆինանսավորման շրջանակներում աշխատող գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման հարցերը լուծում կստանան ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստում հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարության ծրագրի շրջանակներում: Ինչ վերաբերում է թեմատիկ ֆինանսավորմանը, ապա ՀՀ 2013թ. պետական բյուջեի	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		տավարձը ՀՀ-ում գործող միջին ամսական աշխատավարձի չափով	Նախագծով նախատեսվում է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում հատկացնել շուրջ 250 դրամաշնորհ՝ 2012թ. 190-ի փոխարեն:
137.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) վերանորոգման ծախսերի համար նախատեսել 100.0 մլն դրամ:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
138.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	2013 թվականի բյուջեի նախագծում ավելացնել համապատասխան հոդված՝ 1988 թվականին Ադրբեջանից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթած մարդկանց բնակարանային հարցը լուծելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
139.	ՀՀ Ազգային ժողովի «ԲՀԿ» պատգամավորական խմբակցություն	2013 թվականի բյուջեի նախագծում ավելացնել համապատասխան հոդված՝ նախատեսելով ֆինանսական միջոցներ ՀՀ մշակույթի նախարարության «Կամերային երաժշտության կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում գործող «Երևանի պետական կամերային երգչախումբ» կոլեկտիվի անդամների աշխատավարձերի դրույքաչափերը «Կամերային երաժշտության կենտրոն» ՊՈԱԿ-ի համանման հաստիքներով աշխատող աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերին համապատասխանեցնելու նպատակով:	Բարձրացված հարցը կքննարկվի ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում:
140.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	<p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1031,6 մլրդ դրամի ընդհանուր եկամուտներ: Առաջարկում ենք նախատեսված եկամուտները ավելացնել 50,0 մլրդ դրամով և սահմանել 1081,6 մլրդ դրամ:</p> <p>Համաձայն վերջին տարիների պետական վիճակագրական տվյալների՝ ՀՆԱ-ի կառուցվածքում աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կազմում են 37-39%: Այսինքն, 2013 թվականին հանրապետությունում աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կկազմեն շուրջ 1680,0 մլրդ դրամ 4537,3 * 37%: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն դրույքաչափի կիրառման արդյունքում՝ 2013 թվականին միայն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների եկամտային հարկի գծով հավաքագրվե-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>ՀՆԱ-ի կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կազմում ներառված առանձին բաղադրիչներ եկամտային հարկով հարկման ենթակա չեն՝ փոխհատուցման վճարներ, կարգավորման նպատակով աշխատանքի հավելումներ (գների փոփոխման հետևանքով բնակվարձի, տրանսպորտային ծախսեր և այլն), գործատուի կողմից հատկացումներ սոցիալական ապահովության ծրագրերին, տնտեսության ոչ ֆորմալ հատվածում ձևավորված աշխատավարձը, օրենքով նախատեսված դեպքերում հարկման բազայում չներառվող աշխատավարձը և այլն: Նկատենք, որ այս ցուցանիշների մասով վիճակագրություն չի վարվում և</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>լիք եկամուտների գումարը կարող է կազմել շուրջ 410,0 մլրդ դրամ 1680,0 * 24,4%:</p> <p>Մինչդեռ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով եկամտային հարկի գծով նախատեսվել է 283,9 մլրդ դրամ ներառյալ՝ նվազեցվող եկամուտների ցանկից զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, փորկարարական ծառայողների ծառայության հետ կապված եկամուտների հանումը՝ 31 մլրդ դրամ և բոլոր հարկատեսակների գծով վարչարարության բարելավման արդյունքում 27,0 մլրդ դրամի դրական ազդեցությունը:</p> <p>Նկատի ունենալով հարկվող եկամուտի որոշ նվազեցումները և վարչարարության առկա մակարդակը, հաշվի չառնելով անգամ ստվերային տնտեսության այլ դրսևորումները՝ առաջարկվում է եկամուտներն ավելացնել 50,0 մլրդ դրամով միայն աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից գանձվող եկամտային հարկի 126,1 մլրդ դրամ պոտենցիալի դիմաց:</p>	<p>հետևաբար գնահատել հնարավոր չէ:</p> <p>Սա նշանակում է, որ ՀՆԱ-ի այս բաղադրիչն ամբողջ ծավալով չի կարող ընդունվել որպես եկամտային հարկի հարկման բազա և բերված 410 մլրդ դրամ գնահատականը իրատեսական չէ:</p> <p>Ըստ «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի եկամտային մասի, եկամտային հարկի գծով 2013 թվականին ակնկալվող 225.9 մլրդ դրամ գնահատականի (առանց նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողների և վարչարարության) հիմքում, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ վճարողների կողմից ներկայացված հաշվետվությունների 2007-2011թթ փաստացի տվյալներն են՝ վարձու աշխատողների թվաքանակի, տարեկան ԱՎՌԻՄ-ի (աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների) վերաբերյալ: Այս տվյալները ՀՆԱ-ի կառուցվածքում ներառված համապատասխան ցուցանիշից տարբերվում են ինչպես վերը նշված փոխհատուցման վճարներով և աշխատանքի հավելումներով, այնպես էլ զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողների տեղեկություններով, քանի որ վերջիններս օրենսդրությամբ սահմանված կարգով 2007-2011թթ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ նաև եկամտահարկ վճարող չեն հանդիսացել, սակայն համապատասխան ցուցանիշները ներառված են ՀՆԱ-ի կառուցվածքում:</p> <p>Պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման որոշակի ռեզերվի առկայությունը ընդունելի է, ինչի մասին վկայում է ի հաշիվ հարկային վարչարարական միջոցառումների լրացուցիչ մոուտքերի նախատեսումը:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
141.	ՀՀ Ազգային Ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Նվազագույն աշխատավարձի բարձրացում – 16,0 մլրդ դրամ,	<p>Նվազագույն աշխատավարձի բարձրացման քաղաքականության մոտեցումները հետևյալն են.</p> <p>ա) Բավարար ֆինասական միջոցների առկայություն, որը կտա նաև դեպի վերև աշխատավարձերի համամասնական բարձրացման հնարավորություն (աշխատավարձերի ընդհանուր սանդղակում բարձրացնել միայն ներքևի հատվածների աշխատավարձերը չի կարելի),</p> <p>բ) Արտադրողականության 8-10 տոկոս տնտեսության պայմաններում 70-80 տոկոսով աշխատավարձերի բարձրացումը կհամակցվի անցանկալի գնաճով,</p> <p>գ) Անմիջապես նվազագույն աշխատավարձերի թռիչքային բարձրացումը բացասական կանդիդատնա աշխատատեղերի ավելացման խնդրին:</p> <p>1. Կարծում ենք, որ առաջարկվող նվազագույն ամսական աշխատավարձի ավելացման պայմաններում գործատուները կամ՝</p> <p>ա) կբարձրացնեն մինչև նախագծի ուժի մեջ մտնելը առաջարկվող փոփոխության հիման վրա գնահատված նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ ստացող վարձու աշխատողների աշխատավարձը՝ դրանով իսկ կրելով աշխատավարձի բարձրացման հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերի բեռը (այդ թվում՝ 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող եկամտային հարկի մասով),</p> <p>բ) անփոփոխ կթողնեն գործող աշխատավարձերի չափերը՝ դրանով իսկ իրենց վրա վերցնելով նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ վճարելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն կրելու ռիսկերը,</p> <p>գ) չեն գրանցի վարձու աշխատողներին՝ խուսափելով ինչպես աշխատավարձի բարձրացման հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերից, այնպես էլ նվազագույն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>աշխատավարձից ցածր աշխատավարձ վճարելու համար «ԵՊՈՒՄ» օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունից:</p> <p>«ԵՊՈՒՄ» գործատուները, որոնք ցածր որակավորում ունեցող անձանց կողմից իրականացվող, մասնագիտական գիտելիքներ ու պատրաստվածություն չպահանջող աշխատանքների համար ներկայումս առաջարկվող փոփոխության հիման վրա գնահատված նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ են վճարում իրենց վարձու աշխատողներին, առաջարկվող փոփոխության իրականացման պարագայում ավելի շատ հակված կլինեն նշյալ վարձու աշխատողներին օրենքով սահմանված կարգով չգրանցելու:</p> <p>2. Առաջարկվող մոտեցման հիման վրա իրականացված գնահատականների համաձայն, որոնց համար հիմք են հանդիսացել «Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2012 թվականի առաջին եռամսյակում հրապարակված, ինչպես նաև դրանց հիման վրա փորձագիտական եղանակով գնահատված 2013-2014 թվականների ցուցանիշները, առաջարկվող փոփոխության արդյունքում 2013 թվականին նվազագույն աշխատավարձի աճի նման բարձր տեմպերը կգերազանցեն նույնիսկ տնտեսության հնարավոր առավելագույն արտադրողականության աճի և գնաճի գումարային տեմպերին (8-10%), որի պարագայում կարող է կտրուկ բարձրանալ գործազրկության մակարդակը՝ հատկապես արտադրողականության ցածր մակարդակ ունեցող տնտեսության ճյուղերում կամ կբարձրանա աշխատողների չգրանցման դեպքերը: Բացի դրանից, արտադրողականության համեմատ աշխատավարձերի ավելի բարձր տեմպերով աճը կհանգեցնի գնաճի ավելացման:</p> <p>Նվազագույն աշխատավարձերի առաջարկվող տեմպերով բարձրացման ազդեցությունը կփոխանցվի գների վրա ինչպես համախառն պահանջարկի աճի և միավոր</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>աշխատուժի ծախսերի ավելացման արդյունքում, ինչը կպայմանավորվի հարկաբյուջետային խիստ ընդլայնող ազդակով (բյուջեի ծախսերի ավելացման վերոնշյալ գնահատականների պայմաններում), այնպես էլ դրամի փոխարժեքի արժեզրկման միջոցով (դրամի քանակը տնտեսությունում կավելանա):</p> <p>Գնահատվել է, որ այս երկու գործոնների ընդհանուր ազդեցությամբ կարող է առաջանալ տարեկան 3-4 % լրացուցիչ գնաճ, որը շարունակական բնույթ կկրի նաև 2014-2015 թվականների ընթացքում: Բնականաբար, դրամավարկային գործիքների միջոցով նման բարձր և երկարաժամկետ բնույթի գնաճի չեզոքացումը հնարավոր չի լինի, իսկ եթե նույնիսկ հնարավոր լինի, ապա դա կարող է իրականացվել միայն տնտեսության կրճատման հաշվին:</p> <p>Վերոնշյալ պատճառներով, զարգացած երկրներում հիմնական միտումն այն է, որ աշխատավարձերի սահմանման ժամանակ կոլեկտիվ համաձայնագրերի դերը գնալով մեծանում է, իսկ այս ձևաչափով խնդրի քննարկման հիմնական նպատակներից մեկը աշխատավարձերի սահմանման այնպիսի մեխանիզմների ստեղծումն է, որն ապահովի հավասարակշռություն աշխատավարձերի փոփոխության սոցիալական և տնտեսական ազդեցությունների միջև:</p> <p>3. Առաջարկի ընդունման դեպքում, առաջին կետում նշված պատճառներով պայմանավորված, հիմնական ազդեցությունը կփոխանցվի պետական հատվածի աշխատավարձերի վրա՝ էապես ավելացնելով բյուջեի ծախսերը: Բյուջետային բնագավառում նախագծի կարգավորման ազդեցության շրջանակներում հնարավոր է նկատի ունենալ ծախսերի գնահատման երկու տարբերակ՝</p> <p>1) երբ նվազագույն աշխատավարձի և բազային աշխատավարձի բարձրացման հետ միաժամանակ բարձրացվում են ՀՀ պետական բյուջեից տրվող բոլոր աշխատա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>վարձերը և նվազագույն աշխատավարձի հետ կապված այլ ծախսերը: Այս պարագայում մոտավոր գնահատմամբ 2013 թվականին լրացուցիչ կպահանջվի 76.9 մլրդ դրամ,</p> <p>2) երբ նվազագույն աշխատավարձի և բազային աշխատավարձի բարձրացման հետ միաժամանակ բարձրացվում է միայն ՀՀ պետական բյուջեից տրվող մինչև առաջարկվող փոփոխության հիման վրա գնահատված նվազագույն աշխատավարձից ցածր ամսական աշխատավարձ ստացող աշխատողների աշխատավարձերը: Այս պարագայում լրացուցիչ հատկացման պահանջի չափը 2013 թվականին կկազմի 16.8 մլրդ դրամ:</p> <p>4. Նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն նաև համայնքների բյուջեների վրա, մասնավորապես՝ ավելացնելով համայնքների բյուջեներից կատարվող ծախսերը: Որպես հետևանք չի կարելի բացառել ինչպես դրանով պայմանավորված համայնքների բյուջեներում ֆինանսական ճեղքվածքի առաջացումը, այնպես էլ դրանից խուսափելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա կազմակերպությունների աշխատողների թվի անհարկի կրճատումները:</p>
142.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացման աջակցություն – 2 մլրդ դրամ,	Քանի որ նշված ծրագիրը կառավարությունն առաջին անգամ է իրականացնում նախատեսելով պետական միջոցների հատկացում արդյունաբերության ոլորտի և վերջինիս արտահանելի հատվածի զարգացմանը, ուստի ծրագրի իրականացումից և արդյունքների գնահատումից հետո միայն հնարավոր կլինի որոշել հաջորդ տարվա համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:
143.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ տարաբնակեցման հայեցակարգի մշակման և գործադրման հարցում աջակցություն ցուցաբերելու համար – 10,0 մլրդ դրամ,	Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ-ին միջպետական վարկի միջոցների տրամադրումն ուղղակիորեն չի փոխկապակցված առանձին ուղղություններով ծախսերի կատարման պայմանի հետ և նշված վարկի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			միջոցների օգտագործման ուղղությունների որոշման իրավասությունը պատկանում է բացառապես ԼՂՀ իշխանություններին: Ուստի, ԼՂՀ տարաբնակեցման հայեցակարգի մշակման և գործադրման համար անհրաժեշտ միջոցների չափը ԼՂՀ իշխանությունները ըստ անհրաժեշտության կորոշեն այդ վարկի գումարի շրջանակներում՝ ինքնուրույն: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ԼՂՀ-ին հատկացվող միջպետական վարկի գծով նախատեսված գումարը 2012 թվականի մակարդակի համեմատությամբ ավելացվել է շուրջ 3.35 մլրդ դրամով:
144.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Գյուղացիական տնտեսություններին վարելահողերի նպատակային նշանակության օգտագործման, պարարտանյութերի, վառելանյութի և սերմացուի ձեռք բերման համար պետական աջակցության համար - 4,0 մլրդ դրամ	Ցորենի սերմացուի ձեռքբերման և գյուղացիական տնտեսություններին տրամադրման նպատակով «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագրով նախատեսվել է 550 մլն դրամ: Ինչ վերաբերում է պետական աջակցության այլ ձևերին (պարարտանյութերի, վառելանյութի և այլ սերմացուների համար), ապա ինչպես ցույց է տալիս վերջին տարիների փորձը, կոնկրետ գյուղատնտեսական սեզոնի օրինաչափություններից ելնելով կառավարությունը կարող է քննարկել դրանք ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ֆինանսավորելու հարցը:
145.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Գիտության թեմատիկ ծրագրերի թվի 100-ով ավելացնելու և միջին աշխատավարձը 120,000 դրամ սահմանելու նպատակով – 1,3 մլրդ դրամ:	ՀՀ 2013թ.պետական բյուջեի նախագծով նախատեսվում է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում հատկացնել շուրջ 250 դրամաշնորհ՝ 2012թ. 190-ի փոխարեն: Ինչ վերաբերում է ծրագրում գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացմանը, ապա այն լուծում կստանա ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստում հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարության ծրագրի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
146.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Ոչ մետաղական հանքանյութերի մշակման ոլորտի ինովացիոն ծրագրերի մշակում, արտադրական և իրացման ցանցերի ստեղծում – 0,5 մլրդ դրամ:	Համաձայն 2012թ. օգոստոսի 9-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը եվ գերակա խնդիրները հաստատելու մասին» №1055-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը մշակել և ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգ» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Վերոնշյալ հայեցակարգը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո միայն կմշակվի հայեցակարգից բխող ոչ մետաղական հանքանյութերի մշակման ոլորտի ինովացիոն ծրագրեր:
147.	ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն	Սահմանամերձ տարածաշրջաններում ենթակառուցվածքների զարգացում – 8 մլրդ դրամ:	Սահմանամերձ տարածաշրջանների ենթակառուցվածքների զարգացման խնդիրը միշտ գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և այս ուղղությամբ իրականացվում են զգալի աշխատանքներ: Մասնավորապես. ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով սահմանամերձ բնակավայրերում նախատեսված է իրականացնել 1.9 մլրդ դրամի թվով 15 ծրագիր, իսկ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է 1.5 մլրդ դրամի թվով 9 ծրագիր: Միաժամանակ ՀՀ մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման շրջանակներում ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի N 711-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տրամադրված միջոցներով սահմանամերձ համայնքներում նախատեսվում է իրականացնել շուրջ 1.0 մլրդ դրամի միջոցառումներ և ևս 1.0 մլրդ դրամի միջոցառումներ են նախատեսվում իրականացնել ՀՀ կառավարության 04.10.2012թ-ի N 1392-Ն որոշմամբ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Նախատեսված հատկացումների հաշվին: Բացի այդ, ճանապարհաշինության վարկային ծրագրերի շրջանակներում սահմանամերձ տարածաշրջաններում 2012թ-ին իրականացվել են 3.4 մլրդ դրամի (43 կմ) ճանապարհաշինարարական աշխատանքներ, իսկ 2013թ-ին նախատեսվում է իրականացնել 700.0 մլն դրամի (5 կմ) աշխատանքներ:</p>
148.	<p>ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն</p>	<p>3 և ավելի երեխաների ծննդյան միանվագ նպաստի չափի բազմապատկում – 8.2 մլրդ դրամ:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p> <p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է պահպանել 3-րդ և ավելի երախայի ծննդյան միանվագ չափը՝ 430.0 հազ. դրամ, իսկ հատկացումների չափը կազմում է 2 830.3 մլն դրամ՝ 6504 երեխայի համար: ՀՀ 2013-2015 թթ. ՄԺԾԾ 2014 թվականից նախատեսվում է 3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում կիրառել տարբերակված նոր մոտեցում՝ 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափը սահմանել 1.0 մլն դրամ, իսկ 5 և ավելի դեպքում՝ 1.5 մլն դրամ:</p>
149.	<p>ՀՀ Ազգային ժողովի «ՀՅԴ» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Առաջարկվում է «սփյուռքահայերի ինտեգրման ծրագրին» հատկացվող ֆինանսական միջոցները մեծացնել 50 մլն դրամով՝ այն ուղղելով ՀՀ-ում և ԼՂՀ-ում սիրիահայերի աջակցությանը:</p>	<p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում «Սփյուռքահայերի (իրաքահայեր, սիրիահայեր) ինտեգրման ծրագրի» իրականացման նպատակով նախատեսված է 10.0 մլն դրամ: Ինչ վերաբերում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով լրացուցիչ գումարի նախատեսմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել: Անհրաժեշտության դեպքում սիրիահայերի աջակցության ծրագիրը՝ ըստ իրավիճակի, կֆինանսավորվի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից,ինչպես արվել է 2012 թվականին:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
150.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>«Կառավարության 2013թ. բյուջետային ուղերձի առաջին մասի «Արտաքին քաղաքականության ոլորտի 2013թ. հիմնական խնդիրներին վերաբերող մասը «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով. «և բանակցությունների արդյունավետության ապահովման նպատակով Արցախի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունն այդ գործընթացին վերականգնելու համար հնարավոր բոլոր ջանքերի գործադրումը»:</p> <p>Փոփոխությունը պայմանավորված է «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2008թ. ապրիլի 29-ին ընդունած հայտարարությամբ: Հիշյալ փաստաթղթով Ազգային ժողովը «Նախագահին և Կառավարությանն առաջարկել է ամեն ջանք գործադրել վերականգնելու համար Արցախի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը ընթացող բանակցություններին»:</p>	<p>Բյուջետային ուղերձում տվյալ ձևակերպումը ընդգրկել նպատակահարմար չէ, քանի որ ՀՀ-ն շարունակական ջանքեր է գործադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը լիարժեք բանակցային կողմ դառնալու Ադրբեյջանի դիմադրության հաղթահարման ուղղությամբ:</p>
151.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Կրկնապատկել «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» ծրագրի համար նախատեսված 38.2 մլն դրամ գումարը՝ հասցնելով 76.4 մլն դրամի:</p> <p>Համաձայն ՄԱԿ-ի տվյալների՝ Հայաստանը համարվում է ծերացող բնակչություն ունեցող երկիր: Այս քայլով պետությունը հնարավորություն կտա բազմաթիվ երիտասարդների ընտանիք կազմելու այդպիսով մեղմելու երկրում դեմոգրաֆիական խնդիրը: Արդյունքում նկատելիորեն կմեղմվի սոցիալական բեռացումը, ահագնացող չափերի հասնող արտագաղթն ու ծայրահեղ սոցիալական լարվածությունը:</p>	<p>Նախագծով «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» ծրագրի գծով նախատեսված հատկացումները կազմում են 250.2 մլն դրամ, կամ աճը 2012 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ կազմում է 38.2 մլն դրամ: Քանի, որ «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» ծրագրի շրջանակներում նոր մեխանիզմ չի առաջարկվում, ուստի առկա վարկային միջոցների համեմատ համաֆինանսավորումը բավարար է:</p>
152.	«Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Նվազեցնել 2013թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը սահմանամերձ և բարձր լեռնային բոլոր բնակավայրերի մասով՝ այդ բնակավայրերում հաշվառված մեկ անձին սեփականության իրավունքով պատկանող մինչև 700 մլն արժողությամբ գույքի և մինչև 30 հա հողատարածքների հանդեպ հարկման</p>	<p>Սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերի մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործված հողերն ազատված են հողի հարկից 1994 թվականից սկսած:</p> <p>Միաժամանակ, գույքահարկի եւ հողի հարկի հաշվարկ-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>զրոյական դրույքաչափերի կիրառման արդյունքում:</p> <p>Այս առաջարկությունը կթեթևացնի սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի բնակչության սոցիալական վիճակը և կխրախուսի նրանց մնալ իրենց հայրենի տարածաշրջաններում</p>	<p>ման հիմքում դրված են գոտիականության գործակիցներ, որոնք սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում բավականին ցածր են, ինչն իր հերթին փոքրացնում է դրանց կադաստրային արժեքները եւ համապատասխանաբար դրանց մասով հաշվարկված գույքահարկն ու հողի հարկը:</p> <p>Միաժամանակ, գտնում ենք, որ անձի նկատմամբ, որն ունի 700 մլն. արժողությամբ գույք եւ մինչև 30 հա հողատարածք, նման արտոնությունների կիրառումը սոցիալական կողմնորոշում ունենալ չի կարող:</p> <p>Բացի այդ, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանամերձ բնակավայրերում արտոնագրային վճարի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով սահմանված են արտոնագրային վճարի 5-7 անգամ ավելի ցածր դրույքաչափեր, քան այլ վայրերում նույն գործունեության տեսակներով զբաղվելու համար:</p>
153.	<p>«ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության համար գանձվող վարձավճարների ավելացում 5 անգամ:</p> <p>Առաջացած գումարները ուղղել համայնքային բյուջեներ</p> <p>Ոչ գյուղատնտեսական նպատակներով պետական հողերի վարձակալության վարձավճարների դրույքաչափերը շատ փոքր են, ինչը բերում է մեծ հողակտորների երկարաժամկետ վարձակալության շահավետության՝ երբեմն առանց այդ հողերի արդյունավետ օգտագործման, երբեմն էլ հսկայական տարածքների՝ շարքային քաղաքացիների համար փակ գոտիների վերածման:</p> <p>Վարձավճարների դրույքաչափի ավելացումը կբերի նշված խնդրի մասնակի լուծմանը, դրա հետևանքների մեղմացմանը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել: Պետության և համայնքային սեփականության հողամասերի, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական նշանակության պետական հողերի, վարձակալության համար գանձվող տարեկան վարձավճարի նվազագույն չափը սահմանված է ՀՀ հողային օրենսգրքով: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ՀՀ կառավարության որոշումներով (N286 12.04.2001թ, N 912-Ն 18.05.2006թ, N668-Ն 03.06.2010թ, N145-Ն 24.02.2011) կարգավորվող վարձավճարների չափերն էականորեն գերազանցում են ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված տարեկան վարձավճարի նվազագույն չափը: Ընդ որում, համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը օրենքով սահմանված դեպքերում մրցութային կարգով վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները (Հողային օրենսգրքի 76-րդ հոդված): Ուստի, խնդիրը հիմնականում կարգավորվում է</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			վարձակալության պայմանագրով:
154.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը բարձրացնել 30%-ով, որի նպատակով բյուջեից հատկացնել 32 մլրդ դրամ:</p> <p>Սա կհանգեցնի սոցիալական բևեռացման նվազմանը և սոցիալական լարվածության թուլացմանը, պետական հատվածի աշխատողների աշխատանքի արդյունավետության և պատասխանատվության բարձրացմանը: Պետական հատվածի աշխատողների թվում պետական ծառայողների և քաղծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը սահմանել 111.000 դրամ, իսկ միջին աշխատավարձը հասցնել 210.000 դրամի: Դա կապահովի պետական հատվածի մրցունակության ավելացմանը մասնավորի հանդեպ և բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքի կանխմանը թե պետական հատվածից դեպի մասնավոր և թե երկրից նրանց արտագաղթի դադարեցմանը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից: Քաղծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը 111000.0 դրամ սահմանելու պարագայում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կավելանան 29.3 մլրդ դրամով, իսկ մնացած աշխատողների աշխատավարձը 30%-ով բարձրացնելու պարագայում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կավելանան ևս 5.7 մլրդ դրամով և ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի ավելացումը կկազմի շուրջ 35.0 մլրդ դրամ:</p> <p>Հարցը աստիճանաբար կլուծվի ՄԺԾ-ով և կառավարության ծրագրով նախատեսվող նվազագույն աշխատավարձի բարձրացմանը զուգահեռ:</p>
155.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Նվազեցնել 2013թ.-ին նախատեսվող հարկային մուտքերը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում (ներառյալ Ինտերնետ տիրույթը): Ծավալվող ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն (բացի Ինտերնետում շահումով խաղերից) ԱԱՀ-ից և շահութահարկից 4 տարով ազատելու արդյունքում արդեն 2012թ. բյուջե թերմուտքագրված գումարների չափով:</p> <p>Ըստ միջազգային հեղինակավոր փորձագիտական կազմակերպությունների հաշվարկների՝ 2050թ. աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտադրված ՀՆԱ-ն կգերազանցի վառելիքաէներգետիկ ոլորտում արտադրվող ՀՆԱ-ին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում իշխանությունների կողմից հռչակվել է որպես գերակա, սակայն այն խթանող պետական ծրագրերը խիստ անբավարար են այդ ոլորտի ողջ ներուժի բացահայտման և առաջընթաց տեմպերով դրա զարգացման համար: Մինչդեռ՝ լինելով գիտելիքահեն, գիտության և կրթության զարգացումը խթանող, տրանսպորտային ծախսեր չպահանջող, տնտեսության և կառավարման արդ-</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գործող օրենսդրությամբ գիտական ու գիտատեխնիկական գործընթացներում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համար արդեն իսկ սահմանված են բավական լայն հարկային արտոնություններ: Մասնավորապես, ա) «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար կատարված ծախսերի ամբողջ գումարի չափով ծախսերի կատարման տարում, բ) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, գիտահետազոտական աշխատանքները ազատված են ավելացված արժեքի հարկից: 2. Նոր հարկային արտոնությունների սահմանումը չի բխում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հան-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>յունավետության բարձրացմանը նպաստող՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը առավել մեծ հեռանկար ունի զարգանալու և կարիքն ունի ամենաբարձր մակարդակի խրախուսման:</p>	<p>րապետության կառավարության տնտեսական քաղաքականության սկզբունքներից և Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած պարտավորություններից:</p> <p>3. Բացի այդ, հարկման ոլորտում ցանկացած արտոնության կիրառություն ստեղծում է հարկումից խուսափելու ռիսկեր, որոնց արդյունավետ կառավարումը մշտական մարտահրավեր է դառնում հարկային մարմինների համար: Այդ տեսանկյունից գործարարության այս կան այն ոլորտի զարգացումն ապահովելու առումով հարկային արտոնությունների կիրառությունը լավագույն գործիքը չէ և հետևաբար անհրաժեշտ է կիրառել աջակցության առավել հասցեական գործիքներ:</p> <p>4. Կարծում ենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առկա է բավարար՝ տարեկան շուրջ 10-15 տոկոս աճ և ոլորտի առավել արագ զարգացումն ապահովելու համար լրացուցիչ հարկային խթանների կիրառման կարիք չկա:</p>
156.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Երիտասարդ և անօթևան ընտանիքների համար ցածրարժեք 1-2 սենյականոց բնակարանների (սոցիալական բնակարաններ) վարձակալում և ենթավարձակալությամբ տրամադրում՝ պետության կողմից վարձի 50%-ով զեղչմամբ: Այս նպատակով հատկացնել 3 մլրդ դրամ:</p> <p>Այսօր Հայաստանում կան հազարավոր երիտասարդ ընտանիքներ, ովքեր ապրում են վարձված բնակարաններում, ինչը, բնակարանների վարձակալության շուկայական չարդարացված բարձր արժեքի պայմաններում ծանր բեռով է նստում նրանց ընտանեկան բյուջեների վրա: Բացի այդ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի տվյալներով՝ Երևանում կան շուրջ 180 անօթևաններ՝ ծերեր, երեխաներ և միայնակ մարդիկ: Այս առաջարկության ընդունմամբ էապես կթեթևացվի երիտասարդ ընտանիքների ֆինանսական հոգսը, իսկ անօթևան մարդկանց կտրամադրվի կացարան, որը դրական</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Ներկայումս երիտասարդ և անօթևան ընտանիքների համար հաշվառում չկա: Ներկայացված խնդիրը լուծելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել համապատասխան դաշտը, կատարել հետազոտություն, ընտրել շահառուներին, մշակել համապատասխան իրավական ակտեր, ծրագիր և ներառել ՄԺԾ ծրագրում: Այսինքն 2013 թ. պետական բյուջեով այս խնդիրը լուծել հնարավոր չէ:</p> <p>Միաժամանակ, ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործում է “Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ” ՊՈԱԿ՝ անօթևանների ժամանակավոր կացարանը, որտեղ երկու ամիս ժամկետով միաժամանակյա սպասարկվում են 60 անօթևաններ (տարեկան կտրվածքով՝ շուրջ 360 անօթևաններ), իսկ Երևանի “Զատիկ” մանկատան անօթևանների կացարան-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ազդեցություն կունենա նրանց առողջական վիճակի բարելավման և մահացության կրճատման առումով: Այս հատկացումը միտված կլինի սոցիալական լարվածությունը մեղմելուն, արտագաղթը նվազեցնելուն:</p>	<p>Նում՝ 20 երեխաներ: Նշենք նաև, որ ՀՀ կառավարության 02.08.2012 թ. N 1009-Ն որոշմամբ ստեղծվել է «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը կիրականացնի սոցիալական բնակարանային ֆոնդում ընդգրկված 59 բնակարանների (ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի NN 25, 33, 34 շենքերում) և ՀՀ կառավարության 02.08.2012 թ. N 1012-Ն որոշմամբ ՀՀ ԱՍՀՆ տնօրինությանը հանձնված "Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ" ՊՈԱԿ ամրագրված մասնաշենքի (մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների հանրակացարանային տիպի բնակելի մակերեսով և դրանց կահավորման համար անհրաժեշտ գույքով ապահովելու համար) պահպանման, տեխնիկական սպասարկման աշխատանքներ և բնակիչների խնդիրների լուծման կազմակերպում:</p> <p>Բացի այդ ներկայումս քննարկման փուլում է գտնվում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակված «Բնակարանային պայմանների բարելավման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է սահմանել սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման պետական աջակցության սկզբունքները, ուղղությունները և կարգը:</p>
157.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>ՀՀ Ազգային ժողովին տրամադրվող 2.83 մլրդ դրամ գումարը ավելացնել 500 մլն դրամով: Գումարն ուղղել պառլամենտարիզմի զարգացմանը, ՀՀ ԱԺ գործունեության արդյունավետության բարձրացմանը և որպես իշխանության առանձին ու ինքնուրույն ճյուղի կայացմանը: Կրկնապատկել ԱԺ խմբակցությունների, մշտական հանձնաժողովների փորձագետների և պատգամավորների վճարովի հիմունքներով աշխատող օգնականների աշխատավարձերը: Սա թույլ կտա ներգրավվել առավել փորձառու և բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից: ԱԺ խմբակցությունների, մշտական հանձնաժողովների փորձագետների և պատգամավորների վճարովի հիմունքներով աշխատող օգնականների աշխատավարձերը կրկնապատկելու դեպքում ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կավելանան շուրջ 296.0 մլն դրամով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
158.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Հարևան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով հատկացնել 7 մլրդ դրամ գումար:</p> <p>Հարևան և այլ երկրներից տեղահանված ու Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականների, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց բնակարանային խնդիրների լուծումը կմեղմի երկրում առկա սոցիալական լարվածությունը, կնպաստի արտագաղթի տեմպերի նվազմանը: Միջոցները անհրաժեշտ է հատկացնել առևտրային բանկերի տրամադրած հիպոթեքային վարկերի տոկոսադրույքների՝ պետության կողմից 50%-ով համաֆինանսավորման եղանակով:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
159.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Կենսաթոշակների նվազագույն չափը հասցնել նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին՝ 65.000 դրամի: Այդ նպատակով ծերության համար նախատեսվող գումարները ավելացնել 184 մլրդ դրամով (450.000 թոշակատուի հաշվարկով):</p> <p>Կենսաթոշակների նվազագույն չափի համապատասխանեցումը նվազագույն կենսապահովման զամբյուղի ցուցանիշին մշտապես եղել է «Ժառանգության» պահանջը: Մինչև 2007 ժամանակ այս միջոցառումը 2007 և 2008թթ.-ի ընտրություններից առաջ խոստացել էին իրականացնել համապատասխանաբար իշխող կուսակցությունն ու ՀՀ գործող նախագահը: Կենսապահովման զամբյուղը հաշվարկված է որպես մեկ անձի կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն գումար, որից ցածր կենսաթոշակի շեմ սահմանելը հակատրամաբանական է, հակամարդկային, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ-ի կողմից վավերացված բազմաթիվ միջազգային կոնվենցիաների դրույթներին, տարրական հումանիտարական և սոցիալական համերաշխության սկզբունքներին: Ի վեր-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Հաշվի առնելով կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը՝ նվազագույն կենսաթոշակը 65.000 դրամ սահմանելու համար պետք է 52000 դրամով բարձրացնել հիմնական կենսաթոշակի չափը (հիմնական կենսաթոշակի գործող չափը 13000 դրամ է):</p> <p>Ըստ այդմ, հաշվի առնելով կենսաթոշակատուների թվաքանակը (շուրջ 500 000 անձ)՝ անհրաժեշտ լրացուցիչ միջոցները կկազմեն շուրջ 310 մլրդ. դրամ, ինչն անհրատեսական է:</p> <p>Հարկ է նաև նկատի ունենալ, որ վերը նշված միջոցները չեն ներառում զինվորական կենսաթոշակների համար անհրաժեշտ միջոցները:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ջո այսօրվա թռչակառունների քրտինքով են ժամանակին ստեղծվել այն հսկայական ենթակառուցվածքները, որոնց անխնա շահագործման միջոցով հարստացել են և շարունակում են գերշահույթներ ստանալ մերօրյա օլիգարխները:</p>	
160.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Գյուղատնտեսության սուբսիդավորման նպատակով հատկացվող միջոցները կրկնապատկել՝ ավելացնելով 10 մլրդ դրամով</p> <p>Մաքսային գերազատական ռեժիմի և Հայաստանի հետ առևտուր անող որոշ արտերկրների կողմից՝ իրենց գյուղատնտեսական արտադրողների հանդեպ սուբսիդավորման և հովանավորչության քաղաքականության կիրառման պայմաններում Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը շատ դեպքերում դառնում է անմրցունակ ներկրվող էժան գյուղատնտեսական մթերքների հանդեպ, ինչը հարվածում է տեղական արտադրողին, թույլ չի տալիս Հայաստանի գյուղմթերքներ արտադրողներին զարգացնել արտադրական ենթակառուցվածքները:</p>	<p>ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծում գյուղատնտեսության սուբսիդավորման նպատակով նախատեսված է միայն տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը (634.5 մլն դրամ): Հետևաբար հստակեցման կարիք ունի սուբսիդավորման նպատակով հատկացվող միջոցների կրկնապատկման առաջարկությունը:</p> <p>Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով որ նոր մեխանիզմ չի առաջարկվում, գումարի ավելացման խնդիրը կարող է քննարկվել 2013թ. ընթացքում՝ վարկավորմանն ուղղված լրացուցիչ միջոցների առկայության դեպքում:</p>
161.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Ոռոգման նպատակով հատկացվող բյուջետային միջոցները ավելացնել 5 մլրդ դրամով:</p> <p>Այս միջոցներն ուղղել բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ջրօգտագործումը ամբողջությամբ սուբսիդավորելուն՝ խթանելով այդ տարածքներում գյուղմթերքների արտադրության աճը, ինչն իր հերթին կբարելավվի տեղի բնակչության սոցիալական վիճակը, կպահի գյուղացուն իր հայրենի բնակավայրում: Սա էլ իր հերթին կարևոր է սահմանների ամրապնդման տեսանկյունից:</p>	<p>Ջրօգտագործողների ընկերությունների 2013թ. պետական ֆինանսական աջակցության գնահատվող չափաքանակները հաստատվել են ՀՀ կառավարության 30.09.2010թ. «Ջրօգտագործողների ընկերությունների պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N1291-Ն որոշմամբ:</p> <p>Ռազմավարությամբ նախատեսվել է ոռոգման ջրի բարձր ինքնարժեքի պարագայում մասնակի սուբսիդավորման միջոցով ոռոգման ծառայությունների մատչելիության ապահովում: Ընդ որում ՀՀ-ում գործող ԶՕԸ-ների կողմից հավաքագրվող եկամուտը 2012-2013թթ. համար տարեկան ծրագրավորվել է շուրջ 6.5 մլրդ դրամ:</p> <p>Առաջարկվող մոտեցման դեպքում պետության կողմից կփոխհատուցվի ծախսերի ավելի քան 90%-ը, ինչն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ընդունելի չէ, քանի որ այդ դեպքում անվճար ջուր կտրամադրվի բոլորին անկախ ունեցած հողատարածքի մեծությունից:</p> <p>Բացի այդ անվճար ջրօգտագործումը բերում է ջրային ռեսուրսի շոայլ օգտագործման, ինչը չի բխում ՀՀ օրենսդրությունից և ներկա քաղաքականությունից:</p>
162.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Հավելյալ 3.8 մլրդ դրամի հատկացում (Կառավարության կողմից առաջարկվող բյուջեի նախագծում նախատեսված 1.7 մլրդ դրամի փոխարեն)՝ Հայխնայբանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիներին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների՝ ներառյալ 1990-ականների խաբված ավանդատուների կորցրած գումարները, փոխհատուցմանը: Այդ նպատակով փոփոխել 2005 թվականի հուլիսի 1-ից սկսած և անընդմեջ մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը ընտանեկան նպաստառուների ցուցակներում ընդգրկված ընտանիքներին նպաստ տրամադրելու կարգը:</p> <p>Անհրաժեշտ է կրկնապատկել փոխհատուցման գործակիցները, սահմանել փոխհատուցման ժամկետների հստակ ժամանակացույցեր: Մնացած տուժած ավանդատուների հասանելիք գումարները՝ վերը նշված գործակցով հաշվառելուց հետո ճանաչել որպես ներքին պարտք և տրամադրել նրանց հատուկ այդ նպատակով թողարկված համապատասխան ներքին փոխառության պարտատոմսեր: Առաջարկի ընդունումը նաև հնարավորություն կտա մեծացնել փոխհատուցում ստացողների ցանկը, որով կապահովվի սոցիալական արդարությունը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>«ՀՀ 2006թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006 թ. մարտի 16-ի N 352-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվառվել են 61 680 անձինք իրենց 138 061 ավանդային գրքույկներով: 2012 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ ավանդի փոխհատուցման վճարման ցուցակ են ներառվել մինչև 53513 համարում հաշվառված ավանդատուները: Կանխատեսվում է, որ մինչև 2012 թ. ի տարեվերջ ավանդի փոխհատուցման ցուցակներում կներառվեն մինչև մոտավորապես 55000 համարում հաշվառված ավանդատուները:</p> <p>Առաջարկվում է 2013 թ. շարունակել մնացած շուրջ 6 700 ավանդատուների փոխհատուցման գումարի վճարումները նույն կարգով՝ որպես նույն պայմաններում, նույն կարգով ավանդի փոխհատուցման իրավունքը ճանաչված ավանդատուներ:</p> <p>ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրով սահմանված տարիքային հերթականությամբ ավանդների փոխհատուցման տրամադրման հետ կապված հարցերը (փոխհատուցման չափ, վճարման կարգ, ժամկետ և այլն) կորոշվի գործող ծրագրի ավարտից, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
163.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Իծաքար համայնքին հատկացնել 50 մլն դրամ: Ակումբի կամ մշակույթի տան կառուցում	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
164.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ համայնքին հատկացնել 21 մլն դրամ: Գյուղամիջյան ավտոճանապարհի /4կմ/ նորոգում	ՀՀ կառավարության 04.10.2012թ-ի № 1392-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Ներքին Բազմաբերդի գյուղամիջյան ճանապարհի վերանորոգման և ասֆալտապատման նպատակով հատկացվել է 30.0 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին:
165.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի Արենի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի 600մ հատվածի վերանորոգման համար տրամադրել 5 մլն դրամ: Համայնքի խմելու ջրի ներքին ցանցի այդ հատվածից օգտվում են համայնքի մոտ 600 բնակիչ, դպրոցը և 5 համայնքներ սպասարկող հիվանդանոցի մի մասնաշենքը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
166.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի Սալի համայնքի մշակույթի տան վերանորոգման և ներքին հարդարման համար տրամադրել 11.5 մլն դրամ: Համայնքի վերաբնակիչ և փախստականների ինտեգրացման, զարգացման և նրանց հոգևոր և մշակութային կարիքները հոգալու և ազատ ժամանակի տնօրինման նպատակով:	ՀՀ կառավարության 04.10.2012թ-ի № 1392-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Սալի համայնքի մշակույթի տան վերանորոգման նպատակով հատկացվել է 5.0 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին:
167.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի Հերիեր համայնքի խմելու ջրի 1500 մ ջրագծի ներքին ցանցի վերանորոգման համար տրամադրել 15 մլն դրամ: Հերիեր համայնքի 1004 բնակիչներ կօգտվեն մաքուր, և առողջության համար ոչ վնասակար խմելու ջրից:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
168.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Սյունիքի մարզի Ույծ համայնքի ոռոգման ցանցի 1800մ ջրագծի մասնակի վերանորոգման և խողովակաշարի փոփոխման համար տրամադրել 15 մլն դրամ:</p> <p>Համայնքի 100 տնտեսություններ մաշված և քանդված խողովակաշարի պատճառով զրկվում են գետափնյա հատվածում իրենց տնամերձերը մշակելու հնարավորությունից և ունենում են տնտեսական մեծ կորուստներ: Բացի այդ, կեղտաջրերով հագեցած հատվածը մեծապես վնասում է Սիսիան քաղաքի Սյունիք թաղամասի բնակիչների առողջությանը և տնտեսական բարգավաճմանը:</p>	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
169.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Սյունիքի մարզի Տորունիք համայնքի խմելու ջրի 7կմ ջրագծի վերանորոգման համար տրամադրել 15 մլն դրամ:</p> <p>Համայնքի բնակիչները զրկված են որակյալ խմելու ջրից: Հին ջրագիծը մաշված է, ջրի կորուստները մեծ են և նպաստում են սողանքային գոտու ստեղծմանը:</p>	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
170.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Սյունիքի մարզի Եղեգ համայնքի խմելու ջրի 4կմ հատվածի վերանորոգման համար տրամադրել 10 մլն դրամ:</p> <p>Եղեգ համայնքի խմելու ջրի արտաքին ցանցը մասնակի, իսկ ներքին ցանցը հիմնովին վերանորոգման կարիք ունի: Զրազրկված է նաև դպրոցը:</p>	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
171.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի մշակույթի տան և գրադարանի տանիքի վերանորոգման համար տրամադրել 6 մլն դրամ:</p> <p>Գեղանուշ համայնքի գյուղապետարանը, մշակույթի տունը և գրադարանը կառուցվել են 1959թ., տեղակայված են միևնույն շենքում, որը մինչև օրս չի վերանորոգվել: Շենքի վատթար վիճակը խանգարում է վերջիններիս բնականոն գործունեությանը, իսկ գյուղի բնակչությունը, այդ թվում երիտասարդությունը զրկված են իրենց հոգևոր և մշակութային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունից:</p>	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
172.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Լեհվազ համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգման համար տրամադրել 3 մլն դրամ: Լեհվազ համայնքի գյուղապետարանը կարողանում է հոգալ համայնքի մանկապարտեզի կարիքները: Մանկապարտեզի շենքի տանիքը շարքից դուրս է եկել և կարիք ունի վերանորոգման:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
173.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Ավանք համայնքի խմելու ջրի ներքին ցանցի 1300 մ ջրագծի վերանորոգման համար տրամադրել 17 մլն դրամ: Համայնքի բնակիչները զրկված են խմելու մաքուր ջրից: Ջրագծի մաշված խողովակաշարը ողողվում է ոռոգման և կենցաղային կեղտաջրերով:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
174.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Մովսես համայնքի խմելու ջրի ջրահավաքի վերանորոգման և ցանկապատման և 350մ ջրագծի կառուցման համար տրամադրել 4 մլն դրամ: Համայնքի 1978 բնակիչ կապահովվեն անվտանգ խմելու ջրով և կկրճատվեն ջրի կորուստները:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
175.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Իծաքար համայնքի խմելու ջրի ջրագծի 800մ հատվածի և ջրահավաքի կառուցման համար տրամադրել 11 մլն դրամ: Համայնքի 378 բնակիչների կենսապայմանների բարելավում և հավասարաչափ զարգացում:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
176.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Վայոց Ձորի Վայք քաղաքի քաղաքային գերեզմանատան 4800 գծ.մ ցանկապատման համար տրամադրել 10 մլն դրամ Վայք քաղաքի հին և նոր գերզմանատները շրջակա միջավայրից չեն առանձնացված և միջավայրը կեղտոտվում է կենդանիների և անբարեխիղճ բնակիչների կողմից: Համայնքը պատրաստ է 5մլն դրամ ներդնել ցանկապատի կառուցման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
177.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն»	Սյունիքի մարզի Ույծ համայնքի խմելու ջրագծի նեքին ցանցի 3կմ հատվածի վերանորոգման համար տրամադրել 8 մլն	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավորական խմբակցություն	դրամ: Համայնքի 590 բնակիչները հնարավորություն կունենան օգտվել խմելու պիտանի ջրից՝ առանց վախենալու տարատեսակ վարակներից:	բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
178.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի գազաֆիկացման համար տրամադրել 65 մլն դրամ: Համայնքի բնակիչների կենսապայմանների բարելավման համար անհրաժեշտ պայման է գազաֆիկացումը: Բացի այդ, կխնայվեն շրջակա անտառների ծառերը, որոնք կտրվում են՝ որպես վառելիքայտ օգտագործելու նպատակով:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
179.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Լեհվազ համայնքի մշակույթի տան համար տրամադրել 5 մլն դրամ: Համայնքի բնակիչները կկարողանան իրենց հոգևոր և մշակութային կարիքները հոգալ և կազմակերպել ազատ ժամանակը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
180.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Տավուշի մարզի Թուզ համայնքի խմելու ջրի ջրագծի 2կմ հատվածի կառուցման համար տրամադրել 5 մլն դրամ: Համայնքի 1830 բնակիչներ կապահովվեն անվտանգ խմելու ջրով և կնվազեն ջրի կորուստները:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից: Հայաստանի Հանրապետությունում «Թուզ» անվանումով համայնք գոյություն չունի: Ներկայացված առաջարկությունը ամենայն հավանականության վերաբերում է ՀՀ Տավուշի մարզի Տավուշ (Թուվուզ) համայնքին:
181.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի գործունեությունը բնականոն շարունակելու համար անհրաժեշտ է 56.4 մլն դրամ՝ հիմնականում ժամանակակից թվային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Դիտարանը ներկայումս լաբորատորիայի կարգավիճակով գտնվում է Հայաստանի ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի կազմում և, փաստորեն, չի կարող իրա-	ՀՀ կառավարության 2012թ. մարտի 15-ի N 374-Ա որոշմամբ Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը գտնվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմում և նախարարությունը ունի այն ակտիվորեն գործարկելու լայնամասշտաբ ծրագիր:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կանացնել մեծ պահանջարկ ունեցող աշխատանքներ: Այնինչ դիտարանի գործունեության արդյունավետությունը շեշտակիորոն կբարձրանա, եթե այն ունենա Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանման կարգավիճակ: Այս դեպքում արդեն պահանջվող գումարները հնարավոր է հայթայթել և նախարարության այլ աղբյուրներից:	
182.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի երկրագիտական թանգարանի մշտական գիտացուցադրության նպատակով հատկացնել 27 մլն դրամ:</p> <p>Մշտական գիտացուցադրությունը կակտիվացնի մարզի մշակութային կյանքը, կնպաստի հանրապետությունում և հատկապես մարզում տուրիզմի զարգացմանը:</p>	Վայոց ձորի մարզի երկրագիտական թանգարանի մշտական ցուցադրության հայեցակարգը քննարկվել է ՀՀ մշակույթի նախարարությունում և տրամադրվել է մեթոդական օգնություն: Ինչ վերաբերում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով լրացուցիչ գումարի հատկացմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
183.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Վայոց Ձորի Մարտիրոս համայնքի Երիտասարդական կենտրոնի շինարարության ավարտման և կահավորման համար տրամադրել 4 մլն դրամ:</p> <p>Մարտիրոս համայնքում երիտասարդների ազատ ժամանցի, նախաձեռնողական միջոցառումների անցկացման և նրանց արտագաղթը կանխելու համար:</p>	ՀՀ կառավարության 24.05.2012թ-ի № 711-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Մարտիրոս համայնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգման նպատակով հատկացվել է 2.3 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին: Ինչ վերաբերվում է կենտրոնի կահավորմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
184.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրին հատկացնել 1.32 միլիարդ դրամ:</p> <p>Ըստ 2013թ. պետական բյուջեի նախագծի՝ գիտությանը հատ-</p>	ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրին հատկացվելու է 1071761.7 հազ. դրամ: Եթե խոսքը գնում է գիտության ֆինանսավորման ծավալների ավելացման մասին, ապա ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կացված ֆինանսական միջոցները կազմում են ՀՆԱ-ի մոտ 0.246%, իսկ նախագծի՝ 0.96%: Համեմատության համար պետք է նշել, որ այնպիսի երկրներում, որտեղ տնտեսությունն իսկապես հիմնված է գիտության վրա, օրինակ՝ Իսրայելում, այդ հատկացումը կազմում է 4%, ԱՄՆ-ում և Գերմանիայում մոտ 3%: Ռուսաստանում նախատեսվել է գիտությանը հատկացվող բյուջեն հասցնել 1.8%, մեր ռազմավարական հակառակորդ հարևան Ադրբեջանում գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի 0.5%: Կրկնապատկելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրին հատկացվող գումարների չափը, դրանով Հայաստանի Հանրապետությունը կարևոր նախապայման կստեղծի ապագայում Հայաստանում գիտական առաջընթացի զարգացման և տարածաշրջանային գործընթացներին ըստ արժանավույնս մասնակցելու տեսանկյունից: Որքան շատ լինեն թեմատիկ հետազոտությունների թիվը Հայաստանում, այնքան ավելի հեշտ կլինի երկրի տնտեսության կառավարման գործում գիտական պոտենցիալի ներգրավումը, որն իր հերթին կնպաստի տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացմանը:</p> <p>2013թ. բյուջեում գիտության թեմատիկ ֆինանսավորման 1 միլիարդ 320 միլիոն դրամով ավելացման հաշվարկը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ.</p> <ul style="list-style-type: none"> • ավելացնել գործող գիտական թեմատիկ դրամաշնորհների քանակը մինչև 200-ից մինչև 300 • ավելացնել յուրաքանչյուր դրամաշնորհով հատկացվող գումարի չափը, • թեմաներում ներգրավված աշխատողների աշխատավարձը (ներկայիս՝ 70 000 դրամը) հավասարեցնել երկրում միջին աշխատավարձին՝ 120 հազար ՀՀ դրամին, • թեմատիկ դրամաշնորհներում 4 գիտաշխատողի փոխարեն ներգրավել 5 գիտաշխատող, այդ թվում՝ մեկը 	<p>նիստում հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունով պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից նախատեսվում է 2020 թ. գիտության ֆինանսավորման մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ հասցնել միջին եվրոպական չափանիշներին: Ինչ վերաբերվում է բերված հաշվարկներին, ապա պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ընդհանուր թեմաների քանակն ավելացվելու է մինչև 250, ֆինանսավորման ծավալները լինելու են տարբերակված՝ ըստ ոլորտների, իսկ հետազոտական խմբերի կազմը մնալու է նույնը, այն է՝ 2-5 կատարող (ինչպես ներկայումս է), ընդ որում, մեկը՝ երիտասարդ գիտաշխատող:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>երիտասարդ</p> <p>Նշված 4 կետերի հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է վերոնշյալ թիվը՝ 1 միլիարդ 320 միլիոն դրամ:</p> <p>Այս ծրագրի իրականացումը, գումարների արդարացի բաշխման դեպքում, էական փոփոխություն կմտցնի գիտնականների սոցիալական վիճակի մեջ, կնպաստի կառավարության գործողությունների նկատմամբ վստահության աճին և բնականաբար կդառնա գիտության ֆինանսավորման իմաստավորված ավելացման ցայտուն օրինակ:</p>	
185.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>«Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքներ» ծրագրին հատկացված 3 մլրդ 284 մլն դրամ ծրագիրը կրճատել 1.32 մլրդ դրամով:</p> <p>Հաշվի առնելով, որ գիտության զարգացումն ավելի կարևոր է, քան Երևան քաղաքի պարբերաբար վերանորոգվող փողոցների հերթական անգամ նորոգումն ու ճաքալցումը, նպատակահարմար է, որ 2013 թվականին վերոնշյալ ծրագրի համար նախատեսված գումարը ուղղել գիտության ֆինանսավորմանը:</p>	<p>«Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքներ» ծրագրով նախատեսված 3284.0 մլն. դրամը յուրաքանչյուր տարի նախատեսվում է Երևան քաղաքի ասֆալտ-բետոնյա ծածկի առկա վիճակը պահպանելուն ուղղված ընթացիկ աշխատանքների կատարմանը, իսկ նշված գումարը նվազեցնելու դեպքում կառաջանան փողոցների կապիտալ հիմնանորոգման անհրաժեշտություն, ինչի արժեքը կլինի տասնյակ անգամ ավելի:</p>
186.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հատկացնել 11 մլն դրամ:</p> <p>Հաշվի առնելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության դերն ու կարևորությունը, ինչպես նաև 2013 թվականի բյուջեի նախագծով մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար նախատեսված միջոցների սակավությունը՝ լրացուցիչ 11 մլն հատկացնելով ՄԻՊ-ի աշխատակազմը հնարավորություն կունենա արագ արձագանքման խմբի աշխատանքները ավելի օպերատիվ կազմակերպել: Առաջարկում ենք վերոնշյալ 11 մլն դրամը հայթայթել՝ կրճատելով պետական կառավարման համակարգի որևէ գերատեսչության պահուստային ֆոնդի համար նախատեսված գումարները:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
187.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն»</p>	<p>Սոցիալական պաշտպանության ծրագրով հատկացված գումարները ավելացնել 50 մլն դրամով:</p>	<p>Գիտնականներին սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն տալու վերաբերյալ առաջարկություն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավորական խմբակցություն	Սոցիալական պաշտպանության ծրագրով նախատեսված սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն տալ նաև գիտնականներին, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտնականներին:	ընդունվել է: Անհրաժեշտ մեխանիզմների ճշգրտումից հետո 2013 թվականին հարցին կտրվի համապատասխան լուծում:
188.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքների համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
189.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 1 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի բակի ցանկապատի վերանորոգման կամ նոր ցանկապատի տեղադրման համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման, ինչպես նաև՝ դպրոցի սեփականություն հանդիսացող գույքի պաշտպանության նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
190.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզի Արմաշ համայնքին հատկացնել 2 մլն դրամ: Արմաշ գյուղի միջնակարգ դպրոցի կոյուղու հիմնանորոգման աշխատանքների համար՝ կրթության անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
191.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գիտությանն ուղղված բյուջետային հատկացումները 2013թ.-ի համար հասցնել բյուջեի 3 տոկոսին, գիտնականների աշխատավարձը բարձրացնել 3 անգամ: Այդ նպատակով գիտությանը հատկացնել հավելյալ 20 մլրդ դրամ: Համաձայն միջազգային հեղինակավոր հետազոտությունների՝ որևէ երկրի զարգացման համար անհրաժեշտ է, որ գիտությանը հատկացվի ՀՆԱ-ի 2-3%-ը: Մինչդեռ ՀՆԱ-ի 1%-ը այն շեմն է, որն անհրաժեշտ է, որպեսզի երկիրը գոնե պահպանի իր առկա մակարդակը, իսկ դրանից ցածր ֆինանսավորում ունենալու դեպքում երկրին սպասում է ետընթաց: Գիտությունը պետության ամենաարդյունավետ, ռազմավարական ներ-	Առաջարկությունը չի ընդունվել: Առաջարկվող չափով գումարների ավելացումը իրատեսական չէ: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստում հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունով նախատեսվում է պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից 2020 թ. գիտության ֆինանսավորման մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ հասցնել միջին եվրոպական չափանիշներին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>դումն է, որը թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ կտրվածքով բերում է մյուս բոլոր ճյուղերի առաջընթացի և ներդաշնակ զարգացման: Հայաստանում գիտության ֆինանսավորման ներկայիս մակարդակը անընդունելի է, բերում է մեր երկրի ունեցած հզոր գիտական ներուժի ոչնչացմանը, բազմաթիվ փայլուն գիտնականների արտագաղթին՝ «ուղեղների արտահոսքին»:</p>	
192.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Գիտնականների կենսաթոշակներին զուգահեռ հավելավճարներ սահմանել կենսաթոշակի կեսի չափով:</p> <p>2000թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով գիտական կոչում ունեցող անձանց կենսաթոշակից բացի նախատեսված հավելավճարի չափով ավելացում:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Կենսաթոշակի նկատմամբ հավելավճար սահմանելը չի բխում կենսաթոշակային ոլորտում վարվող քաղաքականությունից: Ավելին, 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ վերացվեցին նախկինում կենսաթոշակներին տրվող հավելումները և դրանք միավորվեցին դրամական օգնությունների հետ:</p>
193.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>Գրադարաններին հատկացվող գումարն ավելացնել ևս 1 մլրդ դրամով: Հայկական տպագրության 500-ամյակի առիթով ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը հռչակել է 2012 թ. համաշխարհային գրքի մայրաքաղաք: Այդ նպատակով Հայաստանի գրադարաններին հատկացնելու համար նախատեսված 460 մլն դրամը բավարար չէ բոլոր գրադարանների վերազինման և արդիականացման, անհրաժեշտ նորագույն գրականությամբ համալրման համար: Այս առաջարկը պետք է դիտարկել նաև Հայաստանի տնտեսությունը գիտելիքահեն դարձնելու ռազմավարության շրջանակներում:</p>	<p>2012 թվականի պետական բյուջեով նախատեսված 460,370.5 հազ. դրամը ուղղվել է ՀՀ մշակույթի նախարարության համակարգի 13 գրադարանների տեխնիկական վերազինմանը:</p> <p>Ընթացիկ տարում ընդունված «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում է գրադարանների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածուների հաշվառման, համալրման, պահպանության և հանրային գրադարանի հավատարմագրման կարգը, գրադարանների և գրադարաններից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովվում են գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերը:</p> <p>2013 թվականին նախատեսվում է 20,600.0 հազ. դրամ «Հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրի» առաջին փուլի՝ ՀՀ մար-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			զերի 10 հանրային գրադարաններում պիլոտային ծրագրի իրականացման գծով, որի նպատակն է նպաստել գրադարանային հավաքածուների արդիականացմանը, խթանել հանրային գրադարանների հենքի վրա ժամանակակից տեղեկատվական կենտրոնների ստեղծումը: Արդյունքում 41 տարածաշրջաններից 10-ում (յուրաքանչյուր մարզի մեկ գրադարան) կձևավորվեն տիպային գրադարաններ:
194.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին տրամադրել 20 մլն դրամ: ՀԱԷԿ-ի բալանսի վրա գտնվող Մեծամոր քաղաքի կեղտաջրերի կայանի համար	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի կեղտաջրերի կայանը չի գտնվում ՀԱԷԿ-ի հաշվեկշռի վրա: Այն սպասարկվում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից:
195.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին հատկացնել 150 մլն դրամ: Մեծամորի ավագ դպրոցի հիմնանորոգում	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
196.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Նախադպրոցական կրթությանը հատկացվող գումարներն ավելացնել 3 մլրդ դրամով: Առաջարկի նպատակն է նախադպրոցական կրթօջախների՝ մանկապարտեզների ցանցի ընդլայնումն և բարելավումը: Այս միջոցառումը լուծելու է կարևորագույն սոցիալական և ռազմավարական խնդիրներ:	«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն նախադպրոցական ծառայությունների ներդրման 70 միլիոն ծրագրերը՝ շուրջ 286.0 մլն դրամի սահմաններում:
197.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	«Սպեղանի» երգչախումբն ընդգրկել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկում և այդ նպատակով հատկացնել 30 մլն դրամ: Ելնելով «Սպեղանի» երգչախմբի բացառիկ հաջողություններից և ապագայում նրա ծրագրերից, որոնք պատիվ կբերեն մեր երկրին՝ մեր մշակույթը աշխարհին	ՀՀ մշակույթի նախարարությունը մշտապես աջակցում է «Սպեղանի» երգչախմբի ծրագրերին և 2013 թվականին ևս պատրաստ է ֆինանսական աջակցություն տրամադրել երգչախմբի կողմից ներկայացված գեղարվեստական ծրագրերին: Ինչ վերաբերում է պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելուն, ապա, ելնելով ՀՀ պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների մակարդակից, նոր կազմակերպության ստեղծումն առայժմ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		արժանապատվորեն ներկայացնելիս, առաջարկվում է «Սպեղանի» երգչախմբին տալ պետական կարգավիճակ:	հնարավոր չէ:
198.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	«Շարական» համույթն ընդգրկել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկում և հատկացնել 30 մլն դրամ: Պետական հովանավորություն ազգային մշակութային արժեքների պահպանմանը:	2013 թվականին ՀՀ մշակույթի նախարարությունը պատրաստ է ֆինանսական աջակցություն տրամադրել «Շարական» համույթի կողմից ներկայացված գեղարվեստական ծրագրերին: Ինչ վերաբերում է պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելուն, ապա, ելնելով ՀՀ պետական բյուջեի կանխատեսվող եկամուտների մակարդակից, նոր կազմակերպության ստեղծումն առայժմ հնարավոր չէ:
199.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզ Լուսառատ համայնքին հատկացնել 70 մլն դրամ: Արարատի մարզի սահմանամերձ Լուսառատ համայնքի դպրոցի վերանորոգման համար անհրաժեշտ է 70,0 մլն դրամ՝ կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
200.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզ Լուսառատ համայնքին հատկացնել 40 մլն դրամ: Արարատի մարզի սահմանամերձ Լուսառատ համայնքի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար անհրաժեշտ է 40,0 մլն դրամ: Համաձայն Կառավարության 2008- 2015թթ. Ռազմավարական ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին»:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
201.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Արարատի մարզի Դարակերտ համայնքին հատկացնել 15 մլն դրամ:</p> <p>Արարատի մարզի Դարակերտ համայնքի Մասիսի տարածաշրջանի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար անհրաժեշտ է 15 մլն դրամ: Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին»:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
202.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքին հատկացնել 20 մլն դրամ:</p> <p>Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի նախադպրոցական կրթական հաստատության վերանորոգման համար անհրաժեշտ է 20,0 մլն դրամ: Համաձայն Կառավարության 2008-2015թթ. Ռազմավարական ծրագրի՝ «Պետությունը կուժեղացնի աջակցությունը գործող նախադպրոցական հաստատություններին: Կբարելավվեն գործող նախադպրոցական հաստատությունների շենքային, գույքային, ուսումնանյութական և այլ պայմանները, կբարձրացվեն դրանց կարողությունների օգտագործման արդյունավետությունը՝ համապատասխանեցնելով առկա հզորություններին և չափորոշիչների պահանջներին»:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
203.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	<p>«Արևածաղիկ» մանկապատանեկան ամսագրին հատկացնել 4 մլն դրամ:</p> <p>Ամսագիրը ամբողջությամբ ստեղծվում է երեխաների ուժերով և կոչված է երեխաների մասնակցությամբ պաշտպա-</p>	<p>Նախագծով «Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակում» ծրագրով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը նախատեսված է 39,975.1 հազ. դրամ, որի բաշխումը ըստ առանձին հրատարակումների ներկայացված է հավելված 1-ի աղյուսակ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Նել երեխաների իրավունքները՝ հատկապես հաշմանդամ երեխաներին:	21-11-ում: «Արևածաղիկ» մանկապատանեկան ամսագիրը նշված ցանկում ընդգրկելու հարցը հնարավոր է քննարկել ՀՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում:
204.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Մարտունիի կենտրոնական գրադարանին հատկացնել 30 մլն դրամ: Մարտունիի կենտրոնական գրադարանի հիմնանորոգում՝ պետական հովանավորություն գրադարաններին ծրագրի շրջանակում ֆինանսավորում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
205.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	«Փարոս» կամերային երգչախմբին հատկացնել 30 մլն դրամ: «Փարոս» կամերային երգչախմբին տալ պետական կարգավիճակ: Այն տարածաշրջանում հաշմանդամներից բաղկացած միակ երգչախումբն է:	«Փարոս» կամերային երգչախմբի մշակութային ծրագրերին՝ ստեղծագործական ներուժի պահպանման և խթանման նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունը մշտապես ցուցաբերում է ֆինանսական աջակցություն: Ինչ վերաբերում է երգչախմբի անդամների սոցիալական ապահովվածության բարելավմանը՝ կարծում ենք, որ խնդիրը հնարավոր է լուծել սոցիալական ուղղվածության համապատասխան կառույցների միջոցով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Փարոս» երգչախումբը ստանում է հովանավորչական ֆինանսավորում:
206.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գարեգին Ղազարյանի և Տիգրան Հայազնի հեղինակած «1000 Հայազգի գեներալներ ծովակալներ» գրքի անգլերեն և թուրքերեն լեզուներով թարգմանության և տպագրության համար հատկացնել 10 մլն դրամ: Գրքում առկա բացառիկ տեղեկատվությունը օտարալեզու ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով:	«1000 Հայազգի գեներալներ, ծովակալներ» գրքի անգլերեն լեզվով հրատարակման համար ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով ՀՀ մշակույթի նախարարությանը «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրով նախատեսված է 1.0 մլն դրամ գումար: Հրատարակման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ինչ վերաբերում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով գումարի նախատեսմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
207.	ՀՀ Ազգային ժողովի	ՀՀ կառավարությանն առընթեր Գիտելիքների թեստավոր-	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2013 թվականի պե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	ման կենտրոն ՊՈԱԿ-ին հատկացնել հավելյալ 20 մլն դրամ: Գիտելիքների ստուգման տեխնիկական կողմն ապահովելու նպատակով:	տական բյուջեի նախագծով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 2013 թվականի շրջանավարտների հաշվով համապատասխան միջոցներ են նախատեսվել պետական ավարտական քննությունների անցկացման համար, ինչպես նաև սովորողների գիտելիքների գնահատման գծով և լրացուցիչ միջոցներ տրամադրելու անհրաժեշտություն չկա:
208.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գորիս համայնքին հատկացնել 30մլն դրամ: Գորիսի թիվ 1 Ակսել Բակունցի անվան ավագ դպրոցի վերանորոգում:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
209.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Գորիս համայնքին հատկացնել 30 մլն դրամ: Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնանորոգման նպատակով	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
210.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Սյունիքի մարզի Խնածախ համայնքին հատկացնել 50 մլն դրամ: Համայնքի դպրոցի հիմնանորոգման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
211.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Երևանի Լեռի անվան թիվ 65 դպրոցին հատկացնել 150 մլն դրամ: Երևանի Լեռի անվան թիվ 65 դպրոցի հիմնանորոգում՝ կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	ՀՀ կառավարության 27.09.2012թ-ի № 1231-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Երևանի Լեռի անվան թիվ 65 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման նպատակով հատկացվել է 45.9 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
212.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական	Սյունիքի մարզի Գորիս համայնքին տրամադրել 100 մլն դրամ: Գորիսի Պետական Համալսարանի 2-րդ մասնաշենքի վերա-	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	նորոգման նպատակով	ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
213.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզի սահմանամերձ Լուսառատ համայնքի դպրոցի վերանորոգման համար հատկացնել 100 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կրննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:
214.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղից Դարանակ 20 կիլոմետր ճանապարհի վերանորոգման համար հատկացնել 50 մլն դրամ: Միջհամայնքային կոմունիկացիայի ապահովման նպատակով:	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:
215.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոնին հատկացվող գումարն ավելացնել 20 մլն դրամով: Դպրոցներում գիտելիքների արտաքին գնահատման բոլոր ծախսերը (աշակերտների թվով տպագրված թեստերը) իրենք են վերցնում իրենց վրա, այնինչ՝ նախկինում դա դրված էր դպրոցների վրա:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ սովորողների գիտելիքների արտաքին ընթացիկ գնահատման գծով, նախատեսվել է 8.9 մլն դրամ և լրացուցիչ միջոցներ տրամադրելու անհրաժեշտություն չկա:
216.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	2013 թվականի պետական բյուջեից հանել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի համար նախատեսված գումարները: Բյուջեի միջոցների խնայում. ՀՌԱՀ-ը տարիներ շարունակ իր կանոնադրական լիազորությունները փաստացի չկատարելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի պահպանման ծախսերն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեում համապատասխան միջոցները նախատեսվում են համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի՝ «Ազգային հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Բյուջեում առանձին տողով նշվում է այդ մասին:» Ազգային հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում իր նախորդ տարվա

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			գործունեության մասին հաղորդում, որը ներառում է Ազգային հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ:
217.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Արարատի մարզի Արարատ գյուղի Վազգեն Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում 50 մլն դրամ: Կրթության համար անհրաժեշտ պայմանների բավարարման նպատակով:	ՀՀ կառավարության 04.10.2012թ-ի № 1392-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Արարատ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգման նպատակով հատկացվել է 28.5 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
218.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Ավելացնել շարքային պայմանագրային զինծառայողների աշխատավարձը 50%-ով: Աշխատավարձի բարձրացումը կխթանի զինծառայողների պայմանագրերի երկարաձգմանը, կքչացնի հոսքը բանակից, կկնքվեն երկարաժամկետ պայմանագրեր, ինչը կնպաստի ՀՀ զինված ուժերի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը աստիճանաբար պայմանագրային հիմունքներով զինծառայության փոխարինելուն:	ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծով աշխատավարձերի բարձրացում չի նախատեսվել, հետևաբար միայն պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի բարձրացումը կհանգեցնի աշխատավարձերի գծով տարվող միասնական քաղաքականությունից շեղման:
219.	ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն	Առողջապահության ոլորտի 2013 թ. հիվանդանոցային բուժօգնության գծով «ա) Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր և մասնագիտացված հիվանդանոցային կազմակերպություններում հղի կանանց, ծննդաբերների ու ծննդկանների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը, ներառյալ» բառերից հետո ավելացնել «ծննդալուծումը, այդ թվում կեսարյան հատումով, պետ պատվերի շրջանակներում»: Ծննդալուծման հետ կապված վիրահատությունների անվճար	ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած 2013 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերում մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր և մասնագիտացված հիվանդանոցային կազմակերպություններում նախատեսվում է նաև «ծննդալուծումը, այդ թվում կեսարյան հատումով»:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>անցկացումը կնպաստի հղի կանանց սոցիալական խնդիրների կարգավորմանը, կխթանի ծննդաբերությունների քանակի աճին: Անվճար լինելու դեպքում բուժանձնակազմի կողմից վիրահատական միջամտության կիրառումը կառաջարկվի միայն բժշկական տեսակետից ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով:</p>	
220.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>ՀՀ կառավարության 2013թ. բյուջեով հաշմանդամային սպորտին առնչվող ծառայությունների համար նախատեսված 9,000,000.00 դրամը ավելացնել 22,470,100.00 դրամով՝ հասցնելով 31,470,100.00 դրամի:</p> <p>2010թ. հոկտեմբերի 22-ից ՀՀ-ում ուժի մեջ է մտել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան: Սույն Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Կոնվենցիայի հոդված 30-ի 5-րդ կետի ա) և բ) ենթակետերը պահանջում են, որ՝</p> <p>ա) խրախուսելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ակտիվ մասնակցությունը բոլոր մակարդակներում անցկացվող հիմնական սպորտային միջոցառումներին.</p> <p>բ) ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան կազմակերպելու և զարգացնելու հաշմանդամությանը հատուկ սպորտային և առողջարարական միջոցառումներ և մասնակցեն դրանց, ինչպես նաև այս նպատակն իրականացնելու համար խրախուսում են անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով :</p> <p>Ըստ պետական վիճակագրական տվյալների, հաշմանդամային սպորտում ներգրավված անձանց թիվը մի քանի հարյուրի է</p>	<p>Նախագծով «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում տրամադրվում է պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող չորս հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են հենաշարժողական ապարատի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, ինտելեկտի (մտավոր զարգացման) սահմանափակ հնարավորություններով մարդկանց ինքնաակ-տուալիզացմանը և հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրմանը: ՀՀ պետական բյուջեից տրամադրվող 9,000.0 հազ. դրամը վերոնշյալ հասարակական կազմակերպություններն օգտագործում են տեղում տարբեր տիպի մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև իրենց միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող պաշտոնական մրցումներին մասնակցելու համար (պարաօլիմպիկ խաղեր, սուրօլիմպիկ խաղեր, աշխարհի, Եվրոպայի առաջնություններ): Ինչ վերաբերում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով հաշմանդամային սպորտին առնչվող ծառայությունների համար լրացուցիչ գումարի հատկացմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>հասնում, իսկ հաշմանդամային սպորտին տրամադրվող գումարը 2011 թ.-ից չի փոփոխվել:</p> <p>Սա անընդունելի է մի պետության համար, որը վավերացրել է ՄԱԿ-ի կոնվենցիան և որտեղ ապրում են 170.000-ից ավել հաշմանդամություն ունեցող անձինք: Սա կարելի է համարել խտրականության դրսևորում, երբ ոչ հաշմանդամային սպորտի համար պետությունը տրամադրում է 100 անգամ ավելի գումար:</p> <p>Հաշմանդամային սպորտին տրամադրված գումարը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, նրանց կյանքի և առողջության բարելավմանը, պետության հեղինակության բարձացմանը երկրի տարածքում և սահմաններից դուրս:</p>	
221.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն</p>	<p>ՀՀ կառավարության 2013թ. բյուջեով վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայությունների համար նախատեսված 44,940,200.00 դրամը նվազեցնել 22,470,100.00 դրամով՝ հասցնելով 22,470,100.00 դրամի:</p> <p>Անընդունելի և շռայլություն է մեր երկրի համար նման սպորտաձևին տրամադրել այսքան գումար: Մեր երկիրը չունենալով բնակլիմայական պայմաններ, ունենալով սուղ բյուջետային միջոցներ իրեն կարող է թույլ տալ այս սպորտաձևից մեկ կամ երկու մարզիկ պահելու համար ծախսել այսքան գումար: Այդ գումարները պետք է ուղղել հաշմանդամային սպորտի զարգացմանը:</p>	<p>Երևանի առազաստային ակումբը բացվել է 2007 թվականին: Հինգերորդ տարին է կենտրոնը ամռան ամիսներին տասնհինգօրյա հերթափոխերով 50-ական երեխա հանրապետության բոլոր շրջաններից, ինչպես նաև ԼՂՀ-ից (այդ թվում նաև մանկատներից), մարզական հավաքներ է անցկացնում վինդսերֆինգի մարզաձևից Սևանա լճի ափին՝ հնարավորություն տալով ավելի ու ավելի շատ սոցիալապես անապահով երեխաների ներգրավումը սպորտի մեջ (մարզաձևից օգտվում են նաև հաշմանդամ երեխաները): Մինչ օրս վինդսերֆինգին տիրապետում են ավելի քան 400 երեխա: Իրենց ավելի լավ դրսևորած երեխաներից կազմվել է մարզական լավ պատրաստակամությամբ հավաքական (հավաքականը կազմված է 25 մարզիկներից), որոնք իրենց մարզումներն անց են կացնում կենտրոնում շուրջ տարի՝ մասնակցելով միջազգային մեծ մրցաշարերին և գրավելով մրցանակային տեղեր: 2012 թվականին ակումբի սաներից 3-ը միջազգային մրցաշարում վինդսերֆինգ և կայսերֆինգ մարզաձևերից գրավել են, համապատասխանաբար, 1-ն և 3-4-րդ տեղերը: Հարկ է նշել, որ վինդսերֆինգ մարզաձևը 1988 թվականից համարվում է</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>օլիմպիական, իսկ կայտերֆինգ մարզաձևը հաջորդ՝ 2016 թվականին Ռիո Դե Ժանեյրոյի օլիմպիադայում կհամարվի օլիմպիական մարզաձև: Երևանի առազատային ակումբում գործում են նաև կայրբորդ, սնոուբորդ, լեռնադահուկային մարզաձևերը, որոնք արդեն համարվում են օլիմպիական: Միաժամանակ, մեր երկիրը, հատկապես Սևանա լիճը, ունի համապատասխան բնակլիմայական պայմաններ, որը նույնիսկ թույլ է տալիս անցկացնել միջազգային մրցաշարեր (մեր երկիրը արդեն հայտավորված է միջազգային կազմակերպությունում): ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը նպատակահարմար չի գտնում կրճատել վինդսերֆինգ մարզաձևի ֆինանսավորումը:</p>
222.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Ժառանգություն» պատգամավորական խմբակցություն Զարուհի Փոստանջյան</p>	<p>ՀՀ պետական բյուջեում նախատեսել գումարներ դեպի պատմամշակութային կոթողներ, հուշարձաններ, հնավայրեր տանող ճանապարհների մասին վկայող տեղեկատվական վահանակների պատրաստման, տեղադրման և սպասարկման համար:</p> <p>Սա կնպաստի Հայաստանը, որպես զբոսաշրջային երկիր, օտարերկրյա քաղաքացիների համար առավել հարմարավետ և հաճելի դարձնելուն:</p>	<p>ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարներով հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված առավել վտանգված հուշարձանների դիտանցման, վերականգնման և ամրակայման աշխատանքներ. դրանք կրում են շարունակական բնույթ և ՀՀ տարածքում իրականացվում են համաչափորեն: Վերոհիշյալ աշխատանքները համարելով ոլորտի գերակա ուղղություններ՝ ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայում նպատակահարմար է ուղղել այս աշխատանքներին:</p> <p>Հուշարձանների տեղեկատվական վահանակների տեղադրման աշխատանքները մինչ օրս իրականացվել են ոչ պետական միջոցների հաշվին (դրամաշնորհային և հովանավորչական ծրագրեր): Ելնելով հուշարձանների քանակից հաջորդ տարիներին ևս նախատեսվում է վահանակների տեղադրման աշխատանքներն իրականացնել նույն սկզբունքով:</p> <p>Ինչ վերաբերում է զբոսաշրջության զարգացման խնդիրներին, ապա կարևորելով զբոսաշրջության դերը ազգա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>յին եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ գտնում ենք, որ դրանք սահմանված են զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության հիմնական իրավական ակտերում և բավականին ակտիվ իրականացվում են դրանց դրույթները:</p>
223.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդայան</p>	<p>Ավելացնել գիտական ֆինանսավորումը՝ հասցնելով օրենքով սահմանվածի չափին և բարձրացնել թեմատիկ ֆինանսավորման ուղղությամբ մասհանումները:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում գիտության ծախսերի համար նախատեսվել է լրացուցիչ 276.5 մլն դրամ:</p>
224.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հերմինե Նաղդայան</p>	<p>Ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը ազգային կանխարգելման մեխանիզմի համար անհրաժեշտ ֆինանսավորում և հաստիքներ</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
225.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է հատկացնել հավելյալ 1.8 մլրդ դրամ 07 առողջապահության բաժնի 03 խմբի 03 դասի 03 ծրագրին՝ «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ»: Վերջին տարիներին երեխաների բժշկական օգնության և սպասարկման ոլորտում կատարվել են մի շարք բարեփոխումներ: 2011թ. ներդրվել է երեխայի առողջության պետական հավաստագիրը, ինչի արդյունքում մինչև 7 տարեկան, 8-18 տարեկան սոցիալապես անապահով խմբերի երեխաների և անհետաձգելի դեպքերի հիվանդանոցային բժշկական օգնությունը հայտարարվեց բացառապես անվճար: 2011թ. համար նշված ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 37700 հիվանդանոցային դեպք, սակայն բժշկական ծառայությունների մատչելիության ավելացման արդյունքում արձանագրվեց դիմելիության աճ՝ տարեվերջին փաստացի կազմելով 47500 դեպք (մոտ 10000 դեպքով ավել): 2012թ. համար նախատեսվել էր 41000 դեպք, սակայն 9 ամսվա տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ արդեն իսկ կատարվել է 41500</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>դեպքի սպասարկում, ինչը փաստում է, որ նման դիմելիության պարագայում տարեվերջին բուժված երեխաների թիվը կկազմի շուրջ 52000 դեպք: Պահպանելով անփոփոխ 2013թ. բյուջեի նախագծում նախատեսվող ֆինանսական ծավալները և դեպքերի թիվը (41000), ակնհայտ է դառնում, որ համեմատ 2012 թ. փաստացի կատարված աշխատանքների, ի սկզբանե ստեղծում ենք անհաղթահարելի դժվարություններ բժշկական ծառայություններ մատուցողների համար՝ թողնելով նրանց վրա բյուջեով չնախատեսված 11000 դեպքի ծախսերի իրականացումը (20%):</p>	
226.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է հատկացնել հավելյալ 4.0 մլրդ դրամ 07 առողջապահության բաժնի 03 խմբի 01 դասի 02 ծրագրին՝ «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ»՝ ծառայությունների գները իրատեսական դարձնելու և պետական պատվերում ընդգրկված նպաստառուների ցանկը ընդլայնելու: Հանձնաժողովը ողջունում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ծառայությունների ոլորտում կատարվող դրական բարեփոխումները բացառապես անվճար բժշկական ծառայություններ մատուցելու հարցում: Ներդնելով համավճարի մեխանիզմները և հաշվարկելով իրատեսական գներ անհետաձգելի, գինեկոլոգիական, և մանկական ծառայություններում՝ կառավարության ծրագիրը 2013թ. համար չի նախատեսում սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց բժշկական ծառայությունների մատուցման դեպքում նույն գների կիրառումը, ինչը հակասում է ՀՀ կառավարության բարեփոխումներին և բացասական է անդրադարձնալու ինչպես բժշկական օգնություն իրականացնողների տնտեսավարման, այնպես էլ նրանց և հիվանդների փոխհարաբերությունների վրա և հետևաբար՝ ծառայությունների պատշաճ մատուցման վրա:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
227.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է հատկացնել հավելյալ 102.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 04 խմբի 01 դասի 04 ծրագրին՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ»: Մի շարք միջազգային կառույցներ, մասնավորապես Գլոբալ հիմնադրամը, տարիներ շարունակ օգնում են Հայաստանի Հանրապետությանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդության կանխարգելման, ախտորոշման և բուժման հարցերում: Սկսած 2013թ. Գլոբալ հիմնադրամը կրճատում է իր մասնակցությունը մոտ 20%-ով և այդ ծրագրերի ֆինանսավորումը, համաձայն նախնական պայմանավորվածության, ՀՀ կառավարությունը պետք է վերցնի իր վրա:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
228.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է հատկացնել հավելյալ 360.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 04 խմբի 01 դասի 07 ծրագրին՝ «Իմունոկանխարգելման ազգային ծրագիր»: Իմունոկանխարգելման բնագավառում ևս միջազգային կառույցների օժանդակության կրճատման արդյունքում անհրաժեշտ են հավելյալ ֆինանսական միջոցներ, հակառակ դեպքում չիրականացրած իմունոկանխարգելման միջոցառումները կարող են հանգեցնել տարափոխիկ հիվանդությունների համաճարակների առաջացմանը:</p>	<p>Իմունոկանխարգելման ազգային ծրագրի գծով հնգավալենտ, ռոտավիրուսային պատվաստանյութերի քանակի և նոր ներդրվող պնևմոկոկային պատվաստանյութերի ձեռքբերման հետ կապված (հիմք ընդունելով Պատվաստանյութերի և իմունիզացիայի գլոբալ դաշինք միջազգային կազմակերպության առջև Հայաստանի Հանրապետության պարտավորությունը՝ նոր ներդրված պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում պետական մասնակցությունը) ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծով ծախսերի աճը կազմել է 61.3 մլն դրամ: Իսկ ինչ վերաբերում է նշված ծրագրի գծով հավելյալ 360.0 մլն դրամ հատկացնելու հարցին, ապա վերջինիս նախատեսման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:</p>
229.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է հատկացնել հավելյալ 300.0 մլն դրամ 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի 02 ծրագրին՝ «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ»՝ ծառայությունները պատշաճ և լիարժեք կազմակերպելու նպատակով: Տարիներ շարունակ հեմոդիալիզի ծառայությունները կազմակերպվում էին սահմանափակ ծրագրի շրջանակներում և կենտ-</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>րոնացված էին Հայաստանի մի քանի խոշոր քաղաքներում՝ Երևան, Գյումրի, Վանաձոր: Վերջին տարիների ընթացքում, տարածքային համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում, նոր կենտրոններ բացվեցին Գավառում, Նոյեմբերյանում, Արմավիրում, Կապանում և այլն, ինչը բերեց այդ ծառայությունների ֆիզիկական մատչելիության բարելավման և հեմոդիալիզով բուժվող հիվանդների թվի աճի:</p>	
230.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. ԲԱԲԼՈՅԱՆ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ</p>	<p>Առաջարկվում է 07 առողջապահության բաժնի 02 խմբի 02 դասի 07 ծրագիրը՝ «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» 8.6 մլն դրամը տեղափոխել և միացնել 07 առողջապահության բաժնի 02 խմբի 03 դասի 01 ծրագրին՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ»: Աննպատակահարմար է համարվում առանձին բյուջետային ծրագիր դիտարկել նույն բժշկական օգնության ծառայության տեսակ հանդիսացող ծառայությունը՝ տեղադրված այլ բյուջետային դասում: Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայությունները կարող են սպասարկվել «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից համապատասխան պետական պատվերի և պայմանագրի առկայության դեպքում:</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է: «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը միացվել է «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին:</p>
231.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Մինասյան</p>	<p>«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն առաջարկում են 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել պետական կազմակերպություններին տրամադրվող տուբսիդիան ԱԱՀ-ով հարկելու դեպքում ծախսերի փոխհատուցում:</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է: ՀՀ 2013թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նախատեսված են համապատասխան հատկացումներ նշված հարցի կարգավորման համար («Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ՝ 328 մլն դրամ, «Հայքոմուլկոյոլի» ՓԲԸ՝ 162.32 մլն դրամ, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ՝ 63.3 մլն դրամ):</p>
232.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>Մաս 1. 2013 թվականի տնտեսական քաղաքականությունների հիմնական ուղղությունների մասին. 1.1. Նկատի ունենալով ստեղծված կացությունը կառավարությունը պետք է կարողանար սահմանել հստակ տնտեսական առաջնահերթություններ: Դրանք հետևյալն են: (1) Հարստության չափից դուրս կենտրոնացվածությունը, ներքին շուկայի կրճատումը, համախառն պահանջարկի հոմոգենու-</p>	<p>Տնտեսական առաջնահերթությունների, այդ թվում նշված համախառն պահանջարկի, դեմոգրաֆիայի, կապիտալի արտահանման, տնտեսության կառուցվածքի դիվերսիֆիկացիայի, աղքատության, բանկային համակարգի և շատ ավելի ընդգրկուն հայաստանյան զարգացման ուղղությունները ներկայացվում են երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրերում, իսկ տարեկան</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>թյան բացակայությունը և դրանց հետ կապված մարդկանց ու կապիտալի արտահանումը: Ստացվել է հայտնի «դույլի էֆեկտը», երբ աղքատության աճի և պահանջարկի անբավարարության պայմաններում կապիտալը փախչում է երկրից շուկան փոքր լինելու պատճառով: (2) Օլիգարխիկ կառուցվածքների գերակշռությունը տնտեսական կյանքում. տնտեսությունը ոչ միայն կենտրոնացված է, այլև գտնվում է այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք իրենց կարգավիճակով կանխորոշում են օրենսդրության փոփոխությունները, ձևավորում են կանոնակարգման իրենց օրակարգը: (3) Վերջին 1,5 տասնամյակի ընթացքում ֆինանսական ու հատկապես բանկային համակարգերի «ամրապնդումը» երկրի տնտեսության զարգացման ընդհանուր տրամաբանությունից դուրս հանգեցրել է նրան, որ բանկերը բացի սովորական շահույթից ռենտա են ստանում տնտեսության իրական հատվածից՝ կտրուկ իջեցնելով վերջինիս զարգացման ներքին խթանները: Այս հարցադրումները 2013 թ.-ի բյուջեի ուղերձում արտացոլված չեն և բյուջեի առաջարկված «փիլիսոփայության» մեջ բացակայում են:</p>	<p>պետական բյուջեն ներկայացնող օրենքը ունի այլ մանդատ և ռազմավարական զարգացման մանրամասն ուղղությունների ներկայացումը պետական բյուջեի մասին օրենքում պարտադիր և նպատակահարմար չէ: Ինչ վերաբերում է ֆինանսական համակարգի դերին, ապա պետք է արձանագրել, որ ֆինանսական հատվածի կողմից ստեղծված ավելացված արժեքի իրական աճի նպաստումը 2011թ. 4.7 % տնտեսական աճին կազմել է 0.8 տոկոսային կետ՝ եթե նույնիսկ հաշվի չառնվեն այն լրացուցիչ օգուտները, որոնք ստացել են իրական հատվածում աշխատող ընկերությունները օրինակ վարկային ներդրումների արդյունքում:</p>
233.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>1.2. Վարչապետի կողմից հնչեցվել է 2013 թ.-ի բյուջեի հիմնավորման հետևյալ բացատրությունը՝ սոցիալական ուղղվածություն, անվտանգություն և ենթակառուցվածքների վերականգնում: Իրականում, սակայն, 2013 թ.-ի բյուջեն 2012 թ.-ի բյուջեի համեմատ ավելի փոքր է: Այս պայմաններում ծախսային գերակայություններին խնդիրը չի հասել. բացառությամբ պաշտոնախին տրված միջոցների, հոչակված մյուս 2 ուղղություններում ֆինանսավորման իրական ծավալները պակասել են և անհասկանալի է դառնում դրանց գերակա լինելու պարագան:</p>	<p>2013 թվականի պետական բյուջեն իր ծախսային կառուցվածքով սոցիալական է, քանի որ ընդամենը ծախսերի 42.1 տոկոսը սոցիալական ծախսեր են: Վերջինս 2012-ի համեմատ ավելի փոքր լինելու և ՀՀ վարչապետի կողմից հնչեցված ծախսային գերակայությունների հարցադրման կապակցությամբ հայտնում ենք, որ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են անվանական արտահայտությամբ 10.3, իսկ իրական արտահայտությամբ 5.8 տոկոսով: Ընդ որում կապիտալ ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ անվանական և իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար 33 և 31.7 տոկոսով: 2013 թվականի գործառնական դասակարգմամբ առողջապահության ոլորտի ծախսերը իրական արտահայտությամբ աճել են 3.5 տոկոսով, իսկ կրթության և սոցիալական պաշտպանության ծախսերի կրճատումը</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>պայմանավորված է կենսաթոշակառուների և սովորողների թվաքանակների նվազմամբ, իսկ սոցիալական պաշտպանության ծախսերի մասով նաև «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանքիների համար բնակարանային շինարարություն» ծրագրի ավարտմամբ:</p>
234.	«Կ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>1.3.Բյուջետային ուղերձով «հիմնավորված» տնտեսության ստարտային վիճակը 2012 թ.-ի ծրագրային ցուցանիշներով այսպիսին է՝ արտահանման աճ 15,3 % և ներմուծման աճ 7%: Այսօր, երբ մենք քննարկում ենք 2013 թ.-ի բյուջեն այդ թվերը համապատասխանաբար կազմում են 6 և 1,2%: Բավական էր, որ հոկտեմբերին մետաղի գները մի փոքր ընկնեին և արտահանման աճի փուչիկն այլևս չկա: Ուրեմն, հուլիսյան պլանները այլևս վստահելի չեն:</p>	<p>Բերված ցուցանիշները անհամադրելի են առնվազն երեք պատճառներով: Առաջինը՝ 2012-ի ծրագրային ցուցանիշները (15.3 և 7%) վերաբերում են ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների արտահանման և ներմուծման աճերին, մինչդեռ «այսօրվա» ցուցանիշները (6 և 1.2%) բնութագրում են ընթացիկ տարվա ինն ամիսների միայն ապրանքների արտաքին առևտրի փաստացի ցուցանիշները: Երկրորդը՝ 2012-ի ծրագրային ցուցանիշները (15.3 և 7%) վերաբերում են ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման իրական աճերին, մինչդեռ հուվար-սեպտեմբերի (6 և 1.2%) ցուցանիշները իրենցից ներկայացնում են ապրանքների անվանական աճերը: Երրորդը՝ 2012-ի ծրագրային ցուցանիշները (15.3 և 7%) վերաբերում են ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման դրամային արտահայտությանը, մինչդեռ հուվար-սեպտեմբերի (6 և 1.2%) ցուցանիշները իրենցից ներկայացնում են դոլարային աճերը: Պետք է նշել նաև, որ համադրելի տվյալներին այսօր մենք դեռ չենք տիրապետում, տարվա ինն ամիսների արտաքին առևտրի իրական ծավալների վերաբերյալ պաշտոնական տվյալները հասանելի կլինեն միայն հաջորդ տարվա սկզբին:</p> <p>Այս պահին հնարավոր է դատողություններ անել միայն ելնելով անվանական տվյալներից, քանի որ դրանք ավելի օպերատիվ են: 2013 թվականի բյուջետային ուղերձի համար կանխատեսումներն իրականացվել են «Կ տնտեսության հունվար-հուլիսի դրությամբ հասանելի փաստացի ցուցանիշների և արտաքին աշխարհում սպասվող</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>զարգացումների հիման վրա: ՀՀ տնտեսության մեկնարկային հնարավորությունների փոփոխման պայմաններում, բյուջետային ուղերձով հիմնավորված արտահանման աճի 2012 թվականի ծրագրային ցուցանիշի ապահովումը այսօր նույնպես համարում ենք իրատեսական, հետևաբար մետաղների գների անկման հետ կապված «արտահանման փուլիկի» վտանգը մեր կարծիքով չափազանցված է: Այդ կարծիքը հիմնված է հետևյալ երեք փաստերի վրա: Առաջինը՝ միջազգային բորսաներում պղնձի ամենացածր գինը վերջին 3 տարիներին արձանագրվել է 2011 թվականի սեպտեմբեր ամսին (310.35, աղբյուրը՝ http://markets.ft.com/research/markets/Tearsheets/Summary?s=US@HG.1:CMX), որն ըստ մեր գնահատականների ՀՀ պղնձի արտահանման գների վրա արտահայտվել է 1 ամիս լազով: Նշված ցածր գնի պայմաններում նույնիսկ հաջորդ ամիս ունեցել ենք պղնձի արտահանման իրական արտահայտությամբ զգալի աճ (մեր գնահատականներով 11.4%): Երկրորդը՝ չնայած այն հանգամանքին, որ միջազգային բորսաներում պղնձի գինը ս.թ. հոկտեմբերին (352.4) սեպտեմբերի (376.45) համեմատ ընկել է, այնուամենայնիվ, նախորդ տարվա դեկտեմբերի (342.35) համեմատ այն համեմատաբար բարձր է (մոտ 3%-ով): Երրորդը՝ մաքսային մարմինների կողմից տրամադրված օպերատիվ տվյալների հիման վրա կատարված մեր գնահատականներով, 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին նույնպես արձանագրվել է պղնձի արտահանման իրական աճ (13.9%-ով):</p>
235.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	1.4. 2013 թ.-ին ունենալով եկամուտների 13,2 և ծախսերի 10,2% աճ կառավարությունն այնուամենայնիվ չի կարողացել գոնե փոխհատուցել գնաճը բյուջետային աշխատողների համար (միջին աշխատավարձի 4.1% աճ 4.2% գնաճի դեպքում): Ինչ վերաբերում է թոշակառուներին, ապա այստեղ որևէ	Պետք է նշել, որ գնաճի ազդեցության այդպիսի մեխանիկական փոխհատուցման քաղաքականություն անգամ Եվրոպական զարգացած երկրների գերակշիռ մասը չունի, իսկ ՀՀ-ն երբևէ չի ունեցել: Բացի այդ, չնայած 2013թ չի նախատեսվում աշխատավարձերի բա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		բարձրացում նախատեսված չէ: 2013 թ.-ին թոշակառուները 4.2%-ով ավելի վատ են ապրելու, քան 2012 թ.-ին:	զային պաշտոնային դրույքաչափերի և հիմնական կենսաթոշակի չափերի բարձրացումներ, այնուամենայնիվ բոլոր ոլորտներում առկա է աշխատավարձերի և թոշակների միջին չափերի որոշակի բարձրացումներ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման, աշխատավարձի և թոշակների բնականոն աճի /ստաժների, դասային աստիճանների փոփոխություն և այլն/, իսկ թոշակների մասով նաև ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցած զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող միջին ամսական թոշակի չափը շուրջ 17 տոկոսով բարձրացման հետ:
236.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	1.5. 2013 թ.-ը ինչ-որ առումով 2009 թ.-ի ճգնաժամից հետո վերականգնողական տարի է: Ըստ ԱՄՀ-ի տվյալների միայն 2017 թ.-ին Հայաստանը կվերականգնի 2008 թ.-ի մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակը: Բացի դա, 2013 թ.-ը բացառիկ տարի է արտաքին պարտքի մարման ու սպասարկման տեսանկյունից. ոչ խելամիտ քաղաքականության պատճառով (ժամանակին զգուշացնում էինք) դրա համար նախատեսված գումարը (418 մլն դոլար) 2012 թ.-ի համեմատ միանգամից կրկնապատկվում է: Սրան կառավարությունը ավելացրել է մի երրորդ խնդիր՝ դեֆիցիտի կրճատումը 3.2%-ից մինչև 2.6%: Ո՞վ է տեսել այս 3 հիմնախնդիրը լուծեն մեկեն: Տպավորություն ես ստանում, որ կառավարությունը դիտմամբ է այսպես վարվել, կարծես ասելով ժողովրդին՝ վեր կաց այս երկրից գնա:	2013 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկող դեֆիցիտի մակարդակը ծրագրելուց հաշվի է առնվել մի կողմից 2013 թվականի համար ծրագրավորված բարձր տնտեսական աճը, ինչի պարագայում հարկաբյուջետային հատվածից տնտեսական աճի լրացուցիչ խթանումը կարող է ռիսկային լինել, մյուս կողմից պարտքի կայունության ապահովման նպատակադրումը: Ընդ որում այս խնդիրները միշտ եղել են մակրոտնտեսական քաղաքականության ռազմավարության օրակարգում և մասնավորապես 2013 թվականի համար նման սցենար միշտ ամրագրվել է, օրինակ ՀՀ և ԱՄՀ միջև համագործակցության ծրագրերում:
237.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	1.6. Ուղերձի սոցիալ-տնտեսական քաղաքականություն հատվածը կարծես թե կոչված պետք է լիներ ներկայացնելու կառավարության կողմից տարվող տնտեսական քաղաքականությունը, այդպես էլ, ինչպես ոչ վաղ անցյալում ԱԺ-ում քննարկված կառավարության տնտեսական ծրագիրը, ըստ էության չի շոշափում դրանք: Ուղերձի կառուցվածքային քաղաքականության մասը դպրոցական շարադրության մակարդակով մտքերի հեղեղ է. իմաստազուրկ, ընդհանուր,	Կարծում ենք, որ բոլոր ժամանակների և բոլոր երկրների համար ընդունելի տնտեսագիտության հիմնարար դրույթները կիրառելի են նաև Հայաստանի համար և այս առումով 2013 թվականի բյուջետային ուղերձում շարունակվում է տարիներ ի վեր ՀՀ բյուջեում այս ուղերձի շարադրման փորձը: Միաժամանակ, եթե առկա են կոնկրետ առաջարկներ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>պրիմիտիվ և հաճախ էլ սուտ: Գերակշռում են երկարաշունչ, անբովանդակ նախադասություններ: Այսպես, իբրև կառավարության 2013թ. տնտեսական քաղաքականության նպատակ հռչակված է հետևյալ նախադասությունը. «ՀՀ կառավարությունը տնտեսական քաղաքականության հիմնական շեշտադրումը դնելու է զարգացած արդյունաբերությամբ տնտեսության կառուցվածքի ձևավորման, գործարար ու ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, առևտրի կարգավորման արդյունավետ գործիքների օգտագործմամբ արտաքին շուկաների հասանելիության ու մատչելիության բարձրացման, տարածաշրջանային ինտեգրացիոն միավորների հետ համագործակցության ընդլայնման, տնտեսության առանձին ճյուղերում գիտելիքային արդյունքի և նորամուծությունների կիրառությունների ընդլայնման ուղղությամբ հասցեական գործողությունների վրա»: Բացի այն, որ այս հիմնարար (փաստաթղթի նպատակը սահմանող) նախադասությունը զուրկ է իմաստից, այն պարզապես հայերեն չէ: Նման նախադասությունների շարանը գերակայում է ուղերձի բոլոր բաժիններում: Օրինակ, «գործարար ու ներդրումային միջավայր» բաժնում կարդում ենք. առանձնահատուկ ուշադրության կարժանանա Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգի ձևավորման խնդիրը, որի լուծման նպատակով 2013թ. կիրականացվեն սպառողների պաշտպանության պետական վերահսկողության համակարգի կատարելագործման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների պաշտպանության միջոցառումների վերաբերյալ հանրությանն իրազեկման լայնամասշտաբ ծրագրեր՝ էապես բարելավելով ապրանքների անվտանգությանը ներկայացվող պահանջների բավարարումը»: Հիրավի բոլոր ժամանակների և բոլոր երկրների համար ընդունելի, վերին աստիճանի ընդհանուր, ոչինչ չասող, ոչինչ չպարտավորեցնող, գործողության ազդակ չպարունակող բառակոյտ: Կամ 5-րդ էջում կարդում ենք. «Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգա-</p>	<p>նշված դրույթները վերաշարադրելու ուղղությամբ կամ կոնցեպտուալ շարադրման կառուցվածքի առումով պատրաստ ենք համագործակցելու:</p> <p>Ուղերձի տնտեսական քաղաքականության հատվածում ներկայացվում են այն ՀՀ կառավարության որդեգրած գերակայությունները, որոնց իրականացման ուղղությամբ ընդունված են համապատասխան ռազմավարություններ, հայեցակարգեր և ծրագրեր, մասնավորապես՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը (ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N49 արձանագրային որոշում), որի ներքո՝ <ul style="list-style-type: none"> ▪ Դեղագործության և բիոտեխնոլոգիաների 2011-2020թթ. ոլորտային ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, ▪ Կոնյակագործության 2011-2020թթ. ոլորտային ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, ▪ Ծճգրիտ ճարտարագիտության 2011-2020թթ. ոլորտային ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, 2. ՀՀ-ում որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությունը (ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշում), 3. ՀՀ-ԵՄ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունների մեկնարկի ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշում (2011թ. օգոստոսի 10-ի թիվ 763-Ա որոշում),

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ցումը կարևորվում է որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության և մրցունակության բարձրացման գործիք: Այդ նպատակով 2013թ. աշխատանքներ կիրականացվեն ընտրված թիրախային ՏՏ շուկաներում Հայաստանը առաջատար երկիր դարձնելու...» և այլն: Լավ, էլի: Եվ սա ասում է մի կառավարություն, որի օրոք 2011թ. ՏՏ տեխնոլոգիաների զարգացման մակարդակով Հայաստանը 109-րդ տեղում է 138 երկրների մեջ (Վրաստանը 98-րդ, իսկ Ադրբեջանը 70-րդ տեղերում են): Արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական արտադրանքի տեսակարար կշռի ցուցանիշով երկիրը 137 երկրների մեջ կիսում է 98-104-րդ տեղերը: Գյուղատնտեսության բաժնում, օրինակ, կարդում ենք. «ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նպատակադրված է գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացման միջոցով գյուղում ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի (այդպես էլ գրված է) անհատի լիարժեք ինքնադրսևորման համար»: Էներգետիկայի բնագավառում արդեն որերորդ տարին է համակարգում ենք նոր միջուկային էներգաբլոկի կառուցման աշխատանքները: Հաճախ հանդիպում ենք անպատասխանտու հայտարարությունների: Օրինակ, տրանսպորտի և կապի «բնագավառում 2013թ. իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ...»: Հետագա շարադրանքից պարզվում է, որ Հյուսիս-Հարավ երկաթուղու ոչ մի շինարարություն էլ չկա: Այս ոճը պահպանված է ուղերձի առանց բացառության բոլոր ճյուղերի համար:</p>	<p>4. ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ (ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի նիստի N 35 արձանագրային որոշում),</p> <p>Գործարար միջավայրի բարելավման տարեկան ծրագրեր (ՀՀ կառավարության 2008թ. թիվ 775, 2010թ. թիվ 97-Ն և 2010թ. թիվ 1768 որոշումներ:</p> <p>Այսօրվա դրությամբ կատարված են նոր միջուկային էներգաբլոկի նախագծային աշխատանքների համար նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրի իրականացման համար ֆինանսավորման միջոցների ներգրավման նպատակով տարվել են բանակցություններ ՌԴ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի և հնարավոր այլ ներդրողների ու մատակարարների հետ և այդ բանակցությունները ներկայումս շարունակվում են:</p> <p>ՀՀ կառավարության 2013թ. գերակա խնդիրներում ներառված է նոր միջուկային էներգաբլոկի կառուցման համար «Ընտրված հրապարակի անվտանգության գնահատման հաշվետվության» մշակման և այդ հաշվետվության փորձաքննության աշխատանքները: Տարվում են բանակցություններ նշված աշխատանքների ֆինանսավորման համար:</p> <p>2012 թվականին կսկսվի և 2013 թվականին կավարտվի Հյուսիս-Հարավ (Հայաստան Իրան) երկաթուղու իրագործելության ուսումնասիրությունը:</p>
238.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյան	1.7. Բյուջեի մոդելի նկատմամբ էկզոգեն գործոններից մեկը փոխանակարժեքն է: Մերօրյա տնտեսագիտությունը ապացուցում է, որ գլոբալ տնտեսության մեջ, երբ ազգային պահուստները	Պետական բյուջեի օրենքում ներկայացվող փոխարժեքը հաշվարկային մեծություն է: Միջազգային պրակտիկայում լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում փոխար-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
		<p>այլ երկրի արտարժույթով են ու փոխարկելի, սխալ է ազգային արժույթի փոխանակարժեքի ավելի պակաս արժեզրկումը ռեզերվային արժույթի նկատմամբ: Բյուջեի նախագծում դրամի փոխանակարժեքը ընդունված է 408,5՝ վարիացիայի որոշակի թափով: Արտահանման խրախուսման նպատակով առաջարկում ենք փոխանակարժեքը պահել 425-435 միջակայքում: «Կատարվող փոխանցումների ծավալի աճը թույլ է տալիս որպեսզի 2013թ սահմանել փոխանակարժեքի միջակայք:</p>	<p>ժեքի կանխատեսումը ընդունված չէ բյուջեի շրջանակում: Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակի հաշվարկներում կիրառվել են ս.թ նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտարժույթային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով: Նշված փոխարժեքների մեծությունները չեն դիտարկվում, որպես առաջիկա տարվա համար ՀՀ արտարժույթային շուկայում փոխարժեքների կանխատեսումներ, այլ նախատեսված են բացարձակապես ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում բյուջետային տարադրամային մուտքերի և ելքերի մի շարք տեսակների փոխարկման ոլորտում կայուն իրավիճակ ապահովելու (այսինքն, տարվա ընթացքում բյուջետային տարադրամային մուտքերի և ելքերի մի շարք տեսակների փոխարկումները բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված փոխարժեքներով կատարելու) նպատակով ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև հարաբերությունների հստակեցման համար:</p>
239.	<p>«Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>1.8. 2013 թ.-ի տնտեսական քաղաքականությունն առավելապես պետք է լինի ընդլայնողական: Այսինքն պետք է առավելագույնս խրախուսել սպառումն ու սպառողին՝ խրախուսման ձևը անմիջականորեն կապելով առաջարկի, դրա բավարարման ճյուղերի գործունեության հետ: Հիշենք, որ այսօր ամենահրատապ խնդիրն արտագաղթը կանգնեցնելն է: Հատկապես արդյունավետ կարող է լինել սոցիալական ենթակառուցվածքներում (կրթություն, առողջապահություն, գիտություն, մշակույթ և այլն) ծախսերի համեմատաբար արագ աճը: Առանձնակի ուշադրություն դարձնել սոցիալական ծառայությունների արտահանմանը: Այս առումով 2013 թ.-ին սպառման մակարդակի անկումը 0.5%-ով (96.5% 2012թ. 97%-ի համեմատ) շարունակելու կրճատել համախառն պահանջարկի</p>	<p>«2013-ին սպառման մակարդակի անկումը 0.5 տոկոսով (96.5% 2012թվականի, 97%-ի նկատմամբ) շարունակելու կրճատել համախառն պահանջարկի կորը» դիտարկման կապակցությամբ. Պետք է նշել որ սպառումը իրական արտահայտությամբ իրականում աճում է թե՛ 2012 և թե՛ 2013 թվականներին: Բացի դրանից ներդրումների ավելի ցածր մակարդակը ցույց է տալիս ոչ թե որ բիզնեսը զարգացման խթաններ չունի այլ այն որ իրականացվող ներդրումներն ավելի արտադրողական են լինելու և միավոր ներդրման հատուցը ավելի բարձր է լինելու: Այս երևույթը հատկանշական է ետճգնաժամային զարգացումներին: Եթե նախկինում ներդրումներն ուղղվում էին մեծամասամբ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կորը: Սրան զուգահեռ համախառն ներդրումների ավելի ցածր մակարդակը (26.9% 2009 թ.-ի 34.7, 2010 թ.-ի 32.9, 2011 թ.-ի 27.9 և 2012թ.-ի 26.3%-ի նկատմամբ) ցույց է տալիս, որ տնտեսության իրական հատվածում բիզնեսը արտադրության ընդլայնման լուրջ ծրագրեր կամ հնարավորություններ չունի: Դրան գումարած ԿԲ կողմից սահմանած վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքը, դեպոզիտների ու վարկերի բարձր տոկոսները թույլ չեն տա, որպեսյի խնայողությունները վերածվեն ներդրումների: Ակներևաբար 2013 թ.-ին կշարունակվեն խնայողությունների արտահանման միտումները:</p>	<p>բնակարանաշինությանը, ապա այժմ նրանք ուղղվում են առավելապես տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը:</p> <p>Պետք է նկատի ունենալ նաև, որ չի կարելի անընդհատ ընդլայնողական լինել, 2009 թվականից ընդլայնողական քաղաքականություն ենք վարել՝ պարտք վերցնելով: Մակրոռազմավարության տեսանկյունից տնտեսական աճի վերականգնման ժամանակահատվածում պետք է լինել չեզոք:</p> <p>Բացի դրանից այն որ ներդրումների և սպառման մասնաբաժինը ՀՆԱ-ում կրճատվել է, նշանակում է որ զուտ արտահանման մասնաբաժինը, և պահանջարկը արտաքին աշխարհից աճում է: Սա համահունչ է կառավարության կողմից արտահանմանը խթանման ուղղված քաղաքականությանը:</p> <p>Եթե դիտարկենք առևտրային բանկերի կողմից տնտեսության ճյուղերին տրամադրված վարկերը, ապա 2012թ սեպտեմբերի դրությամբ նախորդ տարվա նկատմամբ 30.9 տոկոս աճին ամենամեծ նպաստումն է ունեցել արդյունաբերությանը ուղղված վարկավորման 37.1 տոկոս աճը: Բացի դրանից պետք է նշել որ տնտեսության ավանդների աճը զիջում է վարկավորման աճին կազմելով 37.2 տոկոս: Սա վկայում է այն մասին որ տնտեսության իրական հատվածին ուղղվող վարկավորման աճը չի բավարարվում ներքին խնայողություններով և նույնիսկ միջոցներ են ներգրավվում արտաքին աշխարհից:</p>
240.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>1.9. 2013 թ.-ին և առաջիկա ևս 2-3 տարիներին, մինչև տնտեսության ապամենաշնորհացումն ու օլիգարխիկ կառույցների թուլացումը համախառն պահանջարկի մասսայական խրախուսումը հղի է կոռուպցիոն սկանդալներով. խոշոր բիզնեսին պետական նյութական ու ֆինանսական ռեսուրսներն ավելի հասանելի են: Այս առումով պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացումից պետք է զգուշանալ:</p>	<p>Պետական բյուջեով տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման հիմնական ուղղություններն են հանդիսանում ՓՄՁ ոլորտին աջակցությունը, գյուղատնտեսության ոլորտը, իսկ եկամտային մասով արտոնությունները սահմանված են 300 մլն դրամից ավելի ներդրումային ապրանքների ներմուծման դեպքում: Նշենք, որ արդյունաբերական քաղաքականության մեր կողմից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Առաջարկի խրախուսումն այս պայմաններում արդյունավետ կարող է լինել միայն ՓՄԲ-ում և իննովացիոն ճյուղերում:	ընտրված տարբերակը ոչ թե աշխատում է առանձին ձեռնարկությունների, այլ ձեռնարկությունների ասոցիացիաների և կլաստերների հետ: Այս առումով հնարավոր չարաշահումների մակարդակն ամենացածրն է:
241.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	1.10.Անհասկանալի է գնաճի վրա ճնշումների պարագան: Այստեղ, թվում է, կառավարությունը տուրք է տվել ԿԲ ճնշմանը: Վեջինս էլ իր հերթին փորձում է ցանկացած գնով իրականացնել 2005թ. սահմանադրական փոփոխություններով սխալմամբ ամբողջովին իրեն հասցեագրված գների կայունության գործառույթը: Շատ ցածր գնաճը թույլ չի տալիս իրականացնել ճկուն կառուցվածքային քաղաքականություն, անտեղի արժևորում է (հարաբերականորեն) ազգային արժույթը: Գնաճի միջակայքը (տարեկան միջին գնաճ) հանգիստ կարելի էր սահմանել մինչև 6%:	Գնաճի խելամիտ մակարդակը տարբեր ժամանակներում և տարբեր տնտեսությունների համար կարող է տարբեր լինել: Սովորաբար կենտրոնական բանկերը գնաճի նպատակային արժեքը և կենտրոնական արժեքից շեղման թույլատրելի միջակայքը սահմանավում են ելնելով տնտեսության երկարաժամկետ զարգացման հեռանկարներից: Հայաստանի դեպքում գնաճի նպատակային մակարդակը Կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը: Իսկ սահմանադրական փոփոխություններով ոչ թե ԿԲ-ն է միայն պատասխանատու գնաճի համար, այլ ԿԲ-ն միայն գնաճի համար է պատասխանատու:
242.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	Մաս 2. 2013թ. Պետական բյուջեի եկամուտները 2.1. Պետական բյուջեի դեֆիցիտը ունեցել է հետևյալ էվոլյուցիան. 2011թ. – 2.77%, 2012թ. – 3.14% և 2013թ. – 2.64%: Եթե 2013թ.-ի բյուջեի դեֆիցիտը սահմանենք 2,84% (առաջարկված 2,64%-ից) և համապատասխան ծավալով պարտատոմսեր թողարկենք, ապա լրացուցիչ 9,6 մլրդ դրամ կունենանք:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ պետական բյուջեի մուտքերի մեծացումը պետական արժեթղթերի թողարկման ճանապարհով հակասում է միջնաժամկետ պարտքի կառավարման ռազմավարությանը: Պետական պարտատոմսերի հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը լրացուցիչ 9.6 մլրդ դրամով ավելացնելը կարող է էապես խաթարել պետական պարտատոմսերի շուկայի կոնյուկտուրան, մասնավորապես, այն կարող է բերել տոկոսադրույքների աճին, որն էլ իր հերթին մեծ ռիսկեր կարող է առաջացնել ներքին պետական պարտքի սպասարկման (տոկոսավճարների) ծախսերի տեսանկյունից (այս խնդիրները ներկայացված են ՀՀ 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում և ՀՀ կառավարության պետական պարտքի կառավարման 2013-2015թթ. ռազմավարական ծրագրում):

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
243.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.2. Չնայած «ձեռնարկված» միջոցառումներին բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը 2013 թ.-ին ծրագրված է 22.74% այն դեպքում, երբ 2011 թ.-ին այդ թիվը եղել է 22.77%: Հիրավի, սա մեկ քայլ առաջ 2 քայլ ետ սցենարից է:	Պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունների 2011 թվականի փաստացի և 2013 թվականի համար ծրագրվող ցուցանիշների միջև տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ 2011 թվականին արտաքին աղբյուրներից ստացված պաշտոնական դրամաշնորհների ընդհանուր գումարը, ինչպես նաև դրանց տեսակարար կշիռը պետական բյուջեի եկամուտների ընդհանուր ծավալում էականորեն գերազանցել են 2013 թվականի համար կանխատեսվող համապատասխան ցուցանիշները: Այսպես, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով տվյալ տարվա եկամուտների կազմում պաշտոնական դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 58 մլրդ դրամ, իսկ տեսակարար կշիռը պետական բյուջեի եկամուտների ընդհանուր ծավալում՝ 6.8%՝ 2013 թվականի համար ծրագրավորված համապատասխանաբար շուրջ 16 մլրդ դրամի և 1.6%-ի դիմաց: Անվանական ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ստացված պաշտոնական դրամաշնորհները կազմել են ՀՆԱ-ի 1.5 տոկոսը, այն դեպքում, երբ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով այդ ցուցանիշը կազմում է ՀՆԱ-ի 0.4 տոկոսը: Դրա դիմաց ավելացել է 2013 թվականի համար կանխատեսվող ներքին աղբյուրներից ստացվող պետական բյուջեի եկամուտների ընդհանուր գումարի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 2011 թվականի համապատասխան փաստացի ցուցանիշի համեմատությամբ: Այսպես, եթե 2011 թվականին այն կազմել է 21.2%, ապա 2013 թվականի համար այն ծրագրավորված է 22.4%-ի չափով կամ 1.2 տոկոսային կետով ավելի:
244.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.3. Հարկային և մաքսային համակարգի կարգավորման ու զարգացման հիմնական սկզբունքները պետք է լինեն. ա) հարկման բազայի ընդլայնումը, բ) ստվերի վերացումը, գ)	Հարկային եկամուտների կառուցվածքում խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի տեսակարար կշիռը հաշվարկելիս արտասահմանյան

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ձեռնարկատիրական գործունեության խրախուսումը, ե) հարկային վարչարարության նվազեցումն ու հարկային բեռի հավասարաչափ բաշխումը: Արտասահմանյան մասնագետների գնահատմամբ, այսօրվա վիճակով պետական բյուջեի հարկային եկամուտների սոսկ 32%-ն (առանց արտասահմանյան ձեռնարկությունների) է վճարվում խոշոր ձեռներեցների կողմից, մինչդեռ պետք է լիներ 78-80%-ը: Մեր հաշվարկները նույնպես ցույց են տալիս, որ եթե խոշոր հարկատուների (որոնք ըստ պաշտոնական տվյալների տալիս են հարկային մուտքերի 74%-ը) վճարած հարկերից հանում ենք արտասահմանյան ձեռնարկություններն ու եկամտահարկը, ապա հարկային մուտքերում խոշորի տեսակարար կշիռը կազմում է սոսկ 1/3-ը:</p>	<p>կապիտալով կազմակերպությունների կողմից վճարված հարկերի մեծությունը հաշվի չառնելու տրամաբանությունը անհասկանալի է ու ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն, որ կապիտալի ծագումից անկախ՝ այդ կազմակերպությունները գրանցվել և գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետությունում և համարվում են ռեզիդենտ հարկ վճարողներ (օրինակ՝ հեղահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները):</p> <p>Բացի այդ, ՀՀ-ում խոշոր հարկ վճարողների կողմից ներկայումս վճարվող հարկերը և տուրքերը կազմում են պետական բյուջեի հարկային եկամուտների մոտ 75 %:</p> <p>Ինչ վերաբերում է հարցադրմամբ ներկայացված՝ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվող հարկերի մակարդակի օպտիմալ գնահատականին (78-80%), ապա հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նման գնահատականների վերաբերյալ տեղեկատվության չի տիրապետում:</p>
245.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>2.4. Եկամտահարկի իրական պրոգրեսիվ սանդղակի մտցնելը մեր գնահատումներով կտա 7.5 մլրդ դրամ լրացուցիչ եկամուտ: Նոր սանդղակն այսպիսին է. մինչև 100 հազ. դրամ՝ 24,4%, մինչև 300 հազ. դրամ՝ 24400 + 100 հազ. դրամը գերազանցող գումարի 27%-ը, մինչև 750 հազ դրամ՝ 78400 դրամ + 300 հազ. դրամը գերազանցող գումարի 30%-ը, մինչև 1500 հազ. դրամ՝ 200900 + 750 հազ. դրամը գերազանցող գումարի 33%-ը, մինչև 5 մլն դրամ՝ 448400 դրամ + 1.5 մլն դրամը գերազանցող գումարի 36%-ը և 5 մլն-ը գերազանցող աշխատավարձի դեպքում՝ 1708 հազ. դրամ + 5մլն-ը գերազանցող գումարի 40%-ը: Սրա հետ միասին եկամտահարկի միասնական դրույքի կոնցեպտի պահպանման դեպքում կառավարությունը պետք է լուծի բյուջետենների ու հղիության անաշխատունակության նպաստների պարագայում կորուստների հարցը՝ սրանց հարկման</p>	<p>Գործող օրենսդրությամբ սահմանված՝ եկամտահարկի, ինչպես նաև 2013 թվականի հունվարի 1-ից հետո կիրառվող եկամտային հարկի դրույքաչափերն իրականում պրոգրեսիվ բնույթ ունեն, ինչը նաև նպաստում է որպեսզի պետությունն իրականացնի եկամուտների վերաբաշխման իր գործառույթը:</p> <p>Միաժամանակ, գտնում ենք, որ համակարգային փոփոխությունների կատարման ներկայիս անցումային փուլում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դրույքաչափերի սահմանմանը պետք է անդրադառնալ ոչ միայն պետական բյուջեի հարկային եկամուտների տեսանկյունից, այլ նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ համակարգային</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>պատճառով նոր համակարգի դեպքում մարդիկ կորուստներ են ունենում: Միևնույն ժամանակ մենք առաջարկում ենք վերադառնալ նախկին սանդղակին, ձեռք քաշել միասնական եկամտահարկի գաղափարից: Այս դեպքում մեր կողմից առաջարկված սանդղակը համապատասխան փոփոխությունների պետք է ենթարկվի:</p>	<p>փոփոխությունները չպետք է ուղեկցվեն հարկային բեռի բարձրացմամբ (բացառությամբ ամսական կտրվածքով 2 մլն. դրամից ավելի եկամուտ ստացողների հարկային բեռի):</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դրույքաչափերի առավել պրոգրեսիվացման հարցը պատրաստ ենք քննարկել համակարգային բարեփոխումների ներկայիս անցումային փուլի ավարտից հետո:</p>
246.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>2.5. Հարկ է նշել, որ կառավարության կողմից ռոյալթիի ներմուծումը (տարբերակ, որը մենք քննադատել էինք) ոչ մի լավ բանի չի հանգեցրել: Այսպես, 2013 թ.-ին բնապահպանական և բնօգտագործման վճարների ձևով նախատեսվում է գանձել 23 մլրդ դրամ, որը ընդամենը 4,5 մլրդ դրամով է ավել 2011 թ.-ի թվից: Առաջարկում ենք 2 փուլով լուծել ռոյալթի կոչվածի հարցը: Նախ, 2013թ. այն տարածում ենք նաև ոչ մետաղական հանքանյութերի նկատմամբ, ինչպես նաև 2 անգամ ավելացնում ենք պետության մասնաբաժինը: Սա 2013 թ.-ին բյուջեին լրացուցիչ կտա շուրջ 12 մլրդ դրամ: 2014թ. սկսած անցնել հանքանյութի ուղղակի վաճառքի՝ ելնելով արդյունահանման ծավալներից և հանքանյութի միջազգային գնից (կիրառելով վերահաշվարկի գործակից): Ակնկալվող արդյունքը կարող է լինել մինչև 120 մլրդ դրամ:</p>	<p>«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն, ռոյալթիի հաշվարկման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր տարին: Ռոյալթի վճարողները յուրաքանչյուր հաշվետու տարվա համար (առաջին անգամ 2012 թվականի համար) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ (առաջին անգամ մինչև 2013 թվականի ապրիլի 15-ը) ռոյալթիների հաշվարկ-հաշվետվությունները պետք է ներկայացնեն հարկային մարմին: Միաժամանակ, 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների անցումային դրույթների համաձայն, ռոյալթի վճարողները նախքան 2012 թվականի համար հաշվարկված ռոյալթիների վճարումը, 2012 թվականի յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակի երրորդ ամսվա 15-ը ներառյալ կատարում են ռոյալթիի կանխավճարային վճարումներ՝ 2011 թվականի ընթացքում մետաղական օգտակար հանածոների համար հաշվարկված բնօգտագործման վճարների և ռոյալթիների հանրագումարի մեկ երրորդի չափով: Հետևաբար, 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը 2012 թվականի ընթացքում վճարման ենթակա ռոյալթիների կանխավճարների վրա որևէ ազդեցություն ունենալ չի կարող, և ռոյալթիների հաշվարկման նոր մոտեցումը կկիրառվի 2012 թվականի արդյունքներով</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>2013 թվականի ընթացքում վճարվող ռոյալթիների մեծության վրա: Այսինքն, ռոյալթիների հաշվարկման նոր համակարգի արդյունավետության և պետական բյուջեի եկամուտների վրա դրա ազդեցության մասին կարելի է խոսել 2012 թվականի հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնելուց և ամփոփելուց հետո միայն:</p> <p>Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն, 2012 թվականի հունվարի 1-ից ռոյալթի վճարողներ են համարվում ոչ միայն ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործողները, այլև մետաղի խտանյութ արտադրողները, որոնք մինչ այդ չեն հանդիսացել ոչ բնօգտագործման վճար և ոչ էլ ռոյալթի վճարողներ:</p> <p>Ընդ որում, մետաղական օգտակար հանածոների համար ռոյալթիի չափի որոշման մեթոդաբանությունը և ռոյալթիի դրույքաչափը սահմանվել են՝ հաշվի առնելով ինչպես միջազգային պրակտիկայում կիրառվող դրույքաչափերը, այնպես էլ այն հանգամանքը, որ ռոյալթիի դրույքաչափի չափից ավելի բարձր սահմանումը կխոչընդոտի հայաստանյան հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների կատարմանը:</p>
247.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.6.Անհապաղ պետք է սկսել 18 տարին լրացած բոլոր քաղաքացիների եկամուտների և գույքի պաշտոնական հայտարարագրումը: Խնդիրը պետք է լուծել մինչև 5 տարի ժամանակահատվածում: 2013թ. հանմընդհանուր հայտարարագրման խնդիրը լուծել 50 և ավելի տարիք ունեցող բոլոր քաղաքացիների համար:	<p>Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է միայն պաշտոնատար անձանց մասով:</p> <p>Ինչ վերաբերում է նշյալ համակարգի կատարելագործմանն ու կիրառության շրջանակի ընդլայնմանը, ապա հայտնում ենք, որ սկզբունքորեն դեմ չենք ներկայացված առաջարկին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկահավաքման խնդրի լուծման և կոռուպցիոն երեւույթների բացահայտման դեմ պայքարի միջոցառումների համատեքստում հայտարարագրման</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>համակարգերի կիրառությունն արդյունավետ է միայն այն դեպքերում, երբ հայտարարագրումն իրականացվում է համատարած՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման համակարգի համատարած կիրառության խնդիրը կարելի է քննարկել միայն հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառությանն անցնելուց հետո, երբ յուրաքանչյուր ֆիզիկական անձ հնարավորություն կունենա առանց հարկային մարմին այցելության կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել իր հայտարարագիրը:</p> <p>Ընդ որում, հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի կիրառությունը հնարավորություն կընձեռի, որպեսզի հայտարարագրման ենթակա տեղեկատվությունը ամբողջ ծավալով մշակվի ու վերլուծության ենթարկվի, առանց որի հայտարարագրման համակարգի ներդրումը կլինի ուղղակի ինքնանպատակ:</p>
248.	«Կ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.7. Պետք է բարձրացվեն օղու, լիկյորների վրա դրվող ակցիզները, իսկ գինու ակցիզն իջեցնել: Գինենյութի վրա դրված ակցիզը պետք է հաշվանցել ավելացված արժեքի նման: Մյուս ակցիզային հարկերը պետք է խմբագրել այն հաշվով, որպեսզի ներքին արտադրողները չգտնվեն ավելի վատ պայմաններում, քան ներկրողները: Միավոր բացարձակ լիտրի հաշվարկով գինու և գինենյութի ակցիզը մի քանի անգամ ցածր պետք է լինի սպիրտային խմիչքների ակցիզից:	<p>Ներկայացված առաջարկությունները համահունչ են ակցիզային հարկի բնագավառում «Կ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության ուղղություններին:</p> <p>Մասնավորապես, արդեն ԱԺ է ուղարկվել համապատասխան օրենսդրական նախագիծ, որով առաջարկվում է իջեցնել պտղային, հատապտղային և մրգային գինիների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը:</p> <p>ԻՆչ վերաբերում է օղու համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերին, ապա հայտնում ենք, որ ակցիզային հարկով հարկման ենթակա այլ ալկոհոլային խմիչքների համեմատությամբ, օղու համար սահմանված է ակցիզային հարկի ավելի բարձր դրույքաչափ: Ավելին, օղու մասով ներկայումս կիրառվում է նաև օտարման նվազագույն թույլատրելի գին՝ կառավարելու համար</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>օտարվող ապրանքի թերհայտարարագրման միջոցով ակցիզային հարկից խուսափելու ռիսկերը:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ գործող օրենսդրությանը նախատեսված է ակցիզային հարկի գծով հաշվանցումներ կատարելու հնարավորություն: Ընդ որում, պտղային և հատապտղային գինեջուրը ակցիզային հարկի հարկման օբյեկտ չեն:</p> <p>Ինչ վերաբերում է տեղական արտադրողների ու ներմուծողների համար սահմանված հարկային բեռի հարաբերակցությանը, ապա հայտնում ենք, որ ակցիզային հարկը հաշվարկվում է՝ տեղական արտադրության ապրանքների մասով՝ բացթողնման գնից, իսկ ներմուծվող ապրանքների մասով՝ մաքսային արժեքից:</p> <p>Հետևաբար, հաշվի առնելով այն, որ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքի բացթողնման գինը ավելի ցածր է, քան նույն ապրանքի ներմուծման դեպքում մաքսային արժեքը, ստացվում է, որ տեղական արտադրության ապրանքների համար սահմանված ակցիզային հարկի բեռը ավելի ցածր է նույն ապրանքների ներմուծման համար սահմանված ակցիզային հարկի բեռից:</p>
249.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>2.8. Էականորեն պետք է բարձրացնել գույքահարկի դերը՝ այն տարբերակելով ըստ գույքի չափերի և գույքի անուշխանության (տարածքային գործոն): Սրանով իսկ ևս մեկ լուրջ քայլ կկատարվի հարկային բեռը խոշոր ձեռներեցների և մանր, փոքր ու միջին բիզնեսի միջև արդարացիորեն բաշխելու ուղղությամբ: Մասնավորապես, հարկման բազայի 150 մլն դրամը գերազանցող մասի համար սահմանել 1,5, իսկ 500 մլն դրամը գերազանցող մասի համար սահմանել 2%-ի մուծումներ: Սա թույլ կտա բյուջե լրացուցիչ ներառնել շուրջ 5 մլրդ դրամ:</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի միջոցառումների ծրագրում արդեն իսկ ներառվել է «Գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները» հայեցակարգի մշակումը, որի նպատակն է գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացումը, համակարգի կատարելագործումը:</p> <p>Հարկ ենք համարում նշել, որ ներկայումս գույքահարկը հաշվարկվում է՝ ելնելով գույքի կադաստրային արժեքից, գույքի ծավալից, գույքի անուշխանության գործակցից և մի շարք այլ գործակիցներից:</p> <p>Միաժամանակ, հարկ է նկատել, որ գույքահարկը համա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
250.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>2.9. Պետք է նորմալ կազմակերպել շահութահարկի գանձման աշխատանքները: Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե 2013 թ.-ին ՀՆԱ-ն լինելու 4,5 տրլն դրամ, ապա տնտեսությունում ստացվող համախառն շահույթը կազմելու է 1,8-1,9 տրլն դրամ: Այս պարագայում նկատի ունենալով որոշ ոլորտներում շահութահարկի բացակայությունը, ստացվում է որ շահութահարկը պետք է կազմի առնվազն 250 մլրդ դրամ: Այսօր փաստացի թիվը 2 անգամ ցածր է (2013թ. – 127,1 մլրդ դրամ): Ակնհայտ է, որ այս 123 մլրդ դրամը այն գումարն է, որը խոշոր (օլիգարխիկ) ձեռնարկատերերը բյուջե չեն մուծում: Համապատասխան միջոցների ձեռնարկման և քաղաքական կամքի դրսևորման դեպքում արդեն 2013 թ.-ին կարելի կլիներ ավելացնել շահութահարկի գծով մուծումները 30 մլրդ դրամով, իսկ 2014 թ.-ին ստանալ լրացուցիչ ևս 120 մլրդ դրամ շահութահարկ:</p>	<p>յանքների բյուջե վճարվող հարկ է:</p> <p>Առաջարկությունը չի ընդունվում:</p> <p>Առաջարկության հիմքում դրված է այն ենթադրությունը, որ ընդհանուր տնտեսության շահութաբերությունը շուրջ 40-45 տոկոս է, այն դեպքում, երբ, օրինակ, առևտրի ոլորտում միջին շահութաբերությունը չի գերազանցում 10-12 տոկոսը: ՀՆԱ-ի կառուցվածքում ձևավորվող շահույթի հիման վրա հաշվարկվող շահութաբերությունը շատ ավելի ցածր է, ինչն էլ նշանակում է, որ շահութահարկի գծով հնարավոր ավելացման գումարի՝ Ձեր կողմից գնահատված մեծությունը իրատեսական չէ:</p> <p>ՀՆԱ-ի կառուցվածքում տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ հոդվածը շահութահարկի հարկման բազայից տարբերվում է ինչպես շահութահարկով չհարկվող ճյուղերում ստեղծված շահույթով, այնպես էլ տնային տնտեսությունների զուտ խառը եկամուտներով: Հարկ է հաշվի առնել նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ հարկման նպատակով հարկվող շահույթի հաշվարկման առանձնահատկությունների ազդեցությունը:</p> <p>Այնուհանդերձ, տեսակետը, որի համաձայն, առկա է շահութահարկի տեսքով պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման որոշակի ռեզերվ, ընդունելի է, ինչի մասին վկայում է ի հաշիվ հարկային վարչարարական միջոցառումների լրացուցիչ մոտեցրերի նախատեսումը:</p>
251.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>2.10. Մենաշնորհի ու շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների համար սահմանել լրացուցիչ շահութահարկ՝ մոնոպոլ շահույթի 50%-ի չափով: Այս միջոցառման ներդրման հետևանքում կարելի է 2013 թ.-ին լրացուցիչ ստանալ առնվազն 10, իսկ 2014 թ.-ին 25 մլրդ դրամ:</p>	<p>Նախ անհասկանալի է «մոնոպոլ շահույթ» հասկացությունը: Արդյո՞ք խոսքը ոչ բնական մենաշնորհների մասին է: Եթե այդպես է, ապա մեր ունեցած տեղեկատվությամբ, աշխարհում հարկման նման փորձ չկա:</p> <p>Բացի այդ, գտնում ենք, որ մենաշնորհային շահույթի հարկումը ենթադրում է բարդ հարկային վարչարարություն, ինչը նաև նշանակում է, որ կիրառական հարթության վրա այդ մոտեցման արդյունավետությունը շատ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ցածր կլինի: Ի վերջո մենաշնորհային հատկանիշներով բնութագրվող տնտեսավարող սուբյեկտները կարող են շատ արագ ձևականորեն բաժանվել մի քանի տնտեսավարող սուբյեկտների՝ դրանով իսկ խուսափելով շահութահարկի բարձր դրույքաչափով հարկումից:</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ քաղաքականության ու վարչարարական լուծումների արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար է կարգավորել ըստ հակամենաշնորհային օրենսդրությամբ, այլ ոչ թե հարկային քաղաքականությամբ:</p>
252.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.11. Մեկընդմիջտ պետք է լուծել ԱԱՀ վերադարձի խնդիրը հանրապետությունից մեկնող զբոսաշրջիկների, գործարարների, այլ ոչ ռեզիդենտների համար: ԱԱՀ-ի վերադարձի բացակայությունը և ավիատոմսերի բարձր գները զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են: Այս փոփոխությունները բյուջեի եկամուտները կարող են պակասեցնել մինչև 5 մլրդ դրամով:	<p>Հանրապետության տարածքում ձեռք բերվող և արտահանվող ապրանքների մասով ԱԱՀ-ի վերադարձման համակարգի գործարկման ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ են կատարվում: Ընդ որում, գործարար շրջանակները նույնպես հետաքրքրված են նշյալ համակարգի ներդրմամբ և պատրաստակամություն են հայտնել՝ ներգրավվելու անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման գործընթացներում:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ նշյալ համակարգի ներդրումը սկզբնական շրջանում ծախսատար կլինի, սակայն ակնկալում ենք, որ դրա ներդրումից ստացվող լրացուցիչ օգուտները կփոխհատուցեն կատարվող ծախսերը:</p>
253.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.12. Պետք է շեշտակիորեն կրճատել գործունեության թույլտվության գծով տրվող լիցենզիաների քանակը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն 2013 թ.-ին գործող շուրջ 100 լիցենզիաներից կարելի է թողել կեսը, իսկ 2014 թ.-ին կրճատել ևս 1/3-ով: Ի՞նչի համար են, օրինակ, տաքսի վարելու և կադաստրում չափագրում իրականացնելու համար լիցենզիաները: Այս փոփոխությունները բյուջեի եկամուտները կարող են պակասեցնել մինչև 3,5 մլրդ դրամով:	<p>Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների համատեքստում վերջին տարիներին արդեն իսկ բավականաչափ լիցենզիաներ կրճատվել են, իսկ որոշների մասով պարզեցվել են ընթացակարգերը: Այս առումով, լիցենզիաների ոլորտում իրականացվող քաղաքականությունն արդեն իսկ համահունչ է ներկայացված առաջարկությանը:</p> <p>Միաժամանակ, հայտնում ենք, որ կան գործունեության այնպիսի ոլորտներ, որոնց մասով լիցենզավորման</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>պահանջի կիրառությունը, այնուամենայնիվ արդարացված է: Ընդ, որում ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել առաջիկայում անդրադառնալ ՀՀ պետական մարմինների կողմից տրվող թույլտվությունների և հավաստումների կրճատմանը և ընթացակարգերի պարզեցմանը:</p>
254.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>2.13.Բոլոր համայնքների սեփական եկամուտները 26.2 մլրդ դրամ են: Քանի որ այդ միջոցները բավարար չեն պետական բյուջեից առ համայնքներ նախատեսված է դոտացիա՝ 75 մլրդ դրամի չափով: Այսինքն, միջին հաշվով համայնքները իրենց կողմից տնօրինվող միջոցների 3/4-ը ստանում են ֆինանսների նախարարից: Այս պայմաններում հասկանալի է դառնում կառավարության իրական դեմքը՝ համայնքները միշտ պետք է տնտեսապես կախված լինեն կենտրոնից: Եվ ուրեմն տեղական ինքնակառավարումը Հայաստանում ֆիկցիա է, քանզի միջոցների մեծ մասը տրամադրում է կենտրոնը: Մենք գտնում ենք, սա անթույլատրելի է: Այս բյուջեով ինչպես և նախկինում սպանվում է տեղական ինքնակառավարումը: Հարկավոր է, որպեսզի ուղղակի հարկերը ևս (եկամտահարկ, շահութահարկ) ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվեն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ տնտեսավարող (կամ հարկվող) սուբյեկտի գրանցման հասցեով: Առաջարկում ենք, 2013թ. սկսած տեղական ինքնակառավարման տրամադրության տակ թողնել եկամտահարկի և շահութահարկի 25%-ը: Գույքահարկի և հողի հարկի գանձման պրակտիկան ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինները, Երևանի քաղաքապետարանը շատ ավելի լավ են զբաղվում այս «մանր» հարցերով, քան ՊԵԿ-ի աշխատակիցները: Իսկապես, ի՞նչ կարիք կա փողերը շրջաններից բերել Երևան և հետո ետ տանել շրջաններ: Չ՞է որ դա սպանել է տեղական ինքնակառավարման ինստիտուտը: Չ՞է որ մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը վարչապետի աշխատակազմում և ֆինանսների նախարարությունում:</p>	<p>Բոլոր համայնքների 2013 թվականի ծախսերի ընդհանուր ծավալը կանխատեսվում է շուրջ 102 մլրդ դրամի չափով: Դրանից պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունների կատարման ծախսերը կկազմեն շուրջ 28 մլրդ դրամ: Համայնքների պարտադիր լիազորությունների գծով ծախսերը կկազմեն շուրջ 74 մլրդ դրամ, որի դիմաց համայնքների սեփական եկամուտները կանխատեսվում են շուրջ 30 մլրդ դրամ: Այսպիսով, համայնքների պարտադիր լիազորությունների գծով ծախսերի շուրջ 40%-ը կֆինանսավորվի համայնքների սեփական եկամուտների հաշվին: Մյուս կողմից, հաշվի առնելով հանրապետությունում ոչ խոշոր համայնքների անչափ մեծ թիվը և դրանով պայմանավորված նրանցում տեղական ինքնակառավարման խնդիրների լուծման բնագավառում առաջացող զանազան բարդություները, գտնում ենք, որ համայնքների ֆինանսական բազայի ամրապնդման հարցը նպատակահարմար է դիտարկել համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման գործընթացների շրջանակներում:</p> <p>Ինչ վերաբերում է եկամտահարկի և շահութահարկի 25%-ը 2013թ. սկսած տեղական ինքնակառավարման տրամադրության տակ թողնելու հարցին, ապա նման մասհանումների իրականացումը ներկայումս գտնում ենք ոչ նպատակահարմար, հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ հա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>մայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամա- չափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայման- ներում մասհանումների համակարգը միտված կլինի սա- կավաթիվ համայնքների (հիմնականում Երևանի) ֆինան- սական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարու- թյան աստիճանը:</p> <p>Էականորեն կոժվարացնի և անարդյունավետ կդարձ- նի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկա- մուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատ- կերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկ- նում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվա- կաններին օրենքի պահանջի համապատասխան հա- մայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմ- նախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումնե- րի իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատաս- խան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարու- մը 2000 թվականից դադարեցվեց:</p> <p>Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև հա- մայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտային հարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահար- մար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հե- տո:</p>
255.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.14. Տնտեսվարող որևէ սուբյեկտ (հիմնադրամներ, կրոնական կազմակերպություններ, ամեն տեսակ բարեգործություն) հար-	Հասարակական, կրոնական կազմակերպությունների կամ հիմնադրամների հարկման մոտեցումները, կարծում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կային արտոնություն չպետք է ունենա: Սրա բացառումը թույլ կտա 2013 թ.-ին մոբիլիզացնել մինչև 5, իսկ 2014 թ.-ին՝ 20 մլրդ դրամ:	ենք, պետք է քննարկել ոչ այնքան հարկային քաղաքականության, որքան քաղաքացիական հասարակության ձևավորմանն աջակցության համատեքստում: Այս իմաստով, գտնում ենք, որ քանի դեռ քաղաքացիական հասարակությունը պահանջում է, որ նշյալ կազմակերպությունների նկատմամբ կիրառվեն հարկման տարբերակված մոտեցումներ, վերջիններիս կիրառությունը հիմնավոր է:
256.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.15. Պետք է բացառել ոչ պետական լոտոների, վիճակախաղերի, զառերի գոյությունը: Նման ինստիտուտների շահագործման բացառիկ իրավունքը պետք է տրվի ՀՀ Ֆինանսների նախարարությանը: Գործող տոտալիզատորները, խաղային (մշակութային) դրույքներ կատարելու հաստատությունները պետք է գործեն պետության ներկայացուցչի հսկողության տակ: Բոլոր խաղատներում և նմանատիպ ձեռնարկներում պետությունը պետք է ունենա իր ներկայացուցիչը: Խաղատների նկատմամբ պետական հսկողության սահմանումը թույլ կտա լրացուցիչ հավաքագրել 6 մլրդ դրամ:	Անհասկանալի է այն մոտեցումը, որ մասնավոր հատվածի կազմակերպությունները չպետք է ներգրավված լինեն լոտոների, տոտալիզատորների կամ խաղատների գործունեության ոլորտում: Եթե խնդիրը բավարար վերահսկողության ապահովումն է, ապա գործունեության նշյալ տեսակները նախ ենթակա են լիցենզավորման և բացի այդ, լիազոր մարմինը մշտական հսկողություն է սահմանում նշյալ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:
257.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.16. Բյուջեի եկամուտների աճի լուրջ աղբյուր կարող են լինել ԿԲ-ի գործունեության կանոնակարգումը, այդ հիմնարկի կամայականությունների դեմն առնելը: Դժբախտաբար այդ կամայականությունների մի մասը օրինականացված է անհասկանալի օրենքներով ու կանոնակարգերով: Այսպես, 2013 թ.-ին ՀՀ պետական պարտքը սպասարկելու ու մարելու համար ծախսելու է 418,6 մլն դոլար: Դա 1,7 անգամ ավել է, քան 2012 թ.-ին: Ընդ որում այս գումարի մոտ կեսը (195 մլն դոլարը) պետք է ծախսի ԿԲ-ը: Ըստ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի ԿԲ-ն վերադարձնում է այն միջոցները, որոնք վերցրել է 2008-2009թթ. և որոնք մսխվել են 2008 թ.-ի աշնանը և 2009 թ.-ի առաջին 2 ամիսներին դրամի փոխանակարժեքը պահպանելու համար: Ի վերջո փոխանակարժեքը իջավ 25%-ով: Հիմա ո՞վ պետք է պատասխան տա այս 195 մլն դոլարի մասով: Այս միջոցները լիովի հերիք էին կենսաթոշակները 1/3-ով բարձրացնելու համար:	Նախևառաջ նշենք, որ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 34-րդ հոդվածով արգելված է Կենտրոնական բանկի կողմից Կառավարության ֆինանսավորումը, որից բխում է, որ ԿԲ-ն իր կողմից ներգրաված արտաքին պարտքային միջոցները ոչ մի կերպ չի կարող փոխանցել Կառավարությանը: Նշենք նաև, որ պարտքի ներգրավումը կամ վերադարձը ոչ մի կերպ չի ազդում ԿԲ շահույթի վրա նույնպես (ԿԲ շահույթի վրա ազդում է միայն տոկոսավճարների մարումը, որը 2013 թվականին կկազմի ընդամենը 3.7 մլն ՀՓԻ, սակայն այն պետք է համեմատվի նաև համապատասխան պահուստներից ստացած եկամուտների հետ): Այդ իսկ պատճառով ԿԲ կողմից պարտք ներգրավելու կամ պարտքը չմարելու միջոցով հնարավոր չէ միջոցներ փոխանցել Կառավարությունը և բարձրացնել կենսաթոշակները: ՀՀ ֆինանսների նախարար պրն Վ. Գաբրիելյանը նշել է,

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>որ ճգնաժամի ժամանակ միջոցները ստացվել են 2009 թվականին, բնականաբար դրանք որևէ կապ չունեն ֆինանսական կայունության նպատակով 2008-2009թ.-ի սկզբի թվականների ծախսումների հետ:</p> <p>Կենտրոնական բանկը Արժույթի միջազգային հիմնադրամից վարկեր է ստանում սկսած 1994 թվականի 4-րդ եռամսյակից: ԿԲ-ների համար արտաքին պարտավորություններ ունենալը խելամիտ է, հատկապես, որ ՀՀ դեպքում դրանք երբևիցե մարելու խնդիր չի կարող առաջանալ: ԿԲ ակտիվները մի քանի անգամ գերազանցում են ԿԲ պարտավորությունները: Ջարգացած երկրների կենտրոնական բանկերը նույնպես միմյանց նկատմամբ ունենում են պարտավորություններ սվոփ գծերի տեսքով՝ արժույթային շուկաներում կայունություն ապահովելու նպատակով: Քանի որ դրամը միջազգային փոխարկելի արժույթ չէ, այդ ստաբիլիզացիոն միջոցները ԿԲ-ն ստանում է ԱՄՀ-ից ծրագրային վարկերի միջոցով: ԱՄՀ-ն, որպես երկրների վերջին ատյանի վարկատու, որպես կանոն, բացի կենտրոնական բանկերից այլ պետական մարմինների վարկեր չի տալիս և եթե Հայաստանը ունի ծրագիր ԱՄՀ հետ, ապա բնական է, որ պետք է ունենանա պարտավորություն ԱՄՀ նկատմամբ: Նշենք նաև, որ ԱՄՀ կողմից ստացվող բոլոր վարկերը արտոնյալ են և առանձնանում են տոկոսավճարների ցածր մակարդակով:</p>
258.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.17.Բացի այդ մենք առաջարկում ենք ԿԲ-ում թույլ չտալ աշխատակիցների թվաքանակի աճ, ընդհակառակը կրճատել աշխատողների թվաքանակը 1/3-ով, ԿԲ-ից հանել ապահովագրական գործառույթների ու ֆինանսական շուկայի (բացի բանկերից) վերահսկողության գործառույթները, տարանջատել բանկային գործունեության կարգավորումը և վերահսկողությունը (վերահսկողության գործառույթները տալ ավանդների երաշխավորման հիմնադրամին՝ վերջինս փոխանցելով ֆինանսիս ենթա-	Ֆինանսական համակարգի վերահսկողության մի մասի առանձնացման առաջարկը չի համապատասխանում ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության արդի զարգացումներին: Հաշվի առնելով այն, որ ֆինանսական համակարգի տարբեր հատվածները սերտ փոխկապված են և մի հատվածում ռիսկերը կարող են փոխանցվել այլ հատված՝ ֆինանսական համակարգի ռիսկերի վերահսկելիությունը առավելագույնի հասցնելու

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կայությանը), ԿԲ-ում առանձնացնել նախագահի և գործադիր տնօրենի հաստիքները, 2 անգամ իջեցնել ԿԲ սոցիալական ապահովության ծախսերը (200 մլն դրամի տնտեսում), 280 մլն դրամով կրճատել գործուղման ծախսերը, 20 մլն-ով կրճատել ներկայացուցչական ծախսերը, 30 մլն-ով ծառայողական փոխադրամիջոցների ծախսերը (օրինակ, ԿԲ-ում այս տիպի ծախսերը 2013 թ.-ին 2012 թ.-ի համեմատ ավելացել են 16% այն դեպքում, որ ըստ կառավարության նախարարությունների համանման ծախսերը կամ չեն ավելացվել կամ պակասել են), 1.37 մլրդ դրամով պակասեցնել համակարգչային տեխնիկայի ձեռք բերման ծախսերը (նեղ օրի ենք, այս ծախսերը կարելի է 2013 թ.-ին չանել, կառավարությունը ո՞նց է յոլա գնում), 136 մլն դրամով ցանցային սարքավորումների համար նախատեսված ծախսերը, շուրջ 10 մլրդ դրամով կրճատել շենքերի ու շինությունների կառուցման ծախսերը (թողնել միմիայն վերանորոգման ծախսերը) և 3 մլրդ դրամով կրճատել «Ազգային հիպոթեքային ընկերության» կապիտալում ներդրումները: Նշված միջոցառումներից ստացված 15036 մլն դրամը ձևակերպել ԿԲ շահույթ և փոխանցել ՀՀ պետական բյուջե: Այս բոլոր միջոցները պետական բյուջեում իրենց հերթին ուղղել սոցիալական ոլորտին՝ կենսաթոշակներին:</p>	<p>համար նպատակահարմար է ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցների կարգավորման և վերահսկման գործառնությունները վերապահել մեկ մարմնի: Վերջինս իր արդյունավետությունն ապացուցեց հենց վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ, որի հետևանքով մի շարք երկրներ՝ ներառյալ զարգացած, զարգացող և ԱՊՀ երկրներ, որդեգրեցին Կենտրոնական բանկի ներքո միասնական վերահսկողության մոդելին անցման գործընթացը:</p> <p>Ինչ վերաբերում է վերահսկողության մի մասի փոխանցման արդյունքում ծախսերի կրճատմանը, ապա դա տեղի չի ունենա, քանի որ նման ծախսերը (աշխատավարձ, վերապատրաստումներ) անկախ ամեն ինչից պետք է իրականացվեն, եթե ոչ կենտրոնական բանկի, ապա ՀՀ բյուջեի հաշվին: Կենտրոնական բանկում նշված գործառնությունները օբյեկտիվորեն և առանց կոռուպցիոն ռիսկերի իրականացվում են նաև շնորհիվ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի գ ենթակետի, որով սահմանված է, որ ԿԲ աշխատակիցների աշխատավարձը չի կարող ցածր լինել բանկային համակարգի միջին աշխատավարձից:</p> <p>Ինչ վերաբերում է ծախսերի ընդհանուր կրճատմանը, ապա պետք է ասել, որ ՀՀ ԿԲ-ն, հաշվի առնելով երկրի տնտեսական վիճակը, վերջին տարիներին խուսափել է ծախսերի ավելացումից: 2013 թվականին նույնպես ծախսերի ընդհանուր ավելացում չի նախատեսվել՝ որոշ հոդվածներ ավելացվել են մյուսների խնայողության հաշվին. չնայած «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի գ ենթակետի պահանջին, ԿԲ-ը սահմանել է բանկային համակարգի միջինից շատ ավելի ցածր աշխատավարձ:</p> <p>1. Հարցադրման մեջ նշված սոցիալական ծախսերի կրճատման վերաբերյալ հայտնում ենք՝ սոցիալական</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ապահովության ծախսերի սահմանման համար հիմք է ընդունվել միջազգային փորձը, ընդ որում այդ ծախսերը հնարավորություն են ընձեռնում խուսափել աշխատավարձի ծախսերի ավելացումից՝ ՀՀ կենտրոնական բանկի համար ապահովվելով շատ ավելի մեծ եկամուտ: Սոցիալական ապահովության գումարները չեն տրամադրվում աշխատակիցներին, այլ ուղղվում են այնպիսի սոցիալապես կարևոր ծառայությունների ձեռք բերմանը, ինչպիսիք են՝ աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների առողջության ապահովագրությունը, հանգստի կազմակերպումը, աշխատակիցների և նրանց երեխաների կրթությունը, բնակարանային և ավտոապահովագրությունը: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի փորձը ընդունելով, սոցիալական փաթեթ է սահմանել նաև ՀՀ կառավարությունը: Նշված ծախսերը լուրջ խթան են տնտեսության մեջ ծառայության ոլորտի զարգացման համար:</p> <p>2. Կենտրոնական բանկը կարևորում է աշխատակիցների մասնագիտական զարգացումը, ֆինանսական ոլորտում կրթված մասնագետներ ունենալը: Նաև անդամակցելով որոշակի միջազգային կառույցներին (Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ կոմիտե, ֆինանսական հետախուզության մարմինների Էզմոնտ խումբ, ԱՄՀ, ՀԲ,) և լինելով ԱՊՀ-ի և ԵԱՏՀ-ի անդամ պետությունների արժուքային, ապահովագրության և արժեթղթերի շուկայի կարգավորման պետական մարմինների խորհրդի անդամ, Կենտրոնական բանկն ուղղակի պարտավորություններ ունի ներկայացուցչություն ապահովել վերոնշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպվելիք համաժողովներին, տարեկան հանդիպումներին: Նշված խնդիրների համար էլ պլանավորվել են գործուղման ծախսերը: Այս ծախսերը վերջին 3 տարիներին չեն ավելացվել, իսկ դրանց կրճատումը կարող է խաթարել ԿԲ ծրագրերի կատարումը և վնասել Հայաստանի Հանրապետության</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>հեղինակությանը միջազգային կառույցներում:</p> <p>3. Ներկայացուցչական ծախսերի կրճատման հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այս ծախսերը նույնպես վերջին 3 տարիներին չեն ավելացվել:</p> <p>Կենտրոնական բանկն իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերը միջազգային ֆինանսական կազմակերպություններում, միջազգային եւ օտարերկրյա բանկերում: Համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումների և բանակցությունների նպատակով նախատեսվում են նաև միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր: Ձևավորված միջազգային համագործակցության պահպանման և հետագա զարգացման համար նախատեսվել են ներկայացուցչական բնույթի ծախսեր, որոնց կրճատումը կարող է խաթարել արդեն իսկ կայացած հարաբերությունները:</p> <p>4. Ծառայողական փոխադրամիջոցների ծախսերի ավելացումը պայմանավորված է Երևանից Դիլիջանի «Ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման համալիր» աշխատակիցների տեղափոխման ու շաբաթվա վերջում Երևան վերադարձմամբ պայմանավորված աշտոնեքենաների վազքի ավելացմամբ և նախորդ տարվա նկատմամբ վառելիքի գների աճով: Ընդ որում, ծախսի ավելացումը կատարվել է վարչական այլ ծախսերի կրճատման հաշվին, իսկ անհրաժեշտությունը պայմանավորված է Դիլիջանի տարածաշրջանային ուսումնահետազոտական կենտրոնի գործարկմամբ:</p> <p>5. ԿԲ-ի նախատեսած կապիտալ ներդրումների ծրագրի կրճատման հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկի կապիտալ ներդրումները խթանում են Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումը: Ներկայացված փաստարկը թե կա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>պիտալ ներդրումների կրճատումից գոյացած միջոցները կարող են ուղղվել պետական բյուջե չի համապատասխանում իրականությանը, քանի որ կապիտալ ներդրումները իրականացվում են էմիսիայի հաշվին և ԿԲ շահույթի վրա որևէ ազդեցություն չունեն: Հետևաբար դրանց կրճատումից չի կարող որևէ եկամուտ գոյանալ, իսկ պետական բյուջե մասհանում կատարելու մասին ընհանրապես խոսք գնալ չի կարող:</p> <p>Անդրադառնալով կոնկրետ ներդրումներին՝ նշենք, որ Դիլիջանի տարածաշրջանային ուսումնահետազոտական կենտրոնի հիմնումը ԿԲ-ի կարևորագույն բազմամյա նախագծերից է, որը հավանության է արժանացել ԱԺ կողմից: Այն բխում է ինչպես ԿԲ զարգացման և միջազգային հեղինակության մեծացման նպատակադրումից, այնպես էլ Կառավարության տարածքների համաչափ զարգացման գերակա նպատակադրումից:</p> <p><u>Կապիտալ ներդրումների կրճատումը նշանակում է կիսատ թողնել կամ մերժել արդեն իսկ գործարկված նախագիծը:</u> Ինչ վերաբերում է համակարգչային տեխնիկայի և ցանցային սարքավորումների համար նախատեսված ծախսերի կրճատմանը, ապա պետք է հաշվի առնել, որ ՀՀ ԿԲ հիմնական խնդիրներից մեկը գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելն է, ինչը ունի լուրջ ռազմավարական նշանակություն: Նման խնդիր կառավարության առջև դրված չէ: Բացի դրանից, ՀՀ կենտրոնական բանկում օգտագործվող ստանդարտ ծրագրային համակարգերը և փաթեթները պետք է անընդհատ թարմացվեն նոր տարբերակներով աշխարհում կիրառվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաներին համապատասխան: Հակառակ դեպքում ՀՀ ԿԲ-ը շատ արագ հետ կմնա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից և հնարավոր չի լինի ներդնել և շահագործել նոր կիրառական ծրագրային համակարգեր, որոնք իրականացնում են ժամանակակից ֆինանսական</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>և բանկային տեխնոլոգիաներ, ինչպես նաև արդյունավետ մշակել և պահպանել անընդհատ աճող ֆինանսական և տնտեսական տեղեկատվության ծավալները: Ընդ որում ԿԲ-ը ձեռք է բերում միայն սերտիֆիկացված ծրագրերը: Այսպիսով համակարգչային տեխնիկայի և ցանցային սարքավորումների համար նախատեսված ներդրումների կրճատումը կարող է հանգեցնել վճարային համակարգերի գործունեության անընդհատության ռիսկերի, ադյունքում չստեղծելով որևէ եկամուտ:</p> <p>«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ միջոցների համալրումը բխում է հիփոթեքային շուկայի զարգացման անհրաժեշտությունից և ինչպես այլ կապիտալ ծախսերի դեպքում դրա չիրականացման հաշվին հնարավոր չէ գումարները ուղղել պետությունի ծախսերի կատարմանը: Ավելին, «Ազգային հիփոթեքային ընկերության» միջոցների համալրումը բացի հիփոթեքային շուկայի զարգացումը խթանելուց իր հերթին նպաստում է շինարարության ճյուղի ակտիվացմանը, որը, ինչպես հայտնի է, բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում ՀՆԱ-ում: Գործունեության երեք տարիների ընթացքում Ազգային հիփոթեքային ընկերության կողմից վերաֆինանսավորվել է շուրջ 3102 վարկ՝ 23.4 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: Վերջինիս գործունեությունը հնարավորություն է տվել տնտեսությանը (ֆիզիկական անձանց) տրամադրել երկարաժամկետ և մատչելի վարկային միջոցներ՝ բնակարան ձեռք բերելու նպատակով: Ընդ որում, Ազգային հիփոթեքային ընկերության կողմից վերաֆինանսավորվող վարկային միջոցների վերադարձելիության ռիսկն ամբողջությամբ կրում է գործընկեր բանկը՝ որևէ կերպ ռիսկի չենթարկելով Ընկերությունում կատարված ներդրումները:</p> <p>Ազգային հիփոթեքային ընկերությունում ներդրման կրճատումը լուրջ վնաս կհասցնի հիփոթեքային շուկայի զարգացմանը, այստեղ նույնպես ադյունքում չստեղծելով</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
259.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>2.18. Պետք է հրատապ կարգով խմբագրել գործող օրենսդրական դաշտը ավտոմեքենաների, առողջապահության ապահովագրության և կուտակային կենսաթոշակների ներմուծումից գալիք արհավիրքների մասով: Ավտոմեքենաների ապահովագրությունը, որը վեջին տարիներին ցույց է տալիս 55-60% շահութաբերություն պարզապես նշանակովի բիզնես է, կառավարության կողմից իրականացված գրպանահատություն: Այստեղ կամ պետք է սահմանել պետական ապահովագրություն կամ էլ ազատականացնել շուկան՝ ինչը կհանգեցնի այս ապահովագրական ծառայության գների շեշտակի անկման: Բժշկական ապահովագրությունն այն ձևով, ինչ ձևով որ իրականացվում է, ոչ այլ ինչ է, եթե ոչ պետական պարտադրանքի միջոցով բնակչությանը հասանելիք եկամուտների վերահասցեագրումը պետության (ԿԲ-ի) կողմից նշանակված «բիզնեսմեններին»: 2012 թ.-ին, ըստ նախնական տվյալների, այստեղ երբեմն գործ ունենք մի քանի հարյուր տոկոսանոց շահութաբերության հետ: 2013 թ.-ին այս ոլորտների իրական բարեփոխումների հաշվին կարող ենք հասնել կամ բյուջեի մուտքի ռեսուրսի 11 մլրդ դրամով աճի, կամ էլ բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձի 10%-ոց լրացուցիչ աճի:</p>	<p>որևէ եկամուտ:</p> <p>Նախ և առաջ հարկ է նշել, որ նշված ոլորտներում իրականացվող քաղաքականության արդյունքում լինելու են ոչ թե արհավիրքներ, այլ հակառակը՝ ՀՀ քաղաքացիները ապահովագրված են լինելու տարբեր ռիսկերից և ավելի դյուրին են դիմանալու չնախատեսված խնդիրներ առաջ գալու փաստին (առողջական խնդիրներ, ավտովթարների արդյունքում առաջացած ծախսեր, ծերության ժամանակ եկամուտների կտրուկ նվազում): Բոլոր նշված ծրագրերը բխում են լավագույն միջազգային փորձից և ապացուցել են իրենց արդյունավետությունը բազմաթիվ երկրներում:</p> <ol style="list-style-type: none"> 1. Ավտոմեքենաների ապահովագրություն. ԱՊՊԱ համակարգը գործում է 2011 թվականից և այդ նույն տարվա վերջում կառավարության կողմից նախաձեռնվեց քննարկումներ այդ բնագավառի շահութաբերության վերաբերյալ: Քանի որ նման ապահովագրությունը Հայաստանում դեռևս նոր էր և չկային վերջնական ցուցանիշներ, քննարկումների արդյունքում որոշվեց հետաձգել որոշման կայացումը՝ մինչև համակարգը կայանա, ձևավորվի համապատասխան վիճակագրական տվյալներ և գործարկվի օրենքով սահմանված Բոնուս-Մալուս համակարգը, որի արդյունքում քիչ ռիսկային ավտոմեքենաների սեփականատերերը կվճարեն քիչ ապահովագրավճար: Դրա համար անհրաժեշտ է 2-3 տարի: 2013 թվականի օրենքով արդեն իսկ նախատեսվում է գործարկել նշված համակարգը: Հարկ է նշել նաև, որ բնագավառը ազատականացված է և շուկայական, այսինքն ապահովագրական ընկերությունները պայքարում են յուրաքանչյուր հաճախորդի համար՝ առաջարկելով լրացուցիչ ծառայություններ, իսկ դաշտ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ազատականացված է և ցանկացած կազմակերպություն կարող է զբաղվել ապահովագրությամբ՝ օրենսդրական պահանջներին համապատասխանելու դեպքում: Ներկայումս Հայաստանում գործում է շուրջ 10 ապահովագրական կազմակերպություններ:</p> <p>2. Սոցիալական փաթեթ. 2012 թվականի պետությունը նախաձեռնել է պիլոտային ծրագիր, որի շրջանակում նախատեսել է որոշակի չափով հոգալ իր աշխատակիցների սոցիալական կարիքները, այդ թվում նաև բժշկական ապահովագրության միջոցով: Հաշվի առնելով, որ Հայաստանում արդեն իսկ գործում են բազմաթիվ մասնավոր բուժական հիմնարկներ, որտեղ աշխատում են որակյալ բժիշկներ, իսկ պետական աշխատավարձով դժվար է օգտվել այդ թանկարժեք ծառայություններից, պետությունը ստանձնել է սոցիալական պատասխանատվություն և հնարավորություն է տվել իր աշխատակիցներին օգտվել բարձրորակ ծառայություններից: Հարկ է նշել, որ նման մոտեցումը ընդունված է նորմալ երկրներում և պետությունը հանդիսանում է օրինակ և լոկոմոտիվ մասնավոր հատվածի համար նման սոցիալական պատասխանատվություն ստանձնելու հարցում: 2012 թվականի բազմաթիվ պետական աշխատակիցներ օգտվել են սոցիալական փաթեթից և նախնական գնահատականները դրական են: 2012 թվականի արդյունքները ամփոփելուց հետո, այդ ծրագիրը կհղկվի և էլ ավելի կհամապատասխանեցվի շահառուների կարիքներին: Նշենք նաև, որ համաձայն չլինելով պատգամավորի նշած հնարավորության հետ հետ 10%-ով բյուջետային աշխատավարձերի աճի մասին, այնուամենայնիվ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>ակնհայտ է, որ նույնիսկ նշված աճի պարագայում էլ բյուջեի տարբեր աշխատակիցները հնարավորություն չեն ունենա օգտվել առողջապահական ապահովագրության համակարգով տրվող առավելություններին (52000 դրամ ապահովագրավճարով ստանալ շուրջ 4.0 մլն դրամի ծառայությունից օգտվելու հնարավորություն):</p> <p>3. Կուտակային կենսաթոշակային համակարգ. Համակարգը նոր է գործարկվում և փորձագետների կարծիքով լավագույններից մեկն է: Ինչպես նշված է նախաբանում, այս համակարգը լավագույն միջազգային փորձի արտացոլումն է և հնարավորություն է տալիս կիրառել «Արդարացիության» սկզբունքը, որի արդյունքում մարդկանց վաստակած եկամուտները աշխատելիս և կենսաթոշակային տարիքում կտրուկ չեն տարբերվում: Այլապես կենսաթոշակների բարձրացման և արժանապատիվ դարձնելու հարցը հնարավոր կլինի լուծել բյուջեի տարբեր աշխատակիցների կրճատման արդյունքում (աշխատավարձերի կրճատում, ներդրումների կրճատում և այլն), ինչը խիստ բացասաբար կանդրադառնա թե մարդկանց բարեկեցության, թե տնտեսության զարգացման վրա:</p>
260	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.19. Լուծում չի տված հանրապետության ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրն: ՀԷԿ-երը ջուրը ստանում են գործնականում առանց վճարելու: Հանրապետության էկոհամակարգը որպես ռեսուրս օգտագործելիս չի փոխհատուցվում:	<p>Ջրօգտագործման համար բնօգտագործման վճարը հաշվարկվում և վճարվում է համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի:</p> <p>ՀԷԿ-երի կողմից ջրօգտագործումը չի հանգեցնում ջրսպառման՝ ի տարբերություն մնացած դեպքերի (բացառությամբ ձկնաբուծական նպատակներով ջրօգտագործման, որտեղ օգտագործվում է միայն ջրային միջավայրը և վճարի հաշվարկն իրականացվում է օգտագործված ջրի ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա) և ՀԷԿ-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>երի կողմից օգտագործվում է միայն ջրային ռեսուրսի հիդրոպոտենցիալը, որի կորզման ընթացքում ջրային ռեսուրսը որակական և քանակական փոփոխություններ չի կրում:</p> <p>Ելնելով վերոգրյալից նշված օրենքով սահմանված չեն ռեսուրսօգտագործման վճարներ ՀԷԿ-երի կողմից ջրօգտագործման դեպքերում:</p>
261.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	2.20. Այսպիսով, թվարկած միջոցառումները թույլ կտան արդեն 2013 թ.-ին լրացուցիչ հավաքագրել 86.6 մլրդ դրամ, իսկ 2014 թ.-ին՝ 310 մլրդ դրամ: Արդյունքում 2013 թ.-ին եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 24.7, իսկ 2014 թ.-ին՝ 28.2%:	Նկատի ունենալով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ավելացման գծով սույն ամփոփաթերթիկի 193-211 հարցերի վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումները, առաջարկությունը չի ընդունվել:
262.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	<p>Մաս 3.</p> <p>3.1. Սոցիալական քաղաքականության մեջ կառավարությունը շեշտը դրել է կրթության, առողջապահության ոլորտները խրախուսելու վրա՝ մարդկանց խրախուսելու փոխարեն խրախուսում ենք նման ծառայություններ արտադրողներին: Բացի դա ո՞րն է այս բյուջեի սոցիալական ուղղվածությունը: Բյուջեի ծախսերը 2012 թ.-ի համեմատ ավելացվել են 10.2%-ով (համապատասխանաբար 1151 և 1044 մլրդ դրամ), մինչդեռ առողջապահության ծախսերն ավելացվել են 7.8%-ով, կրթությանը՝ 2.5%-ով, հանգստի, մշակույթի և կրոնի ծախսերը պակասել են 20.6%-ով, իսկ սոցիալական ոլորտը (կենսաթոշակները) պակասել է 1.5%-ով (307 մլրդ դրամից դարձել է 303 մլրդ դրամ): 2013 թ.-ին միջին կենսաթոշակը սահմանված է 31345 դրամ. նույնն է 2012 թ.-ին՝ 31254 դրամ: Վարչապետի բացատրությամբ բյուջեի սոցիալական ուղղվածությունն այն է, որ բյուջեի ծախսերի 41.4% ուղղվելու է սոցիալական ոլորտների (առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ և այլն) ֆինանսավորմանը: Բայց, նախ, 2012 թ.-ին այս ոլորտներին ուղղվել է բյուջեի ավելի մեծ մասը (պետք է պարզապես չեզոքացնել միասնական եկամտահարկի հետ կապված փոփոխությունների ազդեցությունը): Երկրորդ, բյուջեից ֆինանսավոր-</p>	Ձեր կողմից նշված 2013 թվականի բյուջեն 2012-ի համեմատ ավելի փոքր լինելու և ՀՀ վարչապետի կողմից հնչեցված ծախսային գերակայությունների հարցադրման կապակցությամբ հայտնում ենք, որ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են անվանական արտահայտությամբ 10.3, իսկ իրական արտահայտությամբ 5.8 տոկոսով: Ընդ որում կապիտալ ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ անվանական և իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար 33 և 31.7 տոկոսով: 2013 թվականի գործառնական դասակարգմամբ առողջապահության ոլորտի ծախսերը իրական արտահայտությամբ աճել են 3.5 տոկոսով, իսկ կրթության և սոցիալական պաշտպանության ծախսերի կրճատումը պայմանավորված է կենսաթոշակառուների և սովորողների թվաքանակների նվազմամբ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վում են բացառապես հանրային կարիքները: Ուրեմն մեծ հաշվով ոչ սոցիալական բյուջե չի լինում:	
263.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.2.Անթույլատրելի է բյուջետային ոլորտի աշխատավարձերի բարձրացումը (4.1%) ծրագրավորել ավելի քիչ, քան միջին գնաճը (4.2%): Բացի այդ կենսաթոշակների բարձրացում չի նախատեսվում, բայց գներն աճելու են: Թոշակառուները 4.2%-ով վատ են ապրելու: Սրանով կառավարությունն ասում է, որ 2013 թ.-ին չնայած 6.2% տնտեսական աճին և բյուջեի եկամուտների շուրջ 118.6 մլրդ դրամով աճին, փող չկա գննե կենսամակարդակի անկում թույլ չտալ: Սա անպատասխանատու և անլուրջ մոտեցում է: Սա միայն խրախուսելու է արտագաղթը: 2012 թ.-ի սպասվելիք 110-120 հազ. փոխարեն 2013 թ.-ին կարող արտագաղթել 130-140 հազ. մարդ: Եվ ուրեմն 2013 թ.-ի բյուջեն ոչ թե սոցիալական, այլ արտագաղթի բյուջե է:	Ինդեքսավորման քաղաքականություն ի գիտություն կա 4 երկրում, որպես կանոն չկա նաև Եվրոպայում և չի եղել մեր երկրում: Չնայած 2013թ չի նախատեսվում աշխատավարձերի բազային պաշտոնային դրույքաչափերի և հիմնական կենսաթոշակի չափերի բարձրացումներ, այնուամենայնիվ բոլոր ոլորտներում առկա է աշխատավարձերի և թոշակների միջին չափերի որոշակի բարձրացումներ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման, աշխատավարձի և թոշակների բնականոն աճի /ստա-ժների, դասային աստիճանների փոփոխություն և այլն/, իսկ թոշակների մասով նաև ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցած զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող միջին ամսական թոշակի չափը շուրջ 17 տոկոսովբարձրացման հետ:
264.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.3. Առաջարկում ենք 2013թ-ի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանել 72.5 հազ դրամ, իսկ միջին կենսաթոշակը միջին աշխատավարձի 30%-ի չափով: Մեր հաշվարկներով, 2013թ-ին միջին կենսաթոշակը կարելի է բարձրացնել մոտ 15%-ով, իսկ միջին կենսաթոշակը պետք է կազմի միջին բյուջետային աշխատավարձի 30 տոկոսը: Այս ծրագիրն իրականացնելու մոտավորապես կպահանջվի 28 մլրդ դրամ:	Նվազագույն աշխատավարձի բարձրացման քաղաքականության մոտեցումները հետևյալն են. ա) Բավարար ֆինասական միջոցների առկայություն, որը կտա նաև դեպի վերև աշխատավարձերի համամասնական բարձրացման հնարավորություն (աշխատավարձերի ընդհանուր սանդղակում բարձրացնել միայն ներքևի հատվածների աշխատավարձերը չի կարելի), բ) Արտադրողականության 8-10 տոկոս տնտեսության պայմաններում 70-80 տոկոսով աշխատավարձերի բարձրացումը կհամակցվի անցանկալի գնաճով, գ) Անմիջապես նվազագույն աշխատավարձերի թռիչքային բարձրացումը բացասական կանդադառնա աշխատատեղերի ավելացման խնդրին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Նվազագույն աշխատավարձի առաջարկվող բարձրացումը համահունչ է ՀՀ կառավարության որոշեցրած քաղաքականությանը: Ավելին, ՀՀ կառավարության ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նախատեսվում է նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում, նվազագույն աշխատավարձ/աղքատության գիծ ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում: Նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացում նախատեսված է ՀՀ 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով, 2013 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով:</p> <p>Սրա հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ՝ ՀՀ պետական բյուջեի իրական հնարավորությունները և ծրագրի իրականացման փուլայնությունը: Մասնավորապես.</p> <ol style="list-style-type: none"> 1. երբ նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ միաժամանակ համամասնորեն բարձրացվում են ՀՀ պետական բյուջեից տրվող բոլոր աշխատավարձերը և նվազագույն աշխատավարձի հետ կապված այլ ծախսերը: Այս պարագայում մոտավոր գնահատմամբ լրացուցիչ կպահանջվի 360.4 մլրդ դրամ, 2. երբ բարձրացվում է միայն ՀՀ պետական բյուջեից տրվող մինչև 72500 դրամ ամսական աշխատավարձ ստացող աշխատողների աշխատավարձերը: Այս պարագայում լրացուցիչ հատկացման պահանջի չափը կկազմի 28.4 մլրդ դրամ: Սակայն այս դեպքում՝ <p>ա. խախտվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված արդարացի վարձատրության իրավունքի սկզբունքը, չի ապահովվում աշխատավարձի կախվածությունը աշխատանքի քանակից և որակից, կազմակերպության գործունեության արդյունքներից և աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկից և պահանջարկից, բ. անտեսվում է «Քաղաքացիական ծառայողների վար-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>ծառայության մասին» «Երեւնի պահանջները, 3. Գործատուները կբարձրացնեն մինչև նախագծի ուժի մեջ մտնելը 72500 դրամից ցածր աշխատավարձ ստացող վարձու աշխատողների աշխատավարձը՝ դրանով իսկ կրելով աշխատավարձի բարձրացման հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերի բեռը (այդ թվում՝ 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող եկամտային հարկի մասով), կամ անփոփոխ կթողնեն գործող աշխատավարձերի չափերը՝ դրանով իսկ իրենց վրա վերցնելով նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ վճարելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն կրելու ռիսկերը, կամ</p> <p>չեն գրանցի վարձու աշխատողներին՝ խուսափելով ինչպես աշխատավարձի բարձրացման հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերից, այնպես էլ նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ վճարելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունից:</p> <p>Հետևաբար, գործատուները, որոնք ցածր որակավորում ունեցող անձանց կողմից իրականացվող, մասնագիտական գիտելիքներ ու պատրաստվածություն չպահանջող աշխատանքների համար ներկայումս 72500 դրամից պակաս աշխատավարձ են վճարում իրենց վարձու աշխատողներին, նվազագույն աշխատավարձի առաջարկվող փոփոխության իրականացման պարագայում ավելի շատ հակված կլինեն նշյալ վարձու աշխատողներին չգրանցելու օրենքով սահմանված կարգով կամ նրանց հաստիքները կրճատելու:</p> <p>«Երեւնի պահանջները» հասկացությունը: Միջին կենսաթոշակի չափը հաշվարկվում է որպես վարվող քաղաքականության արդյունքային ցուցանիշ և արտացոլվում է հայեցակարգային փաստաթղթերում:</p> <p>Ըստ այդմ, հստակ չէ, թե ինչ մեծություն պետք է հիմք</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ընդունվի կենսաթոշակի չափը սահմանելու համար: Առաջարկությունը չի բխում նաև կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականության տրամաբանությունից:</p> <p>Միաժամանակ, միջին կենսաթոշակի չափը որպես թիրախային ցուցանիշ սահմանելը և վարվող քաղաքականության հիմքում դնելը, առկա դրամական միջոցների շրջանակներում, ռիսկային կդարձնի ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշմամբ հաստատված կենսաթոշակային բարեփոխումների ծրագրով ամրագրված՝ կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը և աղքատության ռիսկը նախ՝ նվազագույնի հասցնելու, ապա՝ բացառելու նպատակադրումը:</p>
265.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.4. Մեր կողմից կատարված եկամուտների վերջնահաշվարկն ու ծախսերի վերաբաշխումը թույլ է տալիս պնդելու, որ 2013թ-ին բյուջետային ոլորտի աշխատողների միջին աշխատավարձի 10%-ոց բարձրացումը միանգամայն իրատեսական է:	Նկատի ունենալով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ավելացման գծով սույն ամիտփաթեթի 193-215 հարցերի վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշումները, առաջարկությունը չի ընդունվել:
266.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.5. Բացարձակապես անընդունելի է մատակարարներին սուբսիդավորելու ընթացակարգը: Նման գործողություններ մենք տեսնում ենք գյուղացիական տնտեսություններին պարարտանյութեր մատակարարելիս (ավելի քան 600 մլն դրամ), 2012թ-ին եղել է նաև դիզելային վառելիք մատակարարող ընկերության սուբսիդավորում, ջրային տնտեսության մեջ 634 մլն դրամ (բացի այդ շուրջ 3.9 մլրդ դրամի ֆինանսական աջակցություն ջուր մատակարարող հիմնարկներին) և այլն: Բոլոր այս սուբսիդիաները փողի կամ սերտիֆիկատների տեսքով պետք է անմիջականորեն տրվեն գյուղացիական տնտեսություններին: Ի՞նչպես կարող է կառավարությունը խոսել կոռուպցիայի դեմ պայքարից և միաժամանակ	Ներկայում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերն ուղղված են գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղմթերքների արտադրության գործընթացի կազմակերպման աջակցությանը, այլ ոչ թե ուղղակիորեն գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորմանը: Վերջինիս նպատակն է պետական աջակցության ուղղորդումը անմիջապես գյուղմթերքի արտադրությանը: <p>Բացի այդ թե պարարտանյութի և թե դիզելային վառելիքի սուբսիդավորման մեխանիզմների առավելություններից մեկն այն է, որ գյուղացիական տնտեսությունները ազատվում են պարարտանյութի և դիզելային վառելիքի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		սուբսիդիաներ տրամադրել մատակարարներին:	<p>շուկայում գների հնարավոր տատանումներից (ուղղակի սուբսիդավորման դեպքում որոշման ընդունումից մինչև փաստացի տրամադրումն ընկած ժամանակահատվածում գնային տատանումները կարող են փոքրացնել տրամադրվող աջակցության արդյունավետությունը):</p> <p>Ինչ վերաբերում է ջրօգտագործողների ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրմանը, ապա «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ջրօգտագործողների ընկերությունը ջրօգտագործողների կողմից ստեղծվող շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է: Այսինքն գյուղացիներին կամ գյուղացիական տնտեսություններին իրենց իսկ կողմից ստեղծված կառույցի նկատմամբ ոռոգման ջրի դիմաց վճարումներ կատարելու նպատակով ուղղակի սուբսիդիայի տրամադրումը լրացուցիչ քննարկման կարիք ունի: Բացի այդ առաջարկվող մոտեցման կիրառման դեպքում անհրաժեշտ է մշակել որոշակի մեխանիզմներ և չափորոշիչներ, որոնք կապահովեն սուբսիդիայի հասցեական և օբյեկտիվ (արդարացի) բաշխում:</p>
267.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.6. 2013թ-ին անցում կատարել վճարովի զինվորական ծառայության: Արդեն 2013թ-ի մայիսի զորակոչիկների մի մասի համար սահմանել 2012թ-ի փաստացի ձևավորված միջին բյուջետային աշխատավարձին հավասար վճարումներ: Վճարումներ կատարելուն զուգընթաց քայլեր ձեռնարկել պայմանագրային զինվորական ծառայության համակարգի աստիճանական ներդրման ուղղությամբ:	<p>ՀՀ զինված ուժերում և ՀՀ Ոստիկանության զորքերում 2009թ. սկսած, իսկ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում 2010թ. սկսվել է աստիճանաբար անցում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմից պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմի:</p> <p>Հարկ է նշել, որ 2012թ. հուլիսի 1-ից ՀՀ Ոստիկանության զորքերում նշված անցումն ապահովվել է ամբողջությամբ:</p>
268.	ՀՀ Ազգային ժողովի	3.7. Անհասկանալի է հանրապետության գյուղերում գազաֆի-	Համայնքների գազաֆիկացման աշխատանքներ նախա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Հրանտ Բագրատյան	կացման շարունակումը: Հայրուսգազարդի նկատմամբ բերված դատական հայցի շրջանակներում պարզ դարձավ, որ ՀՀ-ում գազի բարձր մանրածախ գները, նույնիսկ այն դեպքում երբ մեծածախ գինը (այսինքն, ՌԴ- կողմից նշանակված գինը) համեմատաբար բարձր չէ, պայմանավորված է գազի մեծածախ և մանրածախ գների միջև բարձր մարժայով: Իսկ դրա պատճառն իր հերթին հանրապետության բնակավայրերի գազաֆիկացման բարձր տոկոսն է (95%): Ի՞նչ է պետք գազաֆիկացնել բոլոր գյուղերը, եթե դրանց կեսը ի վիճակի չէ գազ սպառել: Պատահական չէ, որ գազաֆիկացված գյուղերի 35%-ը գազ չեն վառում: Արդյունքում թանկանում է գազամատակարարման ինքնարժեքը, բարձրանում է գազի մանրածախ գինը:	տեսված չեն նաև նշված ընկերության ինչպես 2013 թվականի և այնպես էլ առաջիկա տարիների ներդրումային ծրագրերում:
269.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.8. Բյուջեի վերաբաշխման մեջ էական ներդրում կարող են ունենալ այն ոլորտները, ուր ծախսերն աճել են ավելի քան 10,2%-ով (բացառությամբ պաշտպանության նախարարության). էներգետիկա և բնական պաշարներ, տրանսպորտ և կապ (օրինակ՝ հարավկովկասյան երկաթուղու 2013թ –ի սուբսիդիաները 328 մլն դրամ չափով 2012թ-ի 155 մլն դրամի չափով), էկոնոմիկայի նախարարություն (2013թ-ին հատկացված է 4.8 մլրդ դրամ 2012-ի 3.1 մլրդ դրամի դիմաց) և հասարակական կարգ ու անվտանգություն (2013թ-ին 57.5 մլրդ դրամ 2012թ-ի 37.8 մլրդ դրամի դիմաց): Այս ոլորտներից սոցիալական ոլորտների օգտին պետք է վերաբաշխել 2.5 մլրդ դրամ:	2010թ. համաձայնեցված ուղղություններով և ծավալներով կոնցեսիոների ուղևորափոխադրումներից ստացված վնասների և դրա դիմաց ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման հաշվարկների համաձայն, 2010թ. ուղևորափոխադրումներից ստացված վնասը կազմել է 2,885,802.0 հազար դրամ (սուբսիդիայի գումարը՝ 288,580 հազար դրամ), իսկ կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարը՝ 275,814.0 հազար դրամ, որի սահմաններում սուբսիդիայի գումարը նախատեսվել է 275,814 հազար դրամ: Հաշվարկից հանվել է չհամաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից ստացված 16.2 մլն դրամի վնասը և սուբսիդիայի փոխհատուցման ենթակա գումարը կազմել է 259.6 մլն դրամ, որը վճարվել է մասնակի (155,0 մլն դրամ): Ինչ վերաբերվում է 2013թ. սուբսիդավորմանը, ապա ուղևորափոխադրումից ստացված վնասը կանխատեսվել է 581.5 մլն դրամ և հաշվի առնելով, որ վնասի չափը չի կարող գերազանցել կոնցեսիոն վճարի չափին՝ նախա-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>տեսվել է 328.8 մլն դրամ (2012թ. կոնցեսիոն վճարի չափով):</p> <p>«Ըներգետիկայի և բնական պաշարների նախարարության ոլորտի ծրագրերի 2013թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի աճը 2012թ. համեմատությամբ պայմանավորված է բացառապես օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի համար հատկացվող ֆինանսավորման աճով:</p> <p>«Կ պետական բյուջեի միջոցների հաշվին ուղղակիորեն ֆինանսավորվող ծախսերի աճ չի նախատեսվել:</p>
270.	«Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան	3.9. 2013թ-ին աշխատանքներ պետք է տարվեն նախկին ԽՍՀՄ խնայբանկի ավանդներն ամբողջապես պետական պարտք ձևակերպելու, համապատասխան պարտատոմսեր թողարկելու ու սպասարկման կարգ սահմանելու ուղղությամբ՝ նախօրոք կատարելով վերջնահաշվարկ վերջին տարիներին իրականացված չնչին վճարումների մասով:	<p>««2006թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006 թ. մարտի 16-ի N 352-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվառվել են 61 680 անձինք իրենց 138 061 ավանդային գրքույկներով:</p> <p>2012 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ ավանդի փոխհատուցման վճարման ցուցակ են ներառվել մինչև 53513 համարում հաշվառված ավանդատուները: Կանխատեսվում է, որ մինչև 2012 թ. ի տարեվերջ ավանդի փոխհատուցման ցուցակներում կներառվեն մինչև մոտավորապես 55000 համարում հաշվառված ավանդատուները:</p> <p>Առաջարկվում է 2013 թ. շարունակել մնացած շուրջ 6 700 ավանդատուների փոխհատուցման գումարի վճարումները նույն կարգով՝ որպես նույն պայմաններում, նույն կարգով ավանդի փոխհատուցման իրավունքը ճանաչված ավանդատուներ:</p> <p>Պետական պարտքի տեսանկյունից ԽՍՀՄ խնայբանկի ավանդներն ամբողջապես պետական պարտք ձևակերպելը և համապատասխան պարտատոմսեր թողարկելը ոչ ցանկալի է և ոչ էլ հնարավոր:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրով սահմանված տարիքային հերթականությամբ ավանդների փոխհատուցման տրամադրման հետ կապված հարցերը (փոխհատուցման չափ, վճարման կարգ, ժամկետ և այլն) կորոշվի գործող ծրագրի ավարտից, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:</p>
271.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյան</p>	<p>3.10. Պետք է նաև առավելագույնս խրախուսել արտահանումը, վերջապես նախատեսել «բյուջետային պարզևներ» բարձր տեխնոլոգիական վերամշակման ապրանքների ու ծառայությունների փաստացի արտահանման դիմաց: Նախատեսված 300 մլն դրամը այս խնդիրը չի կարող լուծել: Բացի այդ առաջարկում ենք այս ուղղությամբ մասնագիտացնել Համահայկական բանկը:</p>	<p>ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսված 300 մլն դրամն ընդամենը մեխանիզմների ճշտման սկիզբն է: Միաժամանակ այն խրախուսելու համար կդիմենք Համահայկական բանկին:</p> <p>Ռազմավարությամբ նախատեսված է արտահանման ֆինանսավորման մեխանիզմի մշակում (օր.՝ արտահանման պայմանագրերի հիման վրա ֆինանսավորում, ֆակտորինգ), որը կիրականացվի ՓՄՁ ՌԻՎԿ-ի միջոցով:</p>
272.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>Դեռևս 2010 և 2011թթ.-ին իմ կողմից կառավարությանն արվել են առաջարկություններ՝ բյուջեի նախագծում ընդգրկելու Ուրցաձորի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների ծրագիրը: Ի պատասխան կառավարությունը խոստացել է քննարկել այն ՀՀ 2012-2014 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p> <p>Ցավոք պետք է նշել, որ տվյալ հարցի հետ կապված որևէ որոշում դեռևս չի կայացվել:</p> <p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դպրոցի համար վերը նշված աշխատանքների իրագործումն ունի կենսական նշանակություն և պահանջում է հրատապ լուծում՝ խնդրում եմ 2013թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի գ. Ուրցաձորի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների ծրագիրը: Առաջարկության իրացման արդյունքում հնարավոր է նաև իրականացնել շարունակական ֆինանսավորման մեխանիզմ:</p>	<p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ծրագրի արժեքը կազմում է 40,254.24 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:	
273.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	<p>Հարցը վերաբերվում է Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզին, որի տանիքը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում և ակնհայտ է արդեն, թե անձրևաջրերի ինչպիսի հոսք կարող է տեղի ունենալ տվյալ մանկապարտեզում, որը մարզում սպասարկում է մեծ թվով ընտանիքների երեխաներին:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հարցի լուծման համար պահանջվում է անհապաղ պետական օժանդակություն՝ խնդրում եմ 2013թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 39,993.50 հազ. ՀՀ դրամ: Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:</p>	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
274.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)	<p>Հարցը վերաբերում է Արարատի մարզի Արարատ գյուղի մանկապարտեզի 2-րդ մասնաշենքին, որը ներկայումս գտնվում է բավականին անմխիթար վիճակում և փաստացիորեն պիտանի չէ շահագործման համար: Անհրաժեշտ է այնտեղ կատարել հիմնարար վերանորոգման աշխատանքներ՝ շահագործման համար անվտանգ պայմաններ ստեղծելու համար, որի արդյունքում այն կարող է սպասարկել տվյալ համայնքին:</p> <p>2013թ-ի պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների իրականացման ծրագիրը: Առաջարկության իրացման արդյունքում հնարավոր է նաև իրականացնել շարունակական ֆինանսավորման մեխանիզմ: Ծրագրի արժեքը կազմում է 54,126.76 հազ. ՀՀ դրամ: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը առկա են, ներկայացվում են կից:</p>	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
275.	ՀՀ Ազգային ժողովի	Արարատի մարզում միջհամայնքային ճանապարհները ներ-	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կնե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	<p>պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>կայուն գտնվում են անբարվոք վիճակում, որը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակիչների համար: Տվյալ դեպքում խիստ կարևոր է Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգավան-Եղեգնավան միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրագործումը, որը ներկայումս չի ապահովում նույնիսկ անցանելիության համար նվազագույն պահանջները: Տվյալ համայնքների համար այն կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում և կենսական նշանակություն ունի նրանց միջև կապ հաստատելու և ներկայումս ստեղծված ճանապարհային բարդություններից խուսափելու տեսանկյունից: Կարևորելով Արարատի մարզի մի շարք համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վերանորոգման, ինչպես նաև վերը նշված համայնքների միջև առկա ճանապարհային հատվածի բարեկարգման խիստ անհրաժեշտությունը՝ խնդրում եմ 2013թ. պետական բյուջեի նախագծում ներառել ՀՀ Արարատի մարզի Ավշար-Նոյակերտ, Ավշար-Այգեվան-Եղեգնավան միջհամայնքի ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար: Ծրագրի արժեքը կազմում է 50,000.398 հազ. ՀՀ դրամ: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը առկա են, ներկայացվում են կից:</p>	<p>րառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:</p>
276.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>Դեռևս 2009թ.-ից իմ կողմից կառավարությանն արվել է առաջարկություն բյուջեի նախագծում ընդգրկելու Եղեգնավան և Այգավան համայնքների ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները: Կառավարության կողմից առաջարկվել է քննարկել հարցը հաջորդ տարիների բյուջետային քննարկումների ժամանակ: Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհը ներկայումս գտնվում է անմխիթար և անանցանելի վիճակում: Այն կենսական նշանակություն ունի համայնքների համար և հանդիսանում է միջհամայնքային կարևորագույն ճանապարհներից մեկը և միաժամանակ առավել կարճ ճանապարհ է բացում թե համայնքների միջև, և թե դեպի ք. Վեդի, որտեղ տեղակայված են մի շարք պետական և համայնքային կառույցներ:</p>	<p>Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ճանապարհը ներկայումս գտնվում է անանցանելի վիճակում և համայնքների համար ունի կենսական նշանակություն՝ խնդրում են 2013թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան-Այգավան միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման ծրագիրը:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 174,158.974 հազ. ՀՀ դրամ:</p> <p>Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:</p>	
277.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Գրիգորյան (018 ընտրատարածք)</p>	<p>Հարցը վերաբերում է Արարատի մարզի գյուղ Գոռավանի գյուղապետարանին, որը երկար տարիներ ի վեր անուշադրության մատնված լինելու պատճառով այժմ գտնվում է ավիրված վիճակում: Գյուղապետարանը, որպես կառույց, որևիցե նվազագույն պայմաններ չունի աշխատանքների կազմակերպման համար:</p> <p>Կարևորելով համայնքի համար տվյալ հարցի լուծման անհրաժեշտությունը՝ խնդրում են 2013թ. պետական բյուջեի նախագծում ներառել՝ ՀՀ Արարատի մարզի գյուղ Գոռավանի գյուղապետարանի կապիտալ վերանորոգման աշխատանքների ծրագիրը: Աշխատանքների կազմակերպման համար հնարավոր է նաև իրականացնել շարունակական ֆինանսավորման մեխանիզմ:</p> <p>Ծրագրի արժեքը կազմում է 31,683.43 հազ. ՀՀ դրամ:</p> <p>Նախագծահաշվարկային փաստաթղթերն առկա են, ներկայացվում են կից:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
278.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան</p>	<p>2013թ-ի բյուջեի թե՛ ուղերձում և թե՛ բացատրագրում նշվում է, որ տնտեսական անկումների ժամանակ որպես կանոն կառավարությունները պետք է վարեն ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն՝ պակասորդի ավելացման ճանապարհով ավելի շատ ծախսեր իրականացնեն (մաս II-Ա էջ50), այդ կերպ խթանեն պահանջարկը (միաժամանակ ապահովելով առաջարկի համար բարենպաստ պայմաններ) և ապահովեն տնտեսական աճի համար հուսադրող</p>	<p>Հաշվի է առնվել մասնակի: Երբ խոսում ենք ծախսերի մասին և համեմատություններ ենք անում, մոռանում ենք, որ բյուջեի կառուցման հիմքում ամենախոշոր հաշվով ընկած է հարկաբյուջետային քաղաքականությունը, որպես մակրոտնտեսական քաղաքականության կարևորագույն տարր: Այս առումով հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի հակացիկլիկ: Դա նշանակում է, որ տնտեսության անկման ժամանակահատվածում բյուջեի բացասական հաշվե-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նախադրյալներ: Իսկ տնտեսական աճն իր հերթին կապահովի գործարարների ավելի մեծ եկամուտներ՝ հետևաբար նաև ավելի մեծ բյուջետային հարկային եկամուտներ (մաս II-Ա նույն տեղում):</p> <p>Միաժամանակ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հիմնավորման համար, ինչպես նաև բյուջեի ռիսկերը գնահատելիս կառավարությունը ներկայացնում է այն հնարավոր բացասական զարգացումները, որոնք օբյեկտիվորեն կարող են դրսևորվել մեր գործընկեր տնտեսական տարածքներում՝ Եվրոմիություն, ԱՄՆ և այլն և որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց բացասական ազդեցությունները կթողնեն ՀՀ տնտեսական աճի վրա (մաս II-Ա էջ 75, 80-81): Այսինքն, տնտեսական զարգացումների ներկա փուլում հիմք չկա ենթադրելու, որ ՀՀ տնտեսությունը ձերբազատվել է ճգնաժամային ազդեցություններից: Հետևաբար, տրամաբանական է ենթադրել, որ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը ներկա փուլում պետք է լինի ընդլայնողական, այսինքն, պետական ծախսերի ավելացման ճանապարհով, և առաջին հերթին պետական սպառման, սոցիալական և կապիտալ ծախսերի ավելացմամբ, նպաստել պահանջարկի խթանմանը:</p> <p>Մինչդեռ բյուջեի նախագծով նախատեսվում է ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 25,38%, որը ավելի ցածր է քան 2011թ՝ 26,1% (մաս I-Բ էջ 47, մաս II-Ա էջ 75): Կանխատեսվում է նաև ներքին սպառման նվազում՝ 2012թ սպառում/ՀՆԱ 6%-ի դիմաց 2013թ 5% (մաս II-Ա էջ63) : Ինչու: Չէ՞ որ պահանջարկի աճը անխուսափելիորեն կխթանի տնտեսական աճ, իսկ վերջինս իր հերթին կնպաստի քաղաքացիների եկամուտների ավելացմանը (բնակչության տնօրինվող եկամուտների աճին): Սրանք բյուջեի բացատրագրում հռչակվել են, որպես ՀՀ Կառավարության ռազմավարական նպատակներ (մաս II-Ա էջ 49):</p> <p>Առաջարկություն. 2013թ-ի բյուջեում վերանայել պետական միջոցներով իրականացվող կապիտալ շինարարության ծավալ-</p>	<p>կշիռը պետք է մեծանա, իսկ վերելքի շրջանում՝ այն պետք է կրճատվի: Ի դեպ մի շարք եվրոպական երկրների դեպքում վերջինս հնարավոր չեղավ հաջողությամբ իրականացնել և շարունակում են դեռևս պարտքային խնդիրներ ունենալ: Հետևաբար ակնհայտ էր, որ ճգնաժամի տարվա բարձր պակասուրդին պետք է հաջորդեր պակասուրդի նվազեցման քաղաքականությունը, որպեսզի չվտանգվեր պարտքի կայունությունը և դա հաջողությամբ Հայաստանը կատարել և կատարում է:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ները ավելացման ուղղությամբ, այն հաշվով, որ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը լինի ոչ պակաս 2011թ-ի ցուցանիշից: Առավել ևս, որ հակաճգնաժամային հիմնադրամում, ինչպես փաստեց ՀՀ Վարչապետը ԱԺ-ում իր ելույթում, առկա միջոցները այդ հնարավորությունը տալիս են:</p>	
279.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խոսքով Հարությունյան</p>	<p>Մաս II-Ա 3.2 «Համախառն առաջարկ» բաժնում հիմնավորելով ընթացիկ տարում տնտեսության 7,1% աճի տեմպը պնդում է կատարվում, որ կապված ՌԴ տնտեսությունում ակնկալվող դրական զարգացումների հետ կշարունակվեն մասնավոր տրանսֆերտների աճը (էջ 53): Մինչդեռ նույն մասի էջ 74-ում ներմուծվող ապրանքների դոլարային արժեքի տարեկան աճի հնարավոր նվազման կանխատեսումը հիմնավորվում է արտերկրից մասնավոր տրանսֆերտների աճի ակնկալվող տեմպի նվազմամբ: Այս երկու պնդումները հակասում են միմյանց: Առաջարկություն. Հստակեցնել և վերացնել նշված հակասությունը:</p>	<p>Այստեղ առաջարկի մասում որևէ հակասություն չկա քանի որ արտերկրից եկող մասնավոր տրանսֆերտների աճ է կանխատեսվում: Իսկ ներմուծման կանխատեսման մեջ հղում է կատարվում ոչ թե տրանսֆերտների նվազման այլ աճի տեմպի դանդաղման վրա: Ուղերձում խոսվում է ներմուծվող ապրանքների աճի կանխատեսման մեջ մասնավոր տրանսֆերտների աճի տեմպի նվազման, այլ ոչ թե բացարձակ արժեքի մասին:</p>
280.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խոսքով Հարությունյան</p>	<p>3.2.1 «Արդյունաբերություն» բաժնում ընթացիկ տարում ճյուղի 9.4% աճը կապվում է մասնավորապես տնօրինվող եկամտի աճի հետ: Ենթադրելով, որ արդյունաբերության աճը խթանող միտումները կպահպանվեն նաև հաջորդ տարի, կանխատեսվում է ճյուղի 9,2% աճ: Մինչդեռ բնակչության տնօրինվող եկամուտների աճը խթանող պետական ծախսերը բյուջեի նախագծով նախատեսվում է կրճատել: Եվ եթե ելնենք այն պնդումից, որ բնակչության տնօրինվող եկամտի ծավալները ապահովվում են թե՛ տեղական արտադրության և թե՛ ներմուծվող ապրանքների և ծառայությունների պահանջարկը (մաս II-Ա էջ 71-72), ապա ստացվում է, որ հաջորդ տարի էապես կարող է նեղանալ տեղական արդյունաբերության աճի խթանման բազան: Առաջարկություն. Բյուջեի բացատրագրում ներկայացնել բնակչության տնօրինվող եկամուտների աճի սպասումները 2013թ-ի դինամիկան ընթացիկ տարվա համեմատ, այն ապահովելու հիմնական քայլերը և տալ գնահատականը, թե</p>	<p>Բնակչության տնօրինվող եկամուտների աճը խթանող պետական ծախսերը բյուջեի նախագծով պետք է նշել , որ չեն կրճատվում: Եվ ընդհանրապես տնօրինվող եկամուտների կանխատեսումները աճի ուղղությամբ են, հետևաբար այս մասով ամբողջական պահանջարկի սահմանափակման դիսկեր չենք տեսնում:</p> <p>Առաջարկությունն ընդունվել է:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		բնակչության տնօրինվող եկամուտները որքանով են խթանում տեղական արտադրության աճը և որքանով՝ ապրանքների ու ծառայությունների ներմուծումը:	
281.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան	<p>2013թ-ի համայնքային բյուջեներում նախատեսվում է ծախսերի (101,7 մլրդ դրամ) գերազանցումը եկամուտների (97,5 մլրդ դրամ) նկատմամբ՝ դիֆիցիտ 4,2 մլրդ դրամի չափով (մաս III էջ 100): Սա հակասում է բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքին:</p> <p>Առաջարկություն. Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեի կանխատեսումները համապատասխանեցնել օրենքի պահանջներին:</p>	<p>ՀՀ համայնքների 2013 թվականի բյուջեների ցուցանիշների կազմում նաև դեֆիցիտի ցուցանիշի կանխատեսումը կատարելու համար հիմք են հանդիսացել.</p> <p>ա) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 28.1 և 28.2 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված համայնքի բյուջեի ընդհանուր կառուցվածքը (այն է՝ համայնքի բյուջեի եկամուտներ, ծախսեր, դեֆիցիտ և վերջինիս ֆինանսավորման աղբյուրներ) և</p> <p>բ) ՀՀ համայնքների բյուջեների կատարման 2010-2011թթ փաստացի արդյունքները և 2012 թվականի համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դեֆիցիտի հաստատված ամփոփ ցուցանիշը:</p>
282.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան	<p>Կանխատեսվում է, որ հաջորդ տարի 6,2% տնտեսական աճը հիմնականում կապահովվի այդ աճն ապահովող տնտեսության ճյուղերում նոր աշխատուժ ներգրավելու հաշվին (մաս II-Ա էջ 59): Միաժամանակ վերապահում է կատարվում, որ այդուհանդերձ գործազրկության նվազումը չի լինի տնտեսական աճին ադեկվատ, քանի որ վերջինս կուղեկցվի աշխատանքի արտադրողականության բարձրացումով:</p> <p>Առաջարկություն. Բացատրագրում ներկայացնել աշխատանքի արտադրողականության բարձրացումը երաշխավորող ծրագրային միջոցառումները, այդ թվում՝ տնտեսական խթանների օգտագործման ճանապարհով, որոնք կպահանջեն նաև հավելյալ օրենսդրական</p>	<p>Ժամանակակից տնտեսագիտություն մեջ պետության դերը աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ չի ենթադրում կարգավորման ուղղակի գործիքների կիրառություն: Այն առավելապես իրականացվում է գործարար միջավայրի բարելավման, ենթակառուցվածքների ստեղծման և այլ անուղղակի գործիքներով: Այս ուղղությամբ ի դեպ նշանակալի աշխատանքներ արվել են և կշարունակվեն:</p> <p>Առաջարկությունն ընդունվել է և ուղերձում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
283.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խոսքով Հարությունյան	<p>կարգավորումներ:</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարության բյուջետային ծախսերի շրջանակում (ադ. 13) նախատեսված է «Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագիրը» 300,0 մլն դրամ ծավալով: Սակայն հստակեցված չէ, թե կանոնադրական այդ նպատակներն ունեցող գործող ո՞ր կառույցների միջոցով է նախատեսվում իրականացնել այդ ծրագիրը: Նշված չէ նաև ՀՀ կառավարության արտահանման խթանման ռազմավարական ծրագրով նախատեսված կառույցների մասնակցությունը այդ ծրագրին: Նման անորոշություններն ու անհստակությունը հաճախ պատճառ են դառնում նոր կառույցների ձևավորման համար, որոնք իրենց ֆունկցիաներով կրկնում են գործող կառույցներին: Արդյունքում տուժում է կառավարման արդյունավետությունը:</p> <p>Առաջարկ. Բացատրագրում հստակ նշել արտահանման քաղաքականության իրականացման պատասխանատու կառույցները և ֆինանսական հատկացումների ծավալները:</p>	<p>ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը ենթադրում է պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում նախաձեռնությունների համակարգված և ներդաշնակ գործունեություն:</p> <p>Ռազմավարության իրականացման արդյունավետության նպատակով Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի հիման վրա ձևավորվել է Արդյունաբերության զարգացման հիմնադրամը, որը Ջարգացման հայկական գործակալության հետ միասին հանդիսանում են Ռազմավարության իրականացման հիմնական կառույցները:</p> <p>Ռազմավարությամբ ընտրված ոլորտային խորհուրդների քարտուղարությունների աշխատանքը իրականացվում է Ջարգացման հայկական գործակալության կողմից:</p>
284.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խոսքով Հարությունյան	<p>ՀՀ կառավարության աշխատակազմում նախատեսված է 282 հաստիք (ադ. 2ա): Մինչդեռ դեռևս 1999թ-ին բրիտանական հայտնի կազմակերպության կողմից մշակված էր Կառավարության աշխատակազմի կառուցվածքի և աշխատողների թվաքանակի օպտիմալացման նպատակով կառուցվածքային բարեփոխումների ծրագիր: Բացի նշվածից, այդ բարեփոխումները նպատակ էին հետապնդում ապահովել իրական քաղաքական ապակենտրոնացում՝ քաղաքական որոշումների նախապատրաստման և իրականացման գործառույթների ծանրության կենտրոնը տեղափոխել դեպի նախարարություններ: Ներկայումս իրականացված է այդ կառուցվածքային բարեփոխումների մի մասը միայն և ծրագրային հիմնական նպատակներն ու արդյունքները դեռևս ապահովված չեն:</p>	<p>Դեռևս 1999թ.-ին բրիտանական Know-how ֆոնդի և հետագայում DFID կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարության աշխատակազմին կառավարման բարեփոխումների համար տրամադրվել է տեխնիկական աջակցություն: Տեխնիկական աջակցության ներքո մշակվել էին առաջարկություններ, որոնք ենթադրում էին նախարարական կոմիտեների ստեղծում:</p> <p>Ըստ այդմ 2008 թ.-ին ստեղծվել են նախարարական չորս կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական, սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական, պետաիրավական: Հաստատվել են նաև նախարարական կոմիտեների աշխատակարգը և կազմերը: Կոմիտեների</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Առաջարկ. Մշակել կառավարման նշված բարեփոխումների ամբողջական ծրագրի իրականացման միջոցառումների ցանկն ու ժամանակացույցը՝ ծրագրային նպատակային ցուցանիշների ապահովմամբ և արդյունավետության գնահատականով և նախատեսել 2013թ-ի ծրագրի իրականացման մեկնարկը: Այդ ամենը արտացոլել բյուջեի բացատրագրում:</p>	<p>հիմնական նպատակն է առանձին ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ռազմավարության, դրա իրականացման և համակարգված վերահսկման միասնական մոտեցումների ձևավորման, անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի, հայեցակարգերի, ծրագրերի մշակման աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու համակարգումը: Նախարարական կոմիտենտերում, որոնք տեղի են ունենում յուրաքանչյուր հինգշաբթի, համապատասխան հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների մասնակցությամբ քննարկվում են տվյալ նախարարական կոմիտեի անդամների կողմից մշակված բոլոր իրավական ակտերի նախագծերը, որոնք, կոմիտեի կողմից հավանության արժանանալու դեպքում, ընդգրկվում են կառավարության նիստի օրակարգում:</p> <p>Նախարարական կոմիտենտերի ձևավորումից և աշխատանքների կազմակերպումից հետո ՀՀ կառավարության աշխատակազմում իրականացվեցին կառուցվածքային բարեփոխումներ, մասնավորապես՝ ՀՀ կառավարության աշխատակազմի վարչությունների այն գործառույթները, որոնք, ըստ էության, կրկնում էին նախարարությունների աշխատակազմերի կամ դրանց կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումների գործառույթները, կրճատվեցին կամ բովանդակային առումով շարադրվեցին նոր խմբագրությամբ: Արդյունքում այժմ գործում են չորս ոլորտային վարչություններ, որոնց հիմնական գործառույթը համապատասխան կոմիտենտերի աշխատանքի սպասարկումն է, իսկ կրկնվող գործառույթներով վարչությունները լուծարվեցին:</p> <p>ՀՀ կառավարության աշխատակազմի խնդիրներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀՀ կառավարություն ներկայացված իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը նախարարական կոմիտենտերում և ՀՀ կառավարության նիստերում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>քննարկելու համար.</p> <p>2) ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակման և կազմման կազմակերպումը, գործունեության միջոցառումների տարեկան ծրագրերի կատարման նկատմամբ վերահսկողությունը.</p> <p>3) ՀՀ նախարարությունների և պետական կառավարման մյուս հանրապետական ու տարածքային մարմինների կողմից ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողությունը:</p> <p>Թվարկված խնդիրներն ուղղակի բացառում են որևէ ոլորտի քաղաքականության մշակման, իսկ վերը նշված նախարարական կոմիտեների առկայությունը՝ քաղաքական որոշումների կայացման հնարավորությունը ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից: Այդ առումով կարծում ենք, որ բրիտանական կազմակերպությունների կողմից առաջարկված բարեփոխումները, որոնք նպատակ էին հետապնդում ապահովել քաղաքական ապակենտրոնացում՝ քաղաքականության մշակման և քաղաքական որոշումների նախապատրաստման ու իրականացման գործառնությունները տեղափոխելով նախարարություններ, փաստացի իրականացված է:</p> <p>Վերը նշված բարեփոխումների իրականացումից առաջ՝ 2008թ.-ին, կառավարության աշխատակազմում առկա էր 324 հաստիք: Բարեփոխումների արդյունքում, գործառնությունների օպտիմալացման շրջանակներում իրականացվեցին նաև կրճատումներ և այժմ առկա է 282 հաստիք:</p>
285.	ՀՀ Ազգային Ժողովի	Բացատրագրում չի խոսվում ստվերային տնտեսության	Անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրապե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	<p>պատգամավոր Խոսրով Հարությունյան</p>	<p>Ծավալների կրճատման տնտեսական և քաղաքական անխուսափելիության մասին և ներկայացված չէ ստվերի դեմ պայքարի Կառավարության ռազմավարության նկարագրությունը: Բացակայում են տնտեսական այդ չարիքի ծավալային մոտավոր գնահատականներն ու դինամիկան՝ ընթացիկ և հաջորդ տարիների կտրվածքով:</p> <p>Առաջարկ. Բացատրագրում ներկայացնել Կառավարության նախաձեռնությունների արդյունքում ստվերային տնտեսության կրճատման հաշվարկներն ու հնարավոր ծավալները, սպասվելիք արդյունքի գնահատականը՝ ստվեր/ՀՆԱ հարաբերակցությամբ: Նշել նաև խոշոր հարկատուների հարկային բեռի ավելացման դինամիկան և նրա ազդեցությունը ստվերային շրջանառության կրճատման վրա:</p>	<p>տության կառավարության կողմից իրականացված հարկային քաղաքականությունը միշտ էլ ուղղված է եղել ստվերային տնտեսության դեմ պայքարին: Ինչ վերաբերում է առաջիկա տարիներին ստվերային տնտեսության դեմ պայքարի շրջանակներում նախատեսված միջոցառումներին, ապա հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ԱԺ է ուղարկել ՀՀ հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ նախատեսող ՀՀ օրենքների նախագծեր, որոնց հիմնական նպատակներից մեկը ստվերային ապրանքաշրջանառության դեմ պայքարի համար առավել արդյունավետ գործիքների սահմանումն է:</p> <p>Կառավարության տնտեսական, սոցիալական և մի շարք կարևորագույն ոլորտների քաղաքականության առաջնահերթությունները և զարգացման ուղղությունները ներկայացվում են ինչպես կոնկրետ ոլորտային ռազմավարական ծրագրերի, այնպես էլ երկրի երկարաժամկետ և միջնաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրերում, իսկ տարեկան պետական բյուջեն ներկայացնող օրենքը արտացոլում է ընթացիկ տարվա բյուջետային քաղաքականության ուղղություններն ու առանձնահատկությունները, հետևաբար ստվերի և կոռուպցիայի դեմ երկրում իրականացվող ռազմավարության նկարագրությունը, գնահատականները և դինամիկայի մանրամասն ուղղությունների ներկայացումը պետական բյուջեի մասին օրենքում պարտադիր և նպատակահարմար չէ:</p> <p>Հարկերի և պետական տուրքերի ընդհանուրի գումարի նկատմամբ 1000 խոշոր հարկատուների կողմից վճարված հարկերը և պետական տուրքերը 2008թ կազմել են 71.9%, 2009թ՝ 73.5%, 2010թ՝ 73.1%, 2011թ՝ 74.2%:</p>
286.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան</p>	<p>Մաս I «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» բաժնում (էջ 5) շարադրված է, որ հաջորդ տարում կշարունակվեն ներդրումների ներգրավման և արտահանման խրախուսման գործիքակազմի կիրառումը և կատարելագործումը,</p>	<p>Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սարքավորումների համար արդեն իսկ սահմանված է ավելացված արժեքի հարկի գծով արտոնություն: Մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին»</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ինչպես նաև նոր գործիքների ներդրումը: Ի թիվս այլ խթանների ներդրումների խրախուսման լավագույն գործիք է հանդիսանում ներկրվող և ներդրման ենթակա տեխնոլոգիական սարքավորումները մաքսատուրքից և ԱԱՀ-ից ազատելը: Առաջարկություն. 2013թ. նախապատրաստել անհրաժեշտ իրավական հիմքերը հարկման նշված ռեժիմին անցնելու համար՝ այդ ռազմավարական մոտեցումը ամրագրելով բացատրագրում:</p>	<p>ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն, ԱԱՀ վճարող համարվող անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սարքավորումների համար մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների պետական բյուջե վճարման ժամկետը կարող է հետաձգվել՝</p> <ol style="list-style-type: none"> 1) հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70 մլն դրամից. 2) հայտարարագրման օրվանից երկու տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70 մլն դրամ և ավելի. 3) հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն դրամը: <p>Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով:</p> <p>Բացի այդ, ներմուծվող մի շարք տեխնոլոգիական սարքավորումների համար մաքսատուրքից և ավելացված արժեքի հարկից ազատման արտոնություն է սահմանված նաև «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով:</p> <p>Հայտնում ենք նաև, որ 2011թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ», որպես միջնա-ժամկետ հեռանկարում առանցքային առաջնահերթության թիրախ է ամրագրված «արտադրական նշանակության մեքենաների և սարքավորումների ավելացված արժեքի սահմանի վրա հաշվարկման և գանձման պահանջի աստիճանաբար վերացումը»:
287.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան	<p>Նախատեսել տնտեսվարող սուբյեկտների համար երկմակարդակ հարկման համակարգ: ՓՄՁ-երի համար պարզեցված հարկ կամ շրջանառությունից հարկ՝ սահմանելով գործունեության այդ տեսակի համար շրջանառության առավելագույն սահման 100,0 մլն դր տարեկան, իսկ խոշոր հարկատուների համար հարկման սովորական ռեժիմ:</p> <p>Առաջարկություն. 2013թ. նախապատրաստել հարկման այդ համակարգին անցնելու համար իրավակազմակերպական անհրաժեշտ հիմքերը:</p>	<p>Ներկայումս շրջանառության հարկի նախագիծը ներկայացվել է ԱԺ:</p> <p>Ինչ վերաբերում է շրջանառության հարկի համակարգում գործելու թույլատրելի շեմին, ապա հայտնում ենք, որ առաջարկվում է այն սահմանել տարեկան կտրվածքով 58.35 մլն. դրամի չափով: Միաժամանակ, գտնում ենք, որ դրանից բարձր շեմի սահմանումը հիմնավոր չէ, քանի որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր կողմից առաջարկվող շեմն արդեն իսկ բարձր է միջազգայնորեն ընդունված պրակտիկայում կիրառվող շեմից:</p>
288.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսրով Հարությունյան	<p>Ջարգացման Հայկական Գործակալության գործունեությունը ներկայացնող Յո աղյուսակում նշված է, որ գործակալությունը զբաղվում է տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցության միջոցառումների իրականացմամբ: Մինչդեռ նշված կառույցի գործունեության հիմնական նպատակը, որը և ամրագրում է կառույցի պատասխանատվությունը, դա տնտեսական աճի խրախուսումն է՝ ներդրումների ներգրավմամբ, արտահանման զարգացմամբ և գործարար միջավայրի բարելավմամբ: Այսինքն՝ կառույցի կանոնադրական առաքելությունը որակապես տարբերվում է աղյուսակում շարադրվածից:</p> <p>Առաջարկություն. Պաշտոնական փաստաթղթում ամրագրել գործակալության գործունեության պատասխանատվությամբ պայմանավորված ծրագրային գլխավոր նպատակը՝ ներդրումների ներգրավում, արտահանման զարգացում և գործարար միջավայրի բարելավում:</p>	<p>ՀՀ կառավարության 02.04.1998թ. թիվ 219 որոշմամբ հաստատված Ջարգացման Հայկական Գործակալության կանոնադրության 11-րդ կետով ՋՀԳ-ի հիմնական նպատակը հանդիսանում է ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս հայ բիզնեսի մրցունակությանն օժանդակելը:</p> <p>Ջարգացման Հայկական Գործակալության գործունեությունը ներկայացնող Յո աղյուսակի և բյուջեի բացատրագրի լրամշակված տարբերակում ծրագիրը վերանվանվել է հետևյալ կերպ.</p> <p>«Տնտեսական գործունեության աջակցման ծառայություններ»:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
289.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում նախատեսել գումար՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների, Շենգավիթի վարչական շրջանի, Արագածոտնի մարզի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանների նախագահներին նոր ծառայողական ավտոմեքենաներ հատկացնելու համար, քանի որ ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաները (մասնավորապես՝ ՀՀ նախարարությունների) թողարկված են 2000 թվականից հետո, մինչդեռ նշված դատարանների ծառայողական ավտոմեքենաների թողարկման ամսաթվերն են՝ 1992-1998թթ.:	Առաջարկությունը չի ընդունվել ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից: Ներկայումս ՀՀ պետական կառավարման մարմիններում առկա են մինչև 2000 թվականի արտադրության շուրջ 180 ծառայողական ավտոմեքենաներ, և այդ ավտոմեքենաները նորով փոխարինելու հարցը պահանջում է խնդրի համալիր լուծում, որի համար կպահանջվի շուրջ 2.0 մլրդ դրամ:
290.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Է. Մարուքյան	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ստեփան Շահումյանի անվան թիվ 6 դպրոցը հիմնադրվել է 1978 թվականին, որից հետո 1992 թվականին ենթարկվել է արտաքին ամրացման: Այսպիսով, դպրոցի շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք, սակայն, քանի որ բյուջեի միջոցները սուղ են, ՀՀ Կառավարությանն առաջարկում եմ 2013 թվականին վերանորոգել դպրոցի տանիքն ու զուգարանները, որոնք գտնվում են անմխիթար վիճակում, քանի որ 1978 թվականից ի վեր, երբ հիմնադրվել է դպրոցը, այդ հատվածը չի նորոգվել: Նշված վերանորոգման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է մոտավորապես 40 մլն դրամ, որը հաշվարկվել է դպրոցի տնօրինության կողմից՝ հաշվի առնելով այսօրվա շինարարական շուկայում հայտնի գները: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում եմ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել «Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի տանիքի և զուգարանների հիմնանորոգում» ծախսային ծրագիրը՝ 40 մլն դրամի չափով:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
291.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	ՀՀ մարդու իրավունքների պաշտանի աշխատակազմը դիմել է ՀՀ կառավարությանը՝ խնդրելով 2013թ. պետական բյուջեով նախատեսել անհրաժեշտ ֆինանսավորում ԱԿՄ խմբի գործա-	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Է. Մարուքյան	<p>ռույթների պատշաճ իրականացման համար, սակայն ՀՀ ՄԻՊ գրասենյակի 2013 թվականի բյուջետային հայտն այս մասով չի բավարարվել:</p> <p>Տվյալ պարագայում նշված ծրագրի հաստատումը շատ կարևոր է նաև ՀՀ մարդու իրավունքների բնագավառում պարտավորությունների կատարման տեսանկյունից, քանի որ Եվրոպական դատարան են ուղարկվում փակ հաստատությունների հետ կապված բազմաթիվ գործեր, որոնց քանակը կարող է էապես նվազել, եթե ՄԻՊ գրասենյակը կարողանա պարբերական մշտադիտարկման ենթարկել փակ հաստատությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են խոշտանգումների կամ այլ դաժան կամ անմարդկային վերաբերմունքի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2013թ. ընթացքում ԱԿՄ-ի առնվազն 350 այցելությունների իրականացման համար անհրաժեշտ միջոցները.</p> <ul style="list-style-type: none"> • համապատասխան մարդկային և ֆինանսական միջոցներ, որոնք են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ստեղծված բաժնում 2 հաստիքի ավելացում (բժիշկ և սոցիալական աշխատող մասնագիտացումներով)՝ աշխատանքի վարձատրության մասով՝ 3.432.000 ՀՀ դրամ, • ներքին գործուղման ծախսեր՝ 1.963.000 ՀՀ դրամ • Մեքենաների և սարքավորումների պահպանում՝ 603.600 ՀՀ դրամ • Գրասենյակային նյութեր՝ 259.900 ՀՀ դրամ • Տրանսպորտային նյութեր՝ 976.300 ՀՀ դրամ • Վարչական սարքավորումներ՝ 2.060.000 ՀՀ դրամ (ԱԿՄ խմբի համար անհրաժեշտ սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում. համակարգիչներ 600.000 ՀՀ դրամ, մոնիտորներ 300.000 ՀՀ դրամ, օդորակիչներ 860.000 ՀՀ դրամ, տպիչ սարք 100.000 դրամ, ֆոտոխցիկ 100.000 դրամ, ջերմախոնավաչափ՝ 100.000 ՀՀ դրամ: 	բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>«Ներքին առևտրի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետական կառավարման մարմինների աշխատակազմերում անհրաժեշտ է ստեղծել ներքին առևտրի ստորաբաժանում՝ առնվազն 2 հաստիքային միավորից կազմված: Ելնելով օրենքով նախատեսված պարտավորությունից՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը առևտրի ստորաբաժանման ստեղծումը կատարել է անձնակազմի իրավաբանների հաստիքների հաշվին: Հետևաբար 2013թ. բյուջետային հայտում նշված 2 մասնագետի հաստիքն իրենից ներկայացնում է 2 իրավաբանի հաստիք՝ 2.522.500 ՀՀ դրամ: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը՝ առաջարկում եմ ավելացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը 11.817.300 ՀՀ դրամով՝ հոգալով ոլորտի հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ծախսերը:</p>	
292.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Է. Մարուքյան</p>	<p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ 11,241.7 մլն դրամ (ինչը կազմում է 2013թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի մոտավորապես 1%-ը), որից՝ 8106.9 մլն դրամ՝ բազային ֆինանսավորում, 1536.7 մլն դրամ՝ պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում, 1071.8 մլն դրամ՝ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում: Կառավարության նախատեսմամբ 2013 թվականի ՀՀ պետական բյուջեի եկամուտները ավելանալու են 13,2%-ով, այնինչ գիտության ոլորտի ֆինանսավորումը նախատեսվել է ավելացնել մոտավորապես 11%-ով: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար, պետությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում գիտության ծախսերի համար նախատեսվել է լրացուցիչ 276.5 մլն դրամ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտա- յին մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պա- կաս հատկացումներ: Այդ միջոցներն ուղղվում են բարձրորակ գիտական կադրերի պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ինչպես նաև գիտական կազմակերպություն- ների նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, նոր տեխ- նոլոգիաների մշակմանն ու սարքավորումների ձեռքբերմանը:</p> <p>Փաստորեն, 2013 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագիծը գիտության ֆինանսավորման մասով հակասում է գործող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին, քանի որ նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից պակաս չափով ֆինանսական հատկացումներ:</p> <p>Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում եմ ավելացնել գիտության ֆինանսավորումը՝ այն ամենաքիչը հասցնելով օրենքով սահմանված նվազագույնին՝ հոգալով այդ բնագավառի հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ծախսերը:</p>	
293.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Է. Մարուքյան	<p>Հայաստանի երիտասարդական հիմնադրամն, ըստ էության հանդիսանում է այն մարմինը, որի միջոցով մարզերում ֆինանսավորվում են երիտասարդական կենտրոնները: Կարևորելով նշված երիտասարդական նախաձեռնությունը հանրապետությունում, գտնում եմ, որ երիտասարդական կենտրոնների ֆինանսավորման և առկա 10 կենտրոնները ևս 10-ով ավելացնելու կարիք կա հետևյալ հիմնավորմամբ.</p> <p>Երիտասարդական կենտրոնները, ինչպես հայտնի է, ֆի- նանսավորվում են պետական բյուջեից և աջակցում այլ երի- տասարդական կառույցներին: Սակայն թերֆինանսավորման պատճառով հիմնադրամն իր հիմնական առաքելությունները դժվարանում է իրականացնել:</p>	<p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարու- թյանը «Երիտասարդական ծրագրեր»-ի շրջանակներում «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և մար- զային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում» և «Մարզային երիտասարդական կենտրոն- ներում միջոցառումների իրականացում» միջոցառում- ների իրականացման համար նախատեսված է 85.9 մլն դրամ (հավելված 1-ի , աղյուսակ 16): Ինչ վերաբերում է լրացուցիչ գումարի նախատեսմանը, ապա առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Երիտասարդական նախաձեռնությունների տեղերում խրախուսման, երիտասարդների զբաղվածության ավելացման, նրանց կողմից սեփական գործը հիմնելուն նպաստելու նպատակով՝ առաջարկում եմ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել «Պետական աջակցություն երիտասարդական ակումբների և կենտրոնների ստեղծմանն ու գործունեությանը» ծախսային ծրագիրը:</p> <p>Վերոնշյալ ծրագրի իրականացումը կնպաստի նաև ակտիվ քաղաքացիական դիրքորոշումների ձևավորմանն ու որոշումների կայացման գործընթացին երիտասարդների ակտիվ մասնակցությանը, և որ ամենակարևորն է արտագաղթի կրճատմանը:</p> <p>Այս մասով ֆինանսավորման ամենահամեստ հաշվարկներով անհրաժեշտ է մոտավորապես տարեկան 40 մլն ՀՀ դրամ: Այս գումարն իրականում կարելի է համարել շահավետ ներդրում, քանի որ խոսքը վերաբերում է մեր երկրի երիտասարդ սերնդին, որը կառուցելու է մեր ապագան:</p> <p>Նշված խնդիրը հատկապես վերաբերվում է հեռավոր մարզերին, որտեղ ֆինանսավորման առկայության դեպքում հնարավոր կլինի հիմնել մասնաճյուղեր և տեղական կենտրոններ:</p> <p>Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածը՝ առաջարկում եմ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել «Պետական աջակցություն երիտասարդական ակումբների և կենտրոնների ստեղծմանն ու գործունեությանը» ծախսային ծրագիրը՝ 40 մլն դրամի չափով:</p>	<p>բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:</p>
294.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Կարինե Աճեմյան Գարեգին Նուշիկյան	<p>«Կրթական հաստատությունների հիմնանորոգում և շինարարություն» հոդվածի գործողության շրջանակներում նախատեսել 55 (հիսունհինգ) մլն դրամ՝ Խաչատուր Աբովյանի անվան N2 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով:</p>	<p>ՀՀ կառավարության 27.09.2012թ-ի № 1231-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 դպրոցի ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման նպատակով հատկացվել</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>է 10.0 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p>
295.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Ֆարմանյան</p>	<p>Մայրաքաղաքի N 187 միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգման համար տրամադրել 25 մլն դրամ: Միջնակարգ դպրոցը գտնվում է մայրաքաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Զրվեժ թաղամասում: Դպրոցը կառուցման օրվանից հիմնանորոգում չի անցել, իսկ շենքային պայմանները գտնվում են անմխիթար վիճակում: Առաջարկվող գումարն անհրաժեշտ է ուղղել ամենաառաջնային խնդիրների լուծմանը՝ սանհանգուցի վերանորոգմանը և պատուհանները փոխելուն: Դպրոցի սանհանգուցը գտնվում է հակահիգիենիկ վիճակում, իսկ պատուհանները շարքից դուրս են եկել, ձմռան ամիսներին անհնար են դարձնում դասասենյակներում բավարար ջերմություն ապահովելուն ուղղված ջանքերը՝ խաթարելով ուսումնական բնականոն գործընթացը:</p>	<p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p>
296.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Ֆարմանյան</p>	<p>Մայրաքաղաքի N 142 ավագ դպրոցի մասնակի վերանորոգման համար տրամադրել 25 մլն դրամ: Դպրոցը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի 4-րդ գանգվածում և կառուցման օրվանից հիմնանորոգում չի անցել: Դպրոցի շենքային պայմաններն էապես անմխիթար են, իսկ նրանցից երկուսը՝ տանիքի և սանհանգուցի վերանորոգումը, շտապ միջամտություն պահանջող անհրաժեշտություն: Շենքի տանիքը կաթում է, սանհանգուցը հեռու է բավարար հիգիենիկ պայմանների ապահովումից:</p>	<p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾժ շրջանակներում:</p>
297.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սուքիաս Ավետիսյան</p>	<p>Ի նկատի ունենալով, որ այսօր Հայաստանում գործում է 16 ավիամոդելային սպորտաձևերի կենտրոններ, և Հայաստանի ավիացիոն մարզաձևերի ֆեդերացիան (ՀԱՄՖ) գործում է 1993թ.-ից և ներկայումս որևիցե ձևով ֆինանսավորում չի ստանում, առաջարկում եմ 2013թ. ՀՀ պետական բյուջեով 3 մլն դրամ նախատեսել ՀԱՄՖ-ի ֆինանսավորման համար:</p>	<p>Նմանատիպ ֆեդերացիաների քանակությունը Հայաստանում անցնում է 200-ի սահմանը, դրանց թվին կարող են դասվել նաև կարատեի տարբեր անվանումներով ֆեդերացիաները: Եթե ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարները հատկացվեն այդ մարզաձևերին, ապա յուրաքանչյուր ֆեդերացիային հատկացվող միջոցները կկազմեն 150.0-200.0 հազ. դրամ և այդ գումարները չեն կարող իրենց նպատակին ծառայել: ՀՀ պետական բյու-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ջեղից ֆինանսավորվում են այն մարզաձևերը, որոնք ավելի շատ մասսայականություն են վայելում հանրության շրջանում և Հայաստանը պատշաճ ձևով ներկայացնում են արտերկրում:</p>
298.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սուքիաս Ավետիսյան</p>	<p>Ի նկատի ունենալով, որ M1 – Հայրենյաց – Հայկասար – Տուֆաշեն – Հ 21 10 կմ երկարությամբ ճանապարհահատվածը գտնվում է անմխիթար վիճակում, առաջարկվում է 120 մլն դրամ՝ ճանապարհը ավագակոպչային տարբերակով երթևեկելի դարձնելու համար:</p>	<p>Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:</p>
299.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սեդրակ Սարոյան</p>	<p>Կրթական օբյեկտների հիմնանորոգման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսել.</p> <p>Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցին 440 մլն դրամ:</p> <p>Դպրոցը կառուցվել է 1950թ.-ին և մինչ օրս հիմնանորոգման չի ենթարկվել և գտնվում է երրորդ աստիճանի վթարային վիճակում:</p> <p>Գումարը հնարավորություն կտա հիմնովին իրականացնել՝</p> <ul style="list-style-type: none"> - մասնաշենքերի տանիքի վերանորոգումը, - հնամաշ դռների և պատուհանների նորով փոխարինումը, - սպորտ-դահլիճի վերանորոգումը, - ներքին հարդարման աշխատանքները, - գոյություն չունեցող ջեռուցման համակարգի, սանհանգույցի կառուցումն ու ջրամատակարարման կազմակերպումը, - վերականգնել արդեն շարքից դուրս եկած էլեկտրաէներգիայի ապահովման ներքին համակարգը: 	<p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾ շրջանակներում:</p>
300	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սեդրակ Սարոյան</p>	<p>Ջրապահովվածության բարձրացման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսել.</p> <ul style="list-style-type: none"> - Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի «Մուսալեռ» ՋՕԸ-ի սպասարկման տակ գտնվող Ոսկեհատ, 	<p>Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Արևաշատ, Մուսալեռ և ք. Վաղարշապատ համայնքների ջրապահովվածության բարձրացմանը: Նշված տարածքներում տասնամյակներ առաջ հորատվել է 46 հատ խորքային հորեր, որոնց մեծ մասը շահագործվում է շուրջ 40 տարի, նախատեսված 25 տարվա փոխարեն: Մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունները պարզվել է, որ վերանորոգման և վերազինման են ենթակա 35 հատ խորքային հորեր, որի համար պահանջվում է մոտ 63 մլն դրամ:</p> <p>Միաժամանակ անհրաժեշտ է կատարել էջմիածնի և Մուսալեռի միջտնտեսային ու ներտնտեսային հողային հունով ջրանցքների վերակառուցման աշխատանքներ, որի համար անհրաժեշտ գումարը կազմում է մոտ 218 մլն դրամ:</p> <p>Անհրաժեշտ մասնագիտական հաշվարկները կցվում է:</p>	<p>առաջնահերթություններից:</p>
301.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մ. Սարգսյան (067 ընտրատարածք) Ա. Հովհաննիսյան (076 ընտրատարածք)</p>	<p>ՀՀ 2013թ. պետական բյուջեում նախատեսել Երևան քաղաքի թիվ 110 միջնակարգ դպրոցի հիմնավերանորոգումը՝ 95,0 մլն դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:</p>
302.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան</p>	<p>Առողջապահություն. «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիրը իրականացնելիս համայնքային ենթակայության տակ գտնվող պոլիկլինիկաները հանել համայնքի ենթակայությունից:</p>	<p>Առաջարկը կարիք ունի լրացուցիչ պարզաբանման: Պարզ չէ, թե համայնքային ենթակայությունից հանելուց հետո ում պետք է փոխանցվեն պոլիկլինիկաների կառավարման գործառնությունները: Բացակայում է առաջարկության անհրաժեշտության և նպատակահարմարության հիմնավորումը, ակնկալվող արդյունքը:</p>
303.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան</p>	<p>«Հիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով պետական պատվերը իրականացնելիս ամբողջությամբ անցնել սերտիֆիկատային համակարգին, երբ հիվանդանոցային ծառայություն պետական պատվերով ստացող քաղաքացին ինքն է որոշում, թե որ հիվանդանոցում պետք է ստանա այդ ծառայությունը:</p>	<p>Ի լրացումն երեխաների բուժօգնության և ծննդօգնության ծրագրերի, որտեղ արդեն իսկ գործում է հավաստագրի մեխանիզմը, ներկայումս քննարկվում է սոցանապահով առանձին խմբերին նույնպես հավաստագիր տրամադրելու հնարավորության հարցը: Ամբողջ բնակչությանը հավաստագիր տրամադրելը համարում ենք աննպատակահարմար և տեխնիկապես անիրագործելի: Ինչ վերաբերում է հիվանդանոցի ընտրության՝ քաղաքացու իրավուն-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			քին, ապա համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, ա/ մասի, քաղաքացին ազատ է ինքնուրույն ընտրել բժշկական հաստատությունը՝ տվյալ ծառայության գծով պետպատվեր կատարող բուժօգնության կենտրոնների ցանկից:
304.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	«Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր» խմբում ավելացնել «45 տարեկանից բարձր կանանց արհեստական բեղմնավորման պետ. պատվեր» ծրագիրը:	Առաջարկությունը չի ընդունվել: Կանանց արհեստական բեղմնավորումը հանդիսանում է վերարտադրողականության օժանդակության տեխնոլոգիաների շրջանում կիրառվող մեթոդ, որը որպես բժշկական ծառայության տեսակ ընդհանրապես ընդգրկված չէ ՀՀ առողջապահության նախարարության պետական նպատակային ծրագրի մեջ՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայությունների ցանկում ընդգրկված լինելու պատճառով: Միաժամանակ վերարտադրողականության տվյալ մեթոդի կիրառման արդյունավետությունը զարգացած երկրներում չի գերազանցում 30-40%, իսկ 45-ից բարձր կանանց համար այն շատ ավելի ցածր է: Բացի այդ, այդ մեթոդի կիրառումը կպահանջի լրացուցիչ ֆինանսական մեծ ներդրումներ, որոնց արդյունավետության գործակիցը շատ ցածր կլինի:
305.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Սոցիալական պաշտպանության ոլորտում. «Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբում ավելացնել «Միայնակ մայրերի մինչև 4 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագիրը:	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ-ում սոցիալական աջակցության տրամադրման և կազմակերպման սկզբունքներից է հասցեականությունը, ինչը նշանակում է սոցիալական աջակցության, այդ թվում նպաստի՝ ըստ կարիքի, տրամադրում: Այդ նպատակով ՀՀ-ում ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որի նպատակը ընտանիքի գնահատված սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրումն է: Առաջարկությունը սոցիալական աջակցության՝ նպաստի, տրամադրումն է ըստ սոցիալական խմբի այլ ոչ կարիքի:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
306	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	«Ընտանիքի անդամներ և զավակներ», «Գործազրկություն» խմբերում տրամադրել նոր տեսակի նպաստներ «հայրենական արտադրության հագուստի» սերտիֆիկատներով, որոնք կարող են իրացվել բացառապես հայրենական թեթև արդյունաբերության ֆիրմային խանութներում:	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>ՀՀ-ում սոցիալական աջակցության տրամադրման և կազմակերպման սկզբունքներից է հասցեականությունը, ինչը նշանակում է սոցիալական աջակցության, այդ թվում նպաստի՝ ըստ կարիքի, տրամադրում: Այդ նպատակով ՀՀ-ում ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որի նպատակը ընտանիքի գնահատված սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրումն է: Առաջարկությունը սոցիալական աջակցության՝ նպաստի, տրամադրումն է ըստ սոցիալական խմբի (գործազուրկին) այլ ոչ կարիքի:</p> <p>Ջբաղվածության քաղաքականության ռազմավարական բարեփոխումների շրջանակներում աշխատանքի արժևորման և գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանման, ինչպես նաև պետական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացման նպատակով՝ վերափնտրված անհրաժեշտություն ունեն աշխատաշուկայի պետական կարգավորման ծրագրերն ու ծառայությունները, որոնց հիմքում պետք է դրվի «աջակցել և պահանջել» հիմնական սկզբունքը:</p> <p>Այս իմաստով, էապես կարևորվում է գործազրկության նպաստի տրամադրումը, որի վերափնտրվածության հիմքում պետք է դրվեն ակտիվ աշխատանք փնտրելու գործընթացների և կայուն զբաղվածության խթանումը, իսկ մյուս կողմից՝ աշխատանքի պետական կարգավորման ծրագրերի շահառուների արդյունավետ հարաբերակցության ամբողջական ապահովումը:</p>
307	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Ջրային տնտեսություն ոլորտում նախատեսել «Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում» ծրագիրը:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
308	«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Քաղաքաշինություն ոլորտում. «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակ0-ներում նախատեսել Սպիտակ քաղաքի նախկին սեփական սեկտորի անօթևան մնացած բնակիչների համար (650 ընտանիք) բնակարանների կառուցում:	Առաջարկությունը չի ընդունվել: «Կառավարության նախարարության տրամադրության տակ գտնվող տեղեկատվության համաձայն աղետի գոտու քաղաքային բնակավայրերում երկրաշարժի հետևանքով սեփական բնակելի տուն կորցրած ընտանիքների թիվը կազմում է շուրջ 1054 (ք.Սպիտակ՝ 568, ք.Ստեփանավան՝ 330, ք.Վանաձոր՝ 56 և ք.Գյումրի՝ 100): Խնդրի լուծմանը նախատեսվում է անդրադառնալ աղետի գոտու բնակավայրերում ներկայումս իրականացման փուլում գտնվող բնակարանային շինարարության ծրագրի ավարտից հետո:
309	«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	«Կրթական հաստատությունների հիմնանորոգում և շինարարություն» խմբում նախատեսել Արագածոտնի մարզի Ագարակ գյուղում մանկապարտեզի կառուցում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով «Կ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
310.	«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Մշակել և նախատեսել նոր ծրագիր՝ «Սիրիայից և Մերձավոր արևելքի այլ երկրներից տեղափոխված հայերի համար բնակավայրի կառուցում»:	Սիրիայից և Մերձավոր արևելքի այլ երկրներից տեղափոխված հայերի բնակարանային ապահովման հարցն արդիական է, սակայն այն համակողմանի քննարկման անհրաժեշտություն ունի: Անհրաժեշտության դեպքում սիրիահայերի աջակցության ծրագիրը կֆինանսավորվի «Կ կառավարության պահուստային ֆոնդից:
311.	«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Հատկացումներ համայնքների բյուջեների ոլորտում. Երևանի ծրագրերի իրականացմանը ուղղված սուբվենցիաներում նախատեսել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Խարբերդի ամառանոցներ թաղամասի բարեկարգման ծրագիրը, որը կնախատեսի նոր ճանապարհի կառուցում թաղամասը վարչական շրջանին անմիջապես միացնելու համար, մայթերի կառուցում, ասֆալտապատում, արտաքին լուսավորություն:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով «Կ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
312.	«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Թալինի Կաթնաղբյուր գյուղում նախատեսել կենտրոնական փողոցի ասֆալտապատում:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով «Կ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			առաջնահերթություններից:
313.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բարութանյան	Դադարեցնել հետևյալ ծրագրի իրականացումը. «2011թ. մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում»՝ 39092.9 հազ. դր. (հավելված N 1, աղյուսակ N 01-03-02):	<p>Առաջարկությունը չի ընդունվել: «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, մարդահամարի աշխատանքների ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման բոլոր միջոցառումների կատարումն ապահովող ծախսերի նախահաշվի հիման վրա: ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի N 301-Ն որոշմամբ ստեղծված ՀՀ-ում 2011 թվականին ացկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի որոշմամբ (հանձնաժողովի 2009թ. մայիսի 20-ի առաջին նիստի թիվ (1)26-200 արձանագրություն), հավանություն է տրվել 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի 2009-2013թթ. նախահաշվին:</p> <p>2013 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> - մարդահամարի ծրագրով նախատեսված և սահմանված էլքային աղյուսակների տեխնիկական առաջադրանքների նախապատրաստում և ստացում, -- մարդահամարի հրապարակումների պատրաստում (թղթային և էլեկտրոնային) և հրապարակում, -- մարդահամարի արդյունքներով տնային տնտեսությունների հասցեների բազայի ձևավորման համար աշխատանքների կազմակերպում: <p>Այդ կապակցությամբ ծրագրի անվանումը ճշգրտվել է՝ «2011թ. մարդահամարի աշխատանքների կազմակերպում, անցկացում և ամփոփում»</p>
314.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բարութանյան	Դադարեցնել հետևյալ ծրագրի իրականացումը. «Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի ապահովում»՝ 9,600.0 հազ. դր.(հավելված N 1,	Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական Երեւանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնը ստեղծվել և գործում է Հյուսիսատլանտյան Դաշինի քի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		աղյուսակ N 02-03-01):	Պայմանագրի Կազմակերպության հետ ՀՀ համագործակցության շրջանակներում: Այն համատեղ ֆինանսավորվող կառույց է. Հայկական կողմը տրամադրում է անհրաժեշտ տարածք, իսկ ՆԱՏՕ-ն ապահովում է գործառնական ծախսերը (աշխատակիցների աշխատավարձ, գրասենյակային սարքավորումներ, միջոցառումների անցկացում): ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների և փոխգործակցության ընդլայնման, կապերի ամրապնդման լույսի ներքո, կենտրոնի տարածքի վարձակալման վարձավճարի դադարեցումը այս պահին որևէ կերպ հիմնավորված չէ և կունենա քաղաքական բացասական ընկալում:
315.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հայկ Բարութսանյան	Դադարեցնել հետևյալ ծրագրի իրականացումը. «ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում»՝ 50,000.0 հազ. դր. (հավելված N 1, աղյուսակ N 01-01-02):	Առաջարկությունը համարում ենք ոչ նպատակահարմար և հայտնում ենք, որ «ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում» ծրագրի իրագործումը կրում է շարունակական բնույթ և միտված է կատարելու «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները (Պետական պարտքի կառավարումն իրականացվում է թափանցիկության, հաշվետվողականության, կանխատեսելիության և հրապարակայնության սկզբունքներով), իրականացնելու ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրերով նախատեսված ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակադրումները, պետական պարտքի ու Գանձապետական պահառուի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պետական պարտատոմսերի շուկայի մասնակիցներին և պոտենցիալ ներդրողներին, պահպանելու և զարգացնելու ներքին պետական պարտքի շուկան: «ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում» ծրագրի շրջանակներում հեռուստատեսությամբ և ռադիոյով հրապարակվում է տեղեկատվություն, եթեր է հեռարձակվում «ՀՀ պետական պարտքը և պետական բյուջեի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	«Կառավարության դիրքորոշումը
			<p>ցուցանիշները» հաղորդաշարը, որտեղ 2000 թվականից ի վեր պարբերաբար ներկայացվում են նաև պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարբեր ժամանակահատվածների հաշվետվություններ, ինչպես նաև տպագրվում է «Կառավարության պարտքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունները: Այս ծրագրի իրականացման արդյունավետության մասին է վկայում այն, որ տարիների ընթացքում պետական պարտքի կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների հետ մեկտեղ ծրագիրը նպաստել է պետական պարտատոմսերով գործարքների և ներդրումների ծավալի ավելացմանը, միջին ժամկետայնության աճին և ընդհանուր առմամբ պետական պարտատոմսերի շուկայի կայացմանը, այդ շուկայում կայունության հաստատմանն ու պահպանմանը:</p>
316.	<p>«Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան»</p>	<p>Եկամուտների գծով. Ավելացնել 10 տոկոսով հանքարդյունաբերությունից ստացվող հարկային մուտքերը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվում: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով (ուժի մեջ է մտել 2012թ. հունվարի 1-ից) մետաղական օգտակար հանածոների համար վճարվող բնօգտագործման վճարների և ռոյալթիների փոխարեն սահմանվել է ռոյալթի: Միաժամանակ, օրենսդրական փոփոխությունների անցումային դրույթների համաձայն, ռոյալթի վճարողները նախքան 2012թ. համար հաշվարկված ռոյալթիների վճարումը, 2012թ. յուրաքանչյուր եռամսյակի համար կատարում են ռոյալթի կանխավճարային վճարումներ՝ 2011թ. ընթացքում մետաղական օգտակար հանածոների համար հաշվարկված բնօգտագործման վճարների և ռոյալթիների հանրագումարի մեկ երրորդի չափով: Հարկ ենք համարում նշել, որ կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն, 2012թ. հունվարի 1-ից ռոյալթի վճարողներ են համարվում ոչ միայն ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործողները, այլև մետաղի խտանյութ արտադրողները, որոնք մինչ այդ չեն հանդիսացել ոչ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>բնօգտագործման վճար և ոչ էլ ռոյալթի վճարողներ: Հաշվի առնելով, որ նշված օրենսդրական փոփոխությունը 2012թ. ընթացքում վճարման ենթակա ռոյալթիների կանխավճարների վրա որևէ ազդեցություն չունի, և ռոյալթիների հաշվարկման նոր մոտեցումը կկիրառվի 2012թ. արդյունքներով 2013թ. ընթացքում, ռոյալթիների հաշվարկման նոր համակարգի արդյունավետության և պետական բյուջեի եկամուտների վրա դրա ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել 2012թ. հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնելուց և ամփոփելուց հետո միայն:</p>
317.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան</p>	<p>Եկամուտների գծով. Կրկնապատկել Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագրի համար տրվող վճարի չափը</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվում: Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր տալու համար “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքով սահմանված են՝ մինչև 120 օր ժամկետով գտնվելու համար՝ 15000, մինչև 21 օր ժամկետով գտնվելու համար՝ 3000 դրամի չափով պետական տուրքեր: Հայաստանի Հանրապետություն այցելության բազմակի մուտքի արտոնագիր տալու համար՝ մինչև 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև մեկ տարի վավերականության ժամկետով՝ 40000, մինչև 60 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչև 6 ամիս վավերականության ժամկետով 20000 դրամի չափով պետական տուրքեր: Ներկայացված առաջարկության ընդունումը օտարերկրյա այցելուների համար կստեղծի լրացուցիչ ծախսեր, ինչը, կարծում ենք, կսահմանափակի նրանց Հայաստանի Հանրապետություն այցելելու ցանկությունը:</p>
318.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան</p>	<p>Սոցիալական պաշտպանության ոլորտում. «Ընտանիքի անդամներ եւ զավակներ», «Գործազրկություն» խմբերում տրամադրել նոր տեսակի նպաստներ «Նպաստ</p>	<p>Վարձատրվող հասարակական աշխատանքներն իրականացվել են ՀՀ Կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի թիվ 1854-Ն որոշման համաձայն՝ զբաղվածության</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հասարակական աշխատանքների դիմաց:	պետական ծրագրի շրջանակներում: «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում» ծրագրի իրականացման բազմակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ծրագրի արդյունավետությունը գնահատվել է ոչ բավարար, ինչպես նաև նկատի ունենալով զբաղվածության ոլորտի ռազմավարական բարեփոխումների շրջանակներում զբաղվածության պետական ծրագրերի ամբողջական վերաիմաստավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ ծրագիրը 2010 թվականի մայիսի 1-ից դադարեցվել է:
319.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյան	Նվազեցնել 15 մլն դրամով ՀՀ կենտրոնական բանկի վարչական ծախսերը և 120 մլն դրամով ՀՀ կենտրոնական բանկի կապիտալ ներդրումների ու հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիրը:	Ծախսերի 15 մլն դրամով կրճատման առաջարկի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ ԿԲ-ը, հաշվի առնելով երկրի տնտեսական վիճակը, վերջին տարիներին խուսափել է ծախսերի ավելացումից: 2013 թվականի համար նույնպես ծախսերի ավելացում չի նախատեսվել՝ որոշ հողավածներ ավելացվել են մյուսների խնայողության հաշվին, և չնայած «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի գ ենթակետի պահանջին, սահմանվել է բանկային համակարգի միջինից շատ ավելի ցածր աշխատավարձ: ԿԲ-ի նախատեսած կապիտալ ներդրումների ծրագրի կրճատման հարցադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկի կապիտալ ներդրումները խթանում են Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումը: Կապիտալ ներդրումների կրճատումից գոյացած միջոցները չեն կարող ուղղվել այլ ծախսերի ֆինանսավորմանը, քանի որ կապիտալ ներդրումները իրականացվում են էմիսիայի հաշվին եվ հետևաբար դրանց կրճատումից չի կարող որևէ եկամուտ գոյանալ: Նշենք նաև, որ Կապիտալ ներդրումների կրճատումը նշանակում է կիսատ թողնել կամ մերժել ԿԲ-ի արդեն իսկ գործարկված նախագծերը:
320.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում նախատեսել լրացուցիչ 8.9 մլն դրամ «Անօթևան երեխաների համար ժամանակավոր	Առաջարկությունը ընդունվել է: ՀՀ 2013 թվականի պե-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	օթևանի տրամադրման ծառայություններ» («Ձատիկ» մանկատուն) ծրագրի համար:	տական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է լրացուցիչ 8.9 մլն դրամ:
321.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից ս.թ. նոյեմբերին «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետում կատարված փոփոխությունը (եկամտային հարկով հարկվող եկամուտներից՝ պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրանց հավասարեցված վճարումները նվազեցնելու վերաբերյալ) ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կատարել համապատասխան վերահաշվարկ:	Առաջարկությունը ընդունվել է: Առաջարկությանը համապատասխան կատարված վերահաշվարկի արդյունքները արտացոլված են ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում:
322.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 25 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքում 1 հատ խորքային հոր կառուցելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
323.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 180.0 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում 6000գ/մ LP 6 վաքերի համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
324.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 25 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքում 1 հատ խորքային հոր կառուցելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
325.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 100 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Աստղածոր համայնքում 4000գ/մ վաքեր LP 4-ի համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
326.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 50 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում 2000գ/մ վաքեր LP 4-ի համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	(024 ընտրատարածք)		բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
327.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 15 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքում 400գ/մ վաքեր LP 6-ի համար:	Առաջարկությունը չի ընդունվել, ելնելով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթություններից:
328.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 60 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման համար:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
329.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 60 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման համար:	Աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում:
330.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 100 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր-Երևան-Վարդենիս մայրուղուց դեպի համայնք 1,5 կմ միջհամայնքային ճանապարհի վերանորոգման համար:	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կնե-րառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյու-նավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճա-նապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾԾ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
331.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (024 ընտրատարածք)	ՀՀ 2013 թ. պետական բյուջեում նախատեսել 600 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Ծովակ-Լճավան-Երևան-Վարդենիս մայրուղուց դեպի Մաքենիս-Ախպրածոր համայնքներ տանող 12 կմ միջհամայնքային ճանապարհի վերանորոգման համար:	Նշված ճանապարհահատվածի վերականգնումը կներառվի «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ուսումնասիրվող ճանապարհների ցանկում: Ուսումնասիրության արդյունքում տնտեսական արդյունավետության պահանջի բավարարման դեպքում այն կներառվի առաջնահերթ վերանորոգման ենթակա ճանապարհների ցանկում՝ ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում կամ որևէ վարկային ծրագրում ընդգրկելու հնարավորությունը քննարկելու նպատակով:
332.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան (041 ընտրատարածք)	ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի հիմնանորոգման նպատակով:	ՀՀ կառավարության 04.10.2012թ-ի № 1392-Ն որոշմամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Դիլիջանի թիվ 2 դպրոցի վերանորոգման նպատակով հատկացվել է 30.0 մլն դրամ: Լրացուցիչ աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի ընթացիկ տարվա (2013 թվականի) գործող վարկային և այլ միջոցների հաշվին, ինչպես նաև ՀՀ 2014-2016 թվականների ՄԺԾՇ շրջանակներում:
